



ՀԱԿԻՆ

Pakine

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԱՐՈՒԷՍ
ԻՄԱՑԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՐ



Վարիչ խմբագիր՝
Յակոբ Պալեան

Խմբագրի օգնական՝
Արփի Համբարեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Անուշ Թրուանց (Լիբանան)
Սարգիս Կիրակոսեան (Լիբանան)
Մովսէս Հերկելեան (Լիբանան)
Հրանդ Մարգարեան (Միացեալ Նահանգներ)
Արքմենիկ Նիկողոսեան (Հայաստան)
Յարութիւն Պէրպէրեան (Գանատա)
Յակոբ Տէր Ղուկասեան (Լիբանան)
Զաքար Քէշիշեան (Լիբանան)

Էջադրում՝
Զարեհ Զէօրէքճեան


Հասցէ՝
Պուրժ Համուտ,
«Շաղգոյեան» կեդրոն
Բ. յարկ
e-mail :
pakin@hamazkayin.com
Հեռ. 00961-1-241072

Տպագրութիւն՝
Համազգայինի «Վաիէ
Սէթեան» տպարանի

Ցրուումի կեդրոն՝
Համազգայինի
Գրատարած,
Շաղգոյեան կեդրոն,
Պուրժ Համուտ
Հեռաձայն՝
(01)241263/4
Ֆաքս՝
(01)260329
Փոստարկղ՝
80-1096 Պ. Համուտ
E-mail :
imphamaz@inco.com.lb



Հրատարակութիւն
Համազգայինի
Կեդրոնական Վարչութեան



ԲԱԳԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2008
ԽՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 3

- ԳԻՐԵՐՈՒ ԳԻՏԵՆ ՏԱՍՆՎԵՅ ԴԱՐ ԵՏՔ՝ ՆՈՐ ՍՊԱՌՆԱԼԻՔ
ԵՒ ՆՈՐ ՍԱՐՏԱՀՐԱԷՐ - **1**
- «ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ՝ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹԵԱՄԲ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵԿԱԿԱՐՆԵՐԻ Դ. ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՆԱԶԵՒ - **3**
- ԿԵՍԼԱՊԱՇՏ, ՅԱՆԴՈՒԳՆ ԵՒ ԻՐԱՒՈՒԹԻՒՆ ԿՐՈՂ ԱԼԵՔՍԱՆԴՐ
ՍՈԼԺԵՆԻՑԻՆ - **3. ՊԱԼԵԱՆ - 5**
- ԿՈՒԼԱԿԻ ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍԸ (ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԲՆԱԶՆՋՈՒՄԸ
ԿՐԵՏՐԵՆ ՆՈՅՆԵՐԸ ԵՒ ԿԸ ՎԵՐՍԿՍԻՆ - **ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈԼԺԵՆԻՑԻՆ - 8**
- ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ - **ԿԱՄՕ ԳԵԱՆՋԵԱՆ - 10**
- ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ - **ՏԱՂ ՆԱՅԻՐԻ - 13**
- ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ - **ՅԱԿՈԲ ԼԱՏՈՅԵԱՆ - 16**
- ԱՊԱԳԱՅԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ - **ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ - 18**
- ԵՐԿՈՒ ԿԻՆԵՐ - **ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ - 23**
- ՈԳԻՆ - **ԿՈԼԻԱ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ - 28**
- ՅԱՄԵՑՈՂ ԳԱՐՈՒՆԸ - **ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ - 35**
- ԱՌԱՋԻՆ ՕՐԸ - **ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԵՒՈՐԵԱՆ - 39**
- **ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍ - 45**
- ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԻ «ԳՈՎՔ ԾԵՐՈՒԹԵԱՆ» ԳԻՐՔԵՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
- **ՀԱՅԱՑՈՒՄ՝ 3. Պ. - 46**
- ԽՆԴՐԱՅԱՐՈՅՑ ԲԱՆԱՍՏԵՂՈՒՅԻՆ ՀԵՏ - **3. Պ. - 51**
- ԻՄՄԱՆՈՒԷԼ ԿԱՆՏԻ «ՋՈՒՏ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ» - **ԱՅՎԱԶ ԳՐԻԳՈՐԵԱՆ - 55**
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ՝ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՕՆԻ
ԴԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՌԱՋԻՆ
ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ - **ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՏԻԿԵԱՆ - 55**
- ՀԱՆՔԱՅԻՆ ՔԱՐԵՐՈՎ ԳՈՅՆ ՈՒ ԼՈՅՍ ԲԵՐՈՂ ԲԱԶՄԱՇՆՈՐՀ
ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՈՒՅԻ ԼԵՆԱ ՔԵԼԵՔԵԱՆ - **ԲԱԳԻՆ - 73**
- ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ - **79**

ԳԻՐԵՐՈՒ ԳԻՒՏԷՆ ՏՎԱՆՎԵՑ ԴԱՐ ԵՏՔ՝ ՆՈՐ ՄՊԱՌՆԱԼԻՔ ԵՒ ՆՈՐ ՄԱՐՏԱՅՐԱՒԷՐ

Մեսրոպի հրաշքէն տասնըվեց դար ետք, ազգովին կանգնած ենք Ե դարուն մեզի սպառնացած նոյնատեսակ վտանգի դէմ՝ որուն հարկ է գիտակցիլ: Հայեղէն տառերու գործածութիւնը ենթակայ է նախադարձական: Անտարքերութեամբ, ձգձգումով, կրաւորականութեամբ, անհեռատեսութեամբ, օտարամոլութեամբ, թեթեւամտութեամբ եւ անմիջականութիւններ առարկելով վտանգը կարելի չէ հեռացնել:

Եթէ օտարունը եւ օտարացունը չեն գործած իրենց վերջնական ու անդառնալի չարիքը, ամէն գոյնի ղեկավարութիւններ եւ ընդհանրապէս հայ մարդիկ, մեծեր եւ համեստներ, հարց պէտք է տան թէ ինչո՞ւ ազգի կրօնապետը, քաղաքական առաջնորդը եւ մտաւորականը միաժամանակ, պատմութեան հանգուցային մէկ պահուն, ըմբռնեցին կացութիւնը եւ միասնաբար գործեցին: Այս **միաժամանակը** եւ **միասնաբարը** կը բացատրուին ազգային գաղափարախօսութեան խոր գիտակցութեամբ՝ որ կը վերաբերի **ինքնութեան**, ազգի տոկալու եւ տեւելու կամքի, որ խնդիր էր տասնըվեց դար առաջ, նոյնքան հրատապ խնդիր է այսօր: Պատմաբան Լենդրուշ Խուրշուտեան կը խօսի վերկուսակցական եւ վերդասակարգային բնորոշումով: Այսօր հարկ է աւելցնել վերտեղական, վերտեղայնական եւ վերջոյնական, ամենուրեք ուր հայ կայ:

Հրատապ խնդիր, քանի որ լատինատառ հայերէն ստեղծելու եւ պարտադրելու զանազան փորձերու ձախողութենէն ետք, այսօր, ինքնաբերաբար, ազատ եւ միաժամանակ անգիտակից կամքով, ընդգրկած ենք այդ լուծումը: Համակարգիչը եւ համացանցը փոխանակ ազգային իմաստութեամբ օգտագործելու, դարձուցած ենք համաշխարհայնացման բացասականութեան գործիք, որ կը դրսեւորուի ամերիկայնացումով:

Հայաստանի Հանրապետութեան Մշակոյթի նախարարութիւն, Լեզուի Պետական Տեսչութիւն, Գրողներու Միութիւն, Ազգային Ակադեմիա, կաթողիկոսութիւններ եւ պատրիարքութիւններ, ազգային կուսակցութիւններ, մշակութային միութիւններ, կրնա՞ն ձեռնածալ նստիլ եւ դիտել թէ ինչպէ՞ս հայերէն տառերը իրենց տեղը կու տան լատինական տառերու, մեր տեւելու անգուգական միջոց հանդիսացած հայերէն նշանագրերը լքելու:

Հայաստանի Հանրապետութիւնը համակարգչային ծրագիր մը պատրաստած է անցագրերու համար, եւ կը փոխէ հայերէն ազգանուններու լատինական տառերով գրուող ցարդ ընդունուած ուղղագրութիւնը. Hagopian-ը կը գրուի Hagopyan, այնպէս ինչպէս կը գրեն թուրքերը: Ամբողջ աշխարհի ծանօթ էր ian-ը, մեր անցագրերուն վրայ այդպէս կը գրուէին մեր ազգանունները, այդպէս կը ճանչցուէինք, կ'ընդունուէինք: Հիմա ի՞նչ պիտի ըլլայ: Ամերիկահայը որ հայաստանեան անցագիր պիտի ստանայ, անգամ մը պիտի կոչուի Vartanian, ուրիշ անգամ՝ Vartanyan: Ի՞նչ կը փնտռուի: 1922-ի **դեկրետը** ձեւազեղծած էր հայերէն բառերու տեսքը, եւ կարծէք հիմա նոյն ոգիով, այս անգամ աշխարհի աչքին, կը ձեւազեղծուի ազգանուններու տեսքը:

Համակարգիչները ուղղագրութեան սրբագրութեան ծրագիրներ ունին բազմաթիւ լեզուներու համար: Վերոյիշեալ կազմակերպութիւնները ինչո՞ւ չեն նախաձեռներ, ստեղծելով հասարակաց Հիմնադրամ մը, համակարգչային ծրագիրներու մակարդակով անհրաժեշտը ընելու, որպէսզի աղետը կանխուի, ազգէն հեռացուի: Երբ լատինատառ հայերէնով հաղորդակցութիւնը սովորութիւն դառնայ, ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ վերադարձը, մանաւանդ որ հայերէնի դասական եւ արդի կոչուած ուղղագրու-

թիւներու տագնապը չենք յաջողիր եւ չենք ուզեր լուծել: Լատինատառ հայերէնի ընդհանրացումով ուղղագրութիւններու հարցը ժամանակավրէպ կը դառնայ, իր անձնատուական լուծման կը յանգի, երկուքին համար ալ:

Համազգային վերաբերումի բացակայութեան, լատինատառ հայերէն գրելու ճամբան հարթողներ կան: Ֆրանսայի մէջ մշակուած է ծրագիր մը, որ թոյլ կու տայ լատինատառ հայերէն գրել եւ ապա այդ վերածել հայատառ հայերէնի: Անտիրութիւն է: Ո՞վ ինչ կ'ուզէ կը փորձէ եւ կ'ընէ, այն աստիճան որ կայ մարդ որ գրքոյկ կը հրատարակէ բացատրելու եւ սորվեցնելու համար լատինատառ հայերէն գրելու կանոնները: Յանուն ո՞ր ազգաշէն գաղափարի: Պէտք է պատրաստուիլ համակարգիչներու մէջ գետեղելու Չարենց եւ Վարուժան, հայատառ, եւ ընթերցողը, եթէ մնայ, այդ հայատառ գրականութիւնը կը վերածէ լատինատառի: Ո՞վ կամ որոնք կը կարծէ որ լատինատառ հայերէնով գրականութիւն եւ թերթ պիտի կարդան, եւ որքան ատեն: Թէեւ, առաջարկողներ կան որ մեր գրական եւ մշակութային հարստութիւնը համացանցի վրայ տեղադրուի: Հաճելի է լսել: Բայց հայատա՞ն թէ լատինատառ:

Յիշեցնենք նաեւ դեռ տեսող անհեթեթ կացութիւն մը. համակարգիչով հայերէն գրելու բազմաթիւ ծրագիրներ կան, եւ կը պատահի որ ստացուած մամակը կամ յօդուածը կարելի չ'ըլլար **բանալ** եւ կարդալ: Ի՞նչ կը բանին պետութիւնը եւ զանազան բնոյթի ղեկավարութիւնները:

Համակարգիչը անսահման կարելիութիւններ կ'ընծայէ: Միթէ՞ այդ յստակ պարագաները քննելու, ներդաշնակութիւն ստեղծելու անատա՞կ ենք, մանաւանդ որ այս խնդիրները քաղաքական կամ մրցակցական բնոյթ չունին: Ուստի ներդաշնակումը կախում ունի ազգային հեռանկարէ եւ բարի կամքէ:

Մեսրոպի հրաշքը, որ մեզ պահեց տասնվեց դարեր, կրնայ փոշիանալ, արձանագրուիլ որպէս հնագիտութեան առարկայ, եթէ համակարգիչը չկանչուի անոր ծառայութեան: Մասնագէտներ կան: Նախաձեռնութիւն, ներդրում եւ ազգային գաղափարախօսութենէ ներշնչուող կամք անհրաժեշտ են՝ հեռացնելու համար վտանգը: Ով որ, անոնք որ այս աշխատանքը ի կատար կ'ածեն, այսինքն կ'այժմէականացնեն Մեսրոպի գործը, կը հանդիսանան Մեծ Սուրբին շարունակողը: Ապա թէ ոչ Սիամանթոյի հնչեղ խօսքը, դարերու դիմաց կանգնող աղամանդեայ ապառաժը կը դառնայ սնամէջ եղէգ, թիթեղ:

Ինչ որ Սասանեան կայսրութիւնը, Բիւզանդիոնը, օսմանցին եւ ցարը չյաջողեցան ընել, այսօր մենք կ'ընենք, ամէն օր քիչ մը աւելի կրծելով մեր ինքնութիւնը եւ ինքնությունը:

Հինգերորդ դարուն կաթողիկոս մը, թագաւոր մը եւ մտաւորական մը ազգային հեռանկարով առաջնորդուեցան եւ ըրին այնպէս որ մնանք պատմութեան բեմին վրայ: Այսօր չունի՞նք իրատես քաղաքական գործիչներ, հեռատես կրօնական առաջնորդներ, կացութեան գիտակցող մտաւորականներ եւ գիտնականներ, մեր ժամանակներու սպառնալիքին դէմ ցցուելու... որպէսզի կորստեան խափանումը իրականացնող մեր հրաշքը տեղի ունենայ:

Ի դէպ, Սահակի, Վռամշապուհի եւ Մեսրոպի հոգեւոր ժառանգորդները ի սպառ շիջա՞ծ են:

Իսկ մենք մեր թելերը սօթտելով, գրական հրատարակութիւնները, թերթերը, գիրքերը, լատինատառ հայերէնով պիտի խմբագրենք եւ դենք համացանցի վրայ: Պիտի չզարմանանք եթէ նման պահանջ ներկայացնողներ ըլլան: Եւ պիտի ճառենք մշակութային ինքնուրոյնութենէ:

Յանուն գործնապաշտութեան եւ յառաջդիմութեան՝ կրնաք ուրախանալ: Կրնա՞նք...

1800ամեակ կը հասնի՞նք հայատառ հայերէնով...

Բագին

«ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ՝ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹԵԱՄԲ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ Դ. ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՆԱՁԵՒ

«ՄԵկ ազգ՝ մԵկ մշակոյթ» համահայկական փառատօնի շրջանակներում, համահայկական լրատվամիջոցների ղեկավարների Դ. համաժողովը, 2008 թուականի Սեպտեմբերի 17-22-ը քննարկելով հայ ազգային մամուլի հիմնարար խնդիրներն աշխարհաքաղաքական նոր մարտահրավերների համատեքստում, առաջնային է համարում հայոց պետականության հետագայ ամրապնդման եւ զարգացման համար համահայկական ազգային գաղափարախօսության պարզաբանումն ու քարոզչությունը, երրորդ հազարամեակում հայ ազգային քաղաքակրթության ձեւի, աշխարհում նրա տեղի եւ դերի նշանակության կարեւորումը:

Ժամանակակից համաշխարհայնացման անկանխատեսելի ու փոքր ազգերի համար վտանգաւոր կտրուկ շրջադարձերի յորձանուտում, մեր ազգային ինքնության դրսեւորումը եւ ազգային արժեքների համաշխարհային նոր որակների վերածելու համար հայապահպանման գերխնդիրը՝ հայ աշխարհի, հայ ազգի, հայոց պետականության մերօրեայ մարտահրավերն է եւ գոյության երաշխիքը:

Հայալեզու եւ օտարալեզու հայ մամուլն իր ամենօրեայ գործունեության կարեւորագոյն խնդիրն է համարում 1915 թուականի հայոց Մեծ Եղեռնը որպէս համաշխարհային քաղաքակրթության նորագոյն պատմության համամարդկային մեծագոյն աղէտ՝ Յեղասպանության ճանաչումը, հայ ժողովրդի պահանջատիրության արդարացիության հիմնաւոր մեկնաբանման համար միջազգային հասարակական կարծիքի ձեւաւորումը:

Աշխարհասփիւռ հայ մամուլը դեռեւս լուրջ անելիքներ ունի Արցախի հիմնահարցի հաանպաստ լուծման, միջազգային իրաւական նորմերին համարժեք Արցախի հիմնահարցի հայապաստ լուծման, միջազգային իրաւական նորմերին համարժեք Արցախի ժողովրդի ազգային ինքնորոշման իրաւունքի պատմական հիմնաւորման անվտանգության երաշխիքների ապահովման ուղղութեամբ:

Համահայկական լրատվամիջոցների ղեկավարների Դ. համաժողովը փաստում է, որ աշխարհի հայ մամուլը բազմադարեայ իր փորձով ու հեղինակութեամբ հսկայական ներուժ էւ լաւագոյն աւանդոյթներ ունի ազգային, կրթական, մշակութային, համայնքային, նոր սերնդի դաստիարակության, համահայկա-

կան բազում այլ խնդիրների լուծման գործընթացների կազմակերպման, խրախուսման եւ աջակցութեան ուղղութեամբ:

Հայալեզու մամուլը գիտակցում է մայրենի լեզուի անաղարտութեան, ազգային մշակոյթի, ժողովրդական ավանդոյթների պահպանման, հայ ժողովրդի պատմական անցեալի եւ նրա հետ կապուած վիճաբարոյց հարցերի անաչառ մեկնաբանման գործում իր տեղի ու դերի ողջ պատասխանատուութիւնը:

Համաժողովը նշում է, որ ազգային բոլոր հիմնահարցերի ու խնդիրների լուծման ուղղութեամբ հայ մամուլի կենսագործունեութեան համար այնչափ կարեւոր է միասնական հայկական տեղեկատուական դաշտի, համահայկական տպագիր եւ էլեկտրոնային պարբերականի, համաշխարհային հայ մամուլի էլեկտրոնային շտամարանի, տեղեկատուական հայալեզու տեխնոլոգիաների ստեղծումը, երիտասարդ կադրերի պատրաստումը, թափանցիկ լրատուութեան, բազմակարծութեան եւ հանդուրժողականութեան պետական, քաղաքական եւ հասարակական կառուցողական վերաբերմունքի ապահովումը համայն հայութեան հայրենիքում՝ Հայաստանում:

Համահայկական լրատուամիջոցների ղեկավարների համաժողովը քաջալերուած է եւ ողջունում է Սփիւռքի հարցերով նախարարութեան ստեղծման հարցում Հայաստանի Հանրապետութեան նախագահի պետական, քաղաքական եւ ազգային դիրքորոշումն ու վճռականութիւնը: Հայ մամուլը իր գործարար ու կառուցողական աջակցութիւնն է յայտնում այս եւ բոլոր ազգային, պետական, քաղաքական, հասարակական եւ ռազմավարական բոլոր ծրագրերին եւ նախաձեռնութիւններին:

Հայ մամուլի ղեկավարները լի են վճռականութեամբ համաժողովը շարունակական գործընթացի վերածելու եւ արծարծուած բոլոր հիմնախնդիրների լուծման ուղղութեամբ ստեղծուած յանձնաժողովի ուժերով գործնական քայլեր ձեռնարկելու համար:

Աւարտելով իր աշխատանքները հայոց պետականութեան 17-րդ տարեդարձի նախօրէին, համահայկական լրատուամիջոցների ղեկավարների համաժողովը իր շնորհաւորանքներն է յղում համայն հայութեանը հայ աշխարհի պետական, քաղաքական եւ հասարակական բոլոր կառոյցներին ու կազմակերպութիւններին եւ կոչ անում համախմբուելու մեր դարերով փափաքած ու այնչափ թանկ գնով ձեռք բերուած պետականութեան շուրջ, գիտակցելով ազգային ինքնահաստատման ճանապարհին մեր ինքնութեամբ աշխարհի հետ մեր քաղաքակիրթ երկխօսութեան ու համաքայլ երթի լիարժէք իրաւունքը:

Երեւան
22 Սեպտեմբեր 2008

ՏԵՍԼԱՊԱՇՏ, ՅԱՆԴՈՒԳՆ ԵՒ ԻՐԱՒՈՒԹԻՒՆ ԿՐՈՂ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈԼժԵՆԻՑԻՆ

11 Դեկտեմբեր 1918 - 3 Օգոստոս 2008

«Լուռ մնալով չարին դիմաց, զայն մխրճելով
մեր մարմնին մեջ, զայն կը սերմանենք»:
Ալեքսանդր Սոլժենիցին, «Կուլակի Արշիպեղագոսը»:

Կրնայի խորագրել՝ հակախորհրդային դիմադրական շարժման խորհրդանիշ... Այդ պատճառով ալ մեծ, որ իրեն հետ մեծցուց իր ժողովուրդը, բարձր պահելով ճակատը:

Հզոր եւ ճգմող աշխարհաստան վարչակարգի մը դէմ ծառացած Մարգարէ:

Եթէ բառերը արժեզրկուած չըլլային, պիտի յանդգնէի ըսել որ ՇԱՏ ՄԵԾ ՄԱՐԴ ՄԸ բաժնուեցաւ այս աշխարհէն, զայն դրոշմելով իր ներկայութեամբ: Ինչպէս կ'ըսէի յաճախ, այժմ մեր հայրենի գրողներն ալ կը գրեն, «Չարի կայսրութեան» ծնունդին եւ գոյութեան մասնակից եւ մեղսակից ռուս ժողովուրդի հոգին փրկեց Ալեքսանդր Սոլժենիցին, առանձին դառնալով հզոր ուժ: Իր պարագային «այլախոհութիւն» բառը շատ տկար է պարագրկելու համար հանճարեղ, բայց մանաւանդ քաջ տեսլապաշտի մը համայն մարդկութեան բերած նպաստը: Քսաներորդ դարու երկրորդ կէսը կը կրէ իր կնիքը: Դրական կնիք՝ ընդդէմ բացասականութեան: Իր երկրի վերականգնումին գիտակցութիւնը ունէր, բայց իր պայքարը խափանուեցաւ իշխանութեան կողմէ երբ դատապարտուեցաւ «հակախորհրդային դաւադրութեան» մեղքի համար:

Ալեքսանդր Սոլժենիցինի հայրը կը մեռնի իր ծնունդէն առաջ: Ռուսիոյ հարաւը, Ռոստով Տոնի վրայ կ'ապրի երջանիկ մանկութիւն մը: Կը հետեւի գիտութեանց եւ գրականութեան: Զօրակոչի կ'ենթարկուի Երկրորդ Աշխարհամարտին: Պատերազմէն անմիջապէս ետք, Յունուար 1945ին, անձնական նամակի մը մէջ կասկած կ'ար-



տայայտէ Ստալինի հետեւած ռազմավարութեան մասին, զայն որպէս առաջնորդ ստորագնահատելով: Կը դատապարտուի ութը տարուան բանտարգելութեան, ուղղիչ ճամբարի մէջ, այսինքն՝ “Կուլակ” ի, ամրաստանուելով հակախորհրդային դաւադրութեան յանցանքով: 1957ին “կը վերականգնի” եւ Ռիազանի մէջ կը դասաւանդէ բնագիտութիւն: Այդ դառն փորձը կը պատմէ “Իւան Տենիսովիչի Կեանքէն Օր Մը» գիրքին մէջ, որուն հրատարակութիւնը կ’արտօնէ Նիքիթա խրուչչեւ, 1962ին: “Կուլակ” ի անշարք եւ բիրտ նկարագրութիւնն է այս գիրքը եւ հեղինակին կ’ապահովէ հռչակ: 1967ին կը հրատարակէ իր “Գրաքննութեան դէմ Գիր”ը, կոչ կ’ընէ դիմադրական շարժման: Երկրի ապահովական ուժերը եւ Գրողներու Միութիւնը կը հալածեն զինք, կ’արտաքսուի Գրողներու Միութենէն, կը ձերբակալուի, իրմէ կ’առնուի իր քաղաքացիութիւնը, ստիպուած կ’ըլլայ ապաստանելու Զուիցերիա եւ ապա Միացեալ Նահանգներ: Աքսորի մէջ լոյս կը տեսնեն իր երկերը: Յիշենք՝ “Առաջին Շրջանակը”, “Ոլիւղաւորներու Տաղաւարը”, “Կալիպիսի Զանգակատունը”, “Կարմիր Անիւր”, “Կուլակի Արշիպեղագոսը”։ 1973ին, որ համաշխարհային դէմք կը դարձնէ զինք: Եւայլն: 1974ին կը հրապարակէ բաց նամակ մը՝ ուղղուած խորհրդային Միութեան ղեկավարներուն, եւ կոչ կ’ընէ անոնց որ հրաժարին Մարքսի վարդապետութենէն եւ ազատութիւն տան իմաստասիրական եւ կրօնական արտայայտութիւններու: Միշտ ինքնիրեն հաւատարիմ, Ալեքսանդր Սոլժենիցին պայքարած է գրողի ազատութեան համար, գրաքննութեան դէմ, հալածուած եւ մերժուած է խորհրդայիններու կողմէ: 1970ին, իրեն կը տրուի գրականութեան Նոպելեան մրցանակը: Մեծ մտաւորականը, 1978ին, Հարվարտի մէջ կ’արտասանէ իր հռչակաւոր ճառը, ուր, այս անգամ, առանց հաճոյակատարութեան, բոլոր կերպով կը քննադատէ Արեւմտեան աշխարհի բարոյական անկումը, ճարտարարուեստական սանձարձակութիւնը, եւ զայն կը համարէ շահախնդրութեան հասարակ շուկայ: Խորհրդային կարգերու անհետացումէն ետք, քսան տարի տեւած աքսորէ կը վերադառնայ իր երկիրը: Իր գործը ընկերաքաղաքական լայնածիր պաստառ մըն է, ուր կը գտնենք պատմութեան նենգափոխման բացայայտումը եւ դատափետումը: Գրող մը՝ որ մերժած էր ստրկանալ՝ անմիջական բարօրութեան համար: Օրինակ՝ որ խորհրդածութեան պէտք է մղէ իր ժամանակակից վերապրողներէն շատերը, անոնք ռուս ըլլան թէ՛ այլ հանրապետութիւններու բնակիչներ:

Մեծերու մտածումը ազգային սահմաններ չի ճանչնար: Ժամանակակիցներս շատ կը սորվինք եթէ անոնց իմաստութիւնը ժառանգենք: Այսպէս, կ’ըսէ:

“Ինչ որ շատ յստակ է, հետաքրքրական չէ”։ Յստակութիւնը հաւանօրէն պատշաճեցումն էր, սպասելով որ փոթորիկը անցնի, իսկ այս սպասումը ընկերութիւնները կ’առաջնորդէ ճահճացման, որուն հետեւանքները դեռ կը տեսնեն չարիքի համակարգի անկումէն արդէն երկու տասնամեակ ետք:

Ալեքսանդր Սոլժենիցինի ստեղծագործական աշխարհը ընդարձակ համայնապատկեր մըն է, ուր կայ պատմութիւնը, իր դահիճներով եւ գոհերով, համեստներ եւ տիրակալներ, գիւղացիներ եւ մտաւորականներ: Տիպարները կը ներկայացուին իրենց ընկերահոգեբանական եւ գոյութենական կացութեամբ, բայց գրողը աւելին կը տեսնէ, քանի որ այդ մարդիկ, տուեալ պահու մը, բարոյական ընտրանք մը կ’ընեն, գոհաբերութեան ոգի, հաւասարութեան ցանկութիւն, բայց մանաւանդ որոնումը մարդկայինի, մարդկային արժանաւորութեան, ընդդէմ չարութեան եւ ճակատագրի: “Կուլակ” ի համայնագիտարանային վկայութիւնը կը բերէ Ալեքսանդր Սոլժենիցին:

“Ոչ մէկ տեղ, ոչ մէկ վարչակարգ, երեք չէ սիրած մեծ գրողները, սիրած է միայն

փոքրերը՝ Մտածում մը՝ զոր հարկ է խորացնել, մեծ ու պզտիկ ընկերութիւններու մէջ, ուր կան մեծ կամ մանր տիրակալներ, որոնք կ'առաջնորդուին նոյն ներշնչումներով: Այս ըսելով բնական է որ հակադրուի վարչակարգի եւ դիւանակալութեան հարթող գլանին:

“Երբ կ'աշխատինք մարդոց համար, յաւելեալ ճիգ մը կ'ընենք, երբ կ'աշխատինք տիւմարներու համար, կը ձեւացնենք”: Ալեքսանդր Առլթենիցին այս խիտ արտայայտութեան մէջ կ'ամփոփէ խորհրդային համակարգի մէջ աշխատանքի արժեգրկումը եւ տնտեսութեան ձախողանքը: Ծիշդ հակառակը Ա. Պօդոսի այն մտածումին, որ մարդ աշխատանքով կը նուաճէ իր ազատութիւնը: Այս մտածումը ընդհանրապէս կը չեչտուի մտաւորականի եւ տեսակաւոր տիրակալներու յարաբերութեան պարագային:

Հարուստ գրականութիւն մը: “Կուլակի Արշիպեղագոսը” եւ “Կարմիր Անիւը” իր վիպական գործերէն յատկանշականները կը մնան:

Երբ խորհրդային դրախտին մէջ մարդիկ հռչակի կը տիրանային քծնելով եւ իրենց հոգին ծախելով, Ալեքսանդր Առլթենիցին հանդիսացաւ վաւերական եւ օրինակելի այլախոհ մը: Օրինակելի նաեւ այսօր, որպէսզի տիրակալներու ենթարկուելով չարը չսերմանուի: Այդպէս եղաւ մեծ մտաւորականը եւ մեծ վիպասանը:

Եթէ Պերլինի պատը փուլ եկաւ, եթէ Խորհրդային Միութիւնը փլուզուեցաւ, Ալեքսանդր Առլթենիցին տեսլապաշտութիւնը, յանդգնութիւնը եւ իրաւութիւնը ունեցան որոշիչ ներդրում:

Հայկական այլախոհութիւնը առարկայական արժեւորման ենթարկելու փորձեր կան, օրինակ, Գաւիթ Գասպարեանի հրապարակումները Ակսել Բակունցի մասին: Հարկ է գանոնք առարկայականօրէն շարունակել եւ միջազգայնացնել: Առատ նիւթեր կան Առեփան Ալաճաճեանի վերջին քսանամեակին լոյս ընծայած յուշագրական բնոյթով գործերուն մէջ, որոնք, դժբախտաբար լայն հասարակութեան սեփականութիւնը չեն դառնար, մանաւանդ՝ քաղաքական եւ մշակոյթի գործիչներու մտածման առանցքին չեն գտնուիր: Այս արդէն այլ հարց է:

3. Պալեան


12 Օգոստոս 2008



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈԼժԵՆԻՑԻՆ

ԿՈՒԼԱԿԻ ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍԸ

ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԲՆԱԶՆՁՈՒՄԸ
Կ'ԸՆՏՐԵՆ ՆՈՅՆԵՐԸ ԵՒ ԿԸ ՎԵՐՍԿՍԻՆ
(ԵՐՐՈՐԴ ՄԱՍ)



Երբ ձեր գլուխը կտրած են, կրնա՞ն կրկին կտրել: Երբ ձեզ ողջ-ողջ մորթազերծ ըրած են, կրնա՞ն վերսկսիլ: Անշուշտ որ այո՛:

Այս ամենը կատարելագործուեցաւ մեր ճամբարներուն մէջ: Այս ամենը հնարուեցաւ Արշիպեղագոսի՛ն մէջ: Թող չըսուի որ **գումարտակը** մեր միակ նպաստն է պատժական ձեւի համաշխարհային գիտութեան: Եւ **ճամբարի երկրորդ պատիժը** միթէ՞ այդ չէ: Ալիքները որոնք կ'ողողեն Արշիպեղագոսը, հոն կանգ չեն առներ: Փոխանակ թոյլ տալու որ լայնօրէն տարածուին, զանոնք կը ներքաշեն նոր հարցաքննութեան մը խողովակներուն մէջ:

Ա՛հ, օրհնուած ըլլան այն անդրդուելի բռնապետութիւնները, այն բռնապետական վարչակարգերը, այն այնքան բարբարոս երկիրները, ուր ձերբակալուած անձ մը կրկին չ'ենթարկուիր ձերբակալութեան, ուր չեն գիտեր բանտարկեալը բանտարկելու բանտերը..., ուր դատուած անձ մը չի բերուիր կրկին դատաւորներու առջեւ: Ուր դատապարտեալ մը վերստին չի դատապարտուիր...

Մեր մօտ, այս ամենը ընդունելի է: Գտնուած մարդ մը, անդառնալի կերպով կորսուած, յուսահատութեան մատնուած - որքա՞ն հեշտ է զայն սպաննել լախտի հարուածով մը... Մեր բանտապահներու բարոյականն է՝ **մարդիկը գետին փռենք**: Մեր գործուղուած պատուիրակներու բարոյականն է՝ դիակները թող մեզի համար ըլլան սանդիխամատ...

Կրնանք ըսել որ ներքին հարցաքննութիւն եւ դատավարութիւն, նաեւ անոնք, ծնունդ առին Սոլովքիի մէջ, բայց հոն, իրականութեան մէջ, կը գոհանային մարդիկը անցնելով զանգակատան տակէն եւ կը գնդակահարէին: Զնգամեայ ծրագիրներու եւ ախտավարակման շրջանին է որ ծոծրակին տրուած փամփուշտը փոխարինուեցաւ ճամբարի երկրորդ պատիժով մը:

Առանց երկրորդ (երրորդ, չորրորդ) պատիժներուն, ինչպէ՞ս կարելի պիտի ըլլար Արշիպեղագոսին ծոցին մէջ պահել եւ հոն բնաջնջել բոլոր անոնք, որոնք դրոշմուած էին անոր համար:

Պատիժներու ինքնաստեղծումը, յար եւ նման օձի օղակներու բուսնելուն, Արշիպեղագոսի կեանքի ձեւերէն մէկն է: Այնքան ատեն որ տաժանակիր աշխատող եւ աքսորի մէջ փտող դատապարտեալներ կան մեր ճամբարներուն մէջ, ամէն ոք կը զգայ որ իր գլխուն վրայ կախուած է այդ սեւ սպառնալիքը՝ ստանալ նոր պատիժ մը նախքան առաջինը քաւելը: Այս յաւելեալ պատիժներ-

որը յաճախ տրուած են, բայց անոնք մասնաւոր կայտառութեամբ ինկած են մարդոց գլուխներուն 1937-1938ին եւ պատերազմի տարիներուն: (1948-1949ին, դուրսը գտնուողներուն վրայ տարածուեցան. **փախցուցած էին**, թոյլ տուած էին որ մարդիկ խուսափին որոնք հարկ էր որ վերստին դատուած ըլլային երբ դեռ ճամբար կը գտնուէին, պէտք էր զանոնք կրկին ձեռք ձգել: Ասոնց տրուեցաւ **վերապարտ** անունը, իսկ ինչ կը վերաբերի անոնց որոնք ճամբարէն երբեք չէին ելած, անուն անգամ չունէին:)

Եւ այդ դեռ ողորմածութիւն էր - մեքենայի ողորմածութիւն - որ այս նոր պատիժները զորս կու տային 1938ին առանց նոր ձերբակալութեան, առանց հարցաքննութեան, առանց ճամբարի մէջ դատաւարութեան, պարզապէս գումարտակ առ գումարտակ, երբ կը կանչուէին բանտարկեալները որ ստորագրեն: (Ստորագրելու մերժումը կ'արժանանար մութ բանտախցիկի դատապարտութեան, ինչպէս երբ կը ծխուէր արգիլեալ վայրի մէջ: Ու դեռ ազնուութեամբ կը բացատրէին. "Այս չի նշանակեր որ որեւէ վերագրում ունինք ձեզի դէմ, դուք պէտք է որ պարզապէս ստորագրէք ըսելու համար որ տեղեակ պահուած էք":) Քոլիմայի մէջ, այս ձեւով կու տային տասը տարուան պատիժներ, Վորքութայի մէջ դեռ աւելի մեղմ էր, ուր կամ հինգ տարի... Առարկե՞լ, վիճի՞լ, ի՞նչ սնափառութիւն: Ինչպէս որ Արշիպեղազոսի մօին յաւիտենականութեան մէջ նուազագոյն տարբերութիւն չկար ուր եւ տասը տարուան միջեւ, տասը տարուան պատիժի մը սկիզբին եւ աւարտին միջեւ: Միակ կարելորդ այն էր որ այսօր մարմինդ չպատռտուի եւ չբզքտուի:

Այժմ, տուեալները կարելի է հասկնալ հետեւեալ ձեւով. 1938ին, ճամբարին մէջ տեղեկացուած դատապարտութիւններու համաճարակը արդիւնք էր վերէն եկած ուղղութեան մը: Հոն է որ, այդ բարձր ոլորտներու մէջ, անդրադարձան որ մինչ այդ տրուած պատիժները շատ թեթեւ էին, հարկ էր չափը լրացնել - նոյնիսկ կարգ մը անձեր գնդակահարելով - եւ այդ ձեւով մնացողներու ներշնչել հաստատ վախ:

Բայց համաճարակը որ խստացաւ պատերազմի ընթացքին զարդարուեցաւ պզտիկ զուարթ բոցով մը, ժայթքած ներքեւէն, ժողովրդական նախաձեռնութեան ձեւով: Անկասկած, վերեւէն եկած էին հրահանգներ, ըսելով որ, պատերազմի տեւողութեան, ամէնէն յայտնի եւ տիրական անձնաւորութիւնները, որոնք կրնային կազմել ըմբոստութեան մը կորիզը, պէտք էր որ սանձուէին եւ մեկուսացուէին: Տեղւոյն վրայ, արիւնոտ ձեռքերով երիտասարդներ անմիջապէս նկատեցին ներկայացող ոսկի առիթը. անոնք հոն տեսան **ճակատ երթալէ խուսափելու ձեւ մը**: Ըստ երեւոյթին, այս միտքը ծագեցաւ մէկէ աւելի ճամբարներու մէջ, եւ արագօրէն, տարածուեցաւ քանի որ օգտակար էր, հնարամիտ եւ փրկարար: Թշնամիի գնդացիներու առջեւ, ճամբարներու չեկիստները պարիսպ պիտի բարձրացնէին... ուրիշներու մարմիններով:

Հարցաքննութիւն եւ դատաւարութիւն տեղի կ'ունենային ճամբարին մէջ: Սկզբունքով, պէտք էր պատժուէին այն յանցանքները, որոնք գործուած էին բանտարկեալներուն կողմէ իրենց դատապարտութենէն ետք որուն պատճառով դրկուած էին ճամբար:

(ՀԱՏՈՒՄԾ)

Ֆրանսերէն թարգմանութենէն հայացուց՝ Յ.Պ.



ԿԱՄՔԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ-
ԿԱՍՕ ԳԵԱՆՋԵԱՆ

ԿԱՍՕ ԳԵԱՆՋԵԱՆ

Ծնած է 1948-ին, Երեւան:

1963-68 տարիներուն սորված է աւարտած է Երեւանի Փանոս Թերլեմեզեանի անուան գեղարուեստական ուսումնարանի քանդակագործական բաժինը:

1968-74 տարիներուն սորված է աւարտած է Երեւանի գեղարուեստաթատերական ինստիտուտի քանդակագործական բաժինը:

1977-ին ընդունուած է համալսարանի նկարիչներու միութեան անդամ:

1979-ին Երեւանի ժամանակակից արուեստի թանգարանին մէջ բացած է իր անհատական ցուցահանդեսը:

Աշխատանքները ցուցադրուած են՝ Նիւ Եորք, Լոս Անճելոս, Պոսթոն, Ֆիլատելֆիա, Մոնթրէալ քաղաքներու մէջ:

ՍԵՒ ԱՍՏՂԵՐԸ

Սեւ աստղերը փոթորկում են ծովը Կամքի

Ինչ որ մի տեղ տիեզերքում
Ակնթարթին այս յարափոխ
Կայ եւ չկայ այն մեղեդին
Որի բոցը կապոյտ ֆոսֆոր
Ալիքւում է անդունդներում յիշողութեան լաբիրինթի

Կայ եւ չկայ պահը այս խենթ իրարանցման
Փշուրները աղամանդի զարդարում են գահը
Կամքի աստղաքանդակ

Նետասլաց իմ երազանք
Վառուիր վառուիր վառ բոցերով թունդ արքունքի
Օ յաւիտեան ջահը Կամքի ընծայում է քեզ
Դափնիներ արեւայոյս

Ես խմում եմ ագահորէն Կամքի նեկտարը մահագոյն
Անդնդախոր ակունքներից միջուկային ժայթքումների
Ու անհամբեր ու անյագուրդ
Աստղանկար գորգի վրայ տառապանքի իմաստնացած
Մենակ հարբած ու երջանիկ
Նարնջագոյն երազների ծովն եմ սուզւում

Օ ղողանջները նրբանոյշ սրտիս խորքից
Անդնդակուլ արծիւների նման ջահել ու անհամբեր
Սլանում են բարձունքներում ժայռանկար երկինքների
Ու պայթում է ծիծաղն անզուսպ որոտաձայն

Ու բացւում են դարպասները Կամքի մռայլ լաբիրինթի
Սեւ աստղերի հեռուն տանող

30 Հոկտ. 1990, Երեւան

ՏԻԵՉԵՐԱԿԱՆ ԿԱՄՔԻ
ՈՒՐՈՒԱԿԱՆԸ - ԿԱՄՕ ԳԵԱՆՋԵԱՆ



ՈՒՐ Է ՏԱՆՈՒՄ ԳԻՇԵՐԸ ԻՆՁ

Ուր է տանում գիշերը ինձ
Արեւի մերկ կրծքին քնած լուռ ու մենակ

Ուր է տանում գիշերը ինձ աննպատակ ու ցնորուած
Յուրտ աստղերի ջահը ձեռքին
Կամքի ահեղ պոռթկումների ծանր ժամին մտամոլոր
Ուր է տանում

ԲԱԳԻՆ

Բացարձակը անշարժ է յար
Նրա ներսում չկայ սակայն ոչինչ անշարժ
Ու ծփում է կեանքը յաւերժ
Ալիքների վրայ Կամքի ովկիանոսի հեռուններում
Մարմնաւորուած ինչպէս երազ
Շարունակուող երազի մէջ աննիւթական

Ակնթարթի մէջ յարաշարժ
Տատանւում են ստուերները
Դեռ ծաւալուող Նոր ձեւերի
Տիեզերքում իրական է Կամքը միայն
Իսկ բովանդակ կեանքը Կամքի ստուերն է տաք
Անբնական անբովանդակ արեան ծովում
Բոցավառուող ջահը Կամքի
Հմայում է դէպի իրեն ու կործանում

Այնկողմային աշխարհից է սկիզբ առնում
Իմ գոյութեան արմատը հին
Գիտակցութեան սահմաններից հեռու հեռու
Գոյութեան ու Կամքի անվերջ պատկերացման
Խորհրդաւոր մթութեան մէջ յաւերժացած
Ես տեսնում եմ պարզ պատկերներ իմ դէմ յառնող
Եւ տանջանքը թէ ինչ կայ այդ պատկերների ներսում փակուած
Նետում է ինձ կասկածների անդունդն ի վար
Ու յանգեցնում ազատ անկման գաղափարին
Թաղանթ որը չունի միջուկ
Միջուկ որի ներսում գերխիտ մթութիւն է

Ինչ է մնում ակնթարթից
Ընդամենը յիշողութիւն
Որ դառնում է արծուի մագիլ
Ու ծուլատում ինքը իրեն
Խելագարուած ու խոշտանգուած
Ընդվզումից ըմբոստ արեան

Օ գումարուող ակնթարթներ
Ադամանդներ ունայնութեան պարանոցին անշնչացած
Ուր է տանում գիշերը ինձ
Արեւի մերկ կրծքին քնած ինչպէս արեւ
Ուր է տանում

ԿԱՍՕ ԳԵԱՆՁԵԱՆ

25 Օգոստոս 1990
Երեւան



ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲՆՈՐԴՈՒՄԻ - ՅՈՎՏԱՆՆԵՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԳԵՐԱՐԹՆՈՒԹԵԱՆ ՊԱՅԸ

Գերարթնություն՝
Այն պահը,
Երբ ամեն բան կը թուի յստակ ու ջինջ,
Սրտիդ երաժշտությունը կ'ունկնդրես,
Չգայարաններդ,
Որոնք լքուած էին վաղուց
Ու կը սպասէին այդ առիթը պատեի,
Կ'աղերսեն քեզ.

ԲԱԳԻՆ

Անոնք գիտեն, որ ժամը հասած է
Ձիրենք մտիկ ընելու:
Բոպեն այդ,
Որ իր մէջ կ'ամփոփէ
Կեանք մը ամբողջ,
Երբ պաստառին վրայ ուղեղիդ
Կը վազեն դէպքեր ու դէմքեր՝
Սիրելի ու պաշտելի,
Անախորժ ու գարշելի:
Մահացու յանցանքներն անգամ,
Այդ պահուն
Կը թուին մեղմացած.
Ամեն մարդ կը դառնայ ընկեր,
Թշնամին՝ բարեկամ:
Խորագննին կը նայիս
Քեզի ընկերակցող աչքերուն,
Կը պեղես հոգին
Առանց աւելորդ ջանքի.
Կը լուսաւորուի ան քու առջեւդ
Գեղեցիկ մակերեսայնութեամբ՝
Ծովու մակերեսին պէս,
Երբ դարեր ետք,
Անոր անդունդը թաղուած
Հնութիւն մը,
Ինք իր արմատը պոկելով,
Կը բարձրանայ ու կը ծփայ,
Իր մէջ կրած ամբողջ արժէքը,
Դարերու պատմութիւնը
Ի սպաս դնելով բոլորին:
Այդ պահուն,
Երբ դուն ու ես,
Ես ու ինք,
Ու բոլորս կը գիտակցինք,
Որ մէկ հոգի կը կազմենք,
Մէկ նպատակ հետապնդող:
Այդ պահը՝
Ինքնաճանաչման պահը սրբազան,
Արբեցմա՞ն պահ է,
Թէ՛... գերարթնութեան:

ՄԻԱԿ ԱՐՇԱԼՈՅՍԸ

Անհունութեան մէջ լողացող
Հիւլէներէն ընտրեցիր մէկը՝
Ձիս ընտրեցիր դուն:
Ու դեռ չընտրած
Արդէն կ'ապրէր գիտակցութեանդ մէջ,
Արդէն պատկերս դրոշմուած էր ուղեղիդ մէջ,
Արդէն հոգիս ամբողջութիւնս էր հոգիիդ:
Դուն եութիւնս ճանչցար,
Երբ ես անծանօթ էի ինծի:
Ու երբ աչքերս առաջին անգամ բացի,
Քեզ չտեսած,
Հոգիս տեսաւ քեզ՝
Ու իսկոյն ճանչցաւ.
Ինչ ամիս սպասումէ ետք տեսաւ՝
ԱՐՇԱԼՈՅՍԸ,
Ու գիտցաւ, թէ
Միակ արշալոյսն է իր կեանքին:
Այսքա՛ն տարիներ ետք,
Կեանքի դժնդակ մէկ պահուն,
Վայրէջքի մը ընթացքին,
Գրկեցիր զիս ու ըսիր.
«Կ'ուզեմ նորէն քեզ արգանդիս մէջ պահպանել»:
Մա՛յր,
Այդ պահուն միայն սթափեցայ
Ու խորապէս գիտակցեցայ,
Թէ դուն զիս չծնած ճանչցար,
Մինչ ես դեռ անծանօթ եմ ինծի:

ՏԱՂ ՆԱՅԻՐԻ



DELIGHT
AT 13:00 O'CLOCK
- VAHAN

ԵՐԱԶ

Երազել արգիլուած է:
Պէտք է միշտ արթուն մնաս:
Այս օրերուն երազ ունենալ մեղք է:
Պէտք է դիտես ու չգգաս:
Պէտք է լսես ու չապրիս:
Պէտք է կարդաս ու չհասկնաս:
Աներազ մարդու տիպարը
Համակարգիչի առջեւ կը կազմուի
Աներազ քաղաքացին
Մեր մէջ կը կազմաւորուի
Կարելորը
Ամէնէն կարելորը
Երազ ունեցողներ չծնին
Մնանք այսպէս
Տափակ ու սողուն
Ու ձգտինք միայն
Որ երազի պէս բան մը ունենանք:

ԲԱՐԵԿԱՄ

Վիզ-վիզի
Ձեռք-ձեռքի
Մնայուն բարեկամ
Սակայն խորքին մէջ
Հալածուած թշնամիներ
Դէպի անկեղծ մտերմութեան:

Վիզ-վիզի
Ուս-ուսի
Մնայուն ընկերներ
Սակայն խորքին մէջ
Իրարու միս ուտող
Իրարու չհանդուրժող
Երկու բեւեռներ...

Նշանաբանը
Շահ եւ փառք է
Եթէ ունիս երկուքը շատ լաւ է
Եթէ չունիս ոչ մէկը, ոչ ալ միւսը
Մնայուն հարց է:

ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Իրականութիւնը
Թշնամի է շատ յաճախ
Կը զարմացնէ
Կը զայրացնէ
Եւ գեղեցիկը կը վերածէ տգեղի
Ջարդարուածը՝ մերկի
Լուսաւորը՝ մութի
Ժպիտը՝ լացի
Սակայն կը մնայ ճշմարտութիւն:
Իրականութիւնը
Քուկո է վերջին հաշուով
Չես կրնար խաբել
Կամ չտեսնել
Կամ անտեսել...
Իրականութիւնը
Սնկեղծութիւնն է
Իսկ անկեղծութիւնը շատ անգամ
Չփնտռուած բարեկամ:

ՅԱԿՈԲ ԼԱՏՈՅԵԱՆ

ԱՊԱԳԱՅԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ

Որոնեց ինքզինք «Ուր» քաղաքի փլատակներու կիսրնթեռնելի արձանագրութիւններուն եւ հեռաստաններու հրաւերները սղագրող արձագանգներու բեկորներուն մէջ, մոռացութեան խորշակներէն կոշկոռած արմատներուն խորը եւ յիշողութեան ակօսներուն տառապանքը լուսերգող հասկերու ժպիտներուն մէջ, որոնեց ինքզինք իրենց բոյնը կորսնցուցած կռուներու թեւերուն յուսահատ թափահարումներուն եւ երաշտ օրերու կորուստները փսփսացող չոր խոտերու աղօթքին մէջ, որոնեց ինքզինք պարիսպին նահատակութիւնը լռած մողէզին սարսափահար աչքերուն խորը եւ պարիսպէն անգին երկարող ուղեկորոյս կարօտներու անլուր հրդեհներու բոցալեզուակներէն ալ վեր, որոնեց ինքզինք դարաւոր սպասումներու անժաման գալուստը օրօրող աչքերու աղապատանքին եւ ապագայի անկատար անցեալ ջուրերուն մոլթնամոլթ յատակներուն, ամէնուր եւ ամէն ժամ ինքզինք որոնեց, չգտաւ, դարձեալ որոնեց եւ վերստին հաստատեց, որ գաւեշտ մը, ողբերգականակերգական տրամ մըն է տեսածը, անիմաստ ու անհեթեթ ներկայացում մը, մինչդեռ իրականը աչքն է, որ տիեզերքի արարումէն ի վեր կը կարդայ երկիմաստ նպատակը Աղամորդիին գոյութեան եւ կը վկայէ տեսածին մասին:

Եւ վկայեց ո՛չ թէ իր տեսածին, այլ աչքին մասին, որովհետեւ օտարականը իր անգորութեամբ հաստատած էր արդէն, առաջին իսկ օրէն, թէ երեւոյթները չեն, որ կ'իմաստաւորեն գոյութեան առեղծուածները, այլ իր մինուճար հոլթիւնը, որ զինք կ'ազատագրէր իր յիշողութեան պարիսպներէն եւ կ'ուսուցանէր իրեն գերագոյն գօրութեան մը հնազանդելու եւ ինքզինք ըլլալու գաղտնիքը: Իր գոյութեան իմաստը:

Կրնա՞ր չյիշել: Անտեսանելիին հգորութեան անձնատուր ըլլալու, մաքառելու, ապագային յիշողութենէն քայլ մը անդին անցնելու եւ իր անկախ գոյութիւնը դարբնելու հրաւերները հնչած էին միշտ, հգորութիւնը վերածուած էր ուրախութեան տօնահանդէսի, տօնահանդէսը՝ անբացատրելի երանութեան եւ գաղտ յուզումներու ալիքներուն շարժումներով փորձած էր կշռութաւորել կեանք ու երազ, տեսիլ ու նպատակ եւ տիեզերք ու անդրտիեզերք:

Յիշեց: Յիշեց մէն մի մանրամասնութիւն գիծ առ գիծ, իր նրբերանգային տարբերակներով եւ քալեց: Միայն քալեց, բայց քաղաքին հրապարակը չգտաւ: Պողոտաները կ'առաջնորդէին այլ պողոտաներու, փողոցներու անծանօթ փողոցներու կը բացւէին, նեղ ու մոլթ, ծուռ ու սարսափազդու թաղերը կ'աւարտէին նոյնքան միջին ու դարձդարձիկ գռիհներու դուռներուն եւ ինքզինք գտաւ նոյն բաւիղին մէջ: Ալ բռնուած էր եւ անկարելի էր դուրս ելլել բաւիղին ինքզինք կրկնող թակարդէն: Փորձեց հարցնել, բայց անակնկալի եկաւ, երբ նկատեց, որ ո՛չ ոք հետաքրքրուած էր իր հարցումներով:

Տղամարդու մը հարցուց:

Տղամարդը նայեցաւ խստաբիր եւ քալեց:

Լուսազգեստ գեղաժպիտ կնոջ մը հարցուց:

Գեղուհին ալ կանգ չառաւ եւ ականջ չտուաւ իր հարցումին: Նոյնիսկ անշահագրգիռ մարդու հպանցիկ հայեացք մը չնետեց եւ սահեցաւ անտարբեր:

Օտարականը այն ատեն զգաց, համոզուեցաւ վերջնականապէս, որ իսկապէս օտարական մըն է իր երբեմնի քաղաքին մէջ: Արդէն հասայ եւ առանց ոսկեղուռէն ներս ոտք դնելու պիտի չվերադառնամ: Պէտք է անպայման հասնիմ հրապարակ, իմ



ԿԵԱՆՔԻ ԵՐԳԸ - ՄԱՉՄԱՆԵԱՆ

հրապարակս, խմեմ անմահական ջուրէն, դար-դար երիտասարդանամ, լիանամ երգելով, հոգիներուն մէջ թնդացնեմ երգերը հողին եւ բաժնեմ անգուսպ հրդեհները արքայադուստրի կոյս անկողինին, մտածեց ու խոկաց, խոկաց ու որոշեց եւ շարունակեց քալել՝ իր արեան մութին վրայ բացուած կարօտներուն ու կանչերուն հմայքներէն յափշտակուած:

Քալեց հարցնելով եւ հարցուց քալելով: Հարցուց անցորդներուն եւ հարցուց ճնճողուկներուն: Քարին ու ստուերին, ամպրոպին ու տեղատարափին, թիթեռնիկին ու ծոթրինին, աղբիւրին ու կակաչին, արշալոյսի իր կանչը մոռցած՝ աջ ու ձախ վազվզող շուարած աքաղաղին եւ աւերակներուն տակ անհետ կորսուած անանուն եւ անհասցէ մանուկներուն օդին մէջ փչրուող վերջին ճիչերուն հարցուց եւ շարունակեց ճամբան՝ առանց սպասելու իր իսկ հարցումին պատասխանին: Հարցուց ու քալեց, քալեց ու հարցուց միայն եւ անոնց պէս եղաւ:

Մտածեց, որ արդէն կը նմանի քաղաքի բնակիչներուն: Յետոյ ահաւոր յոգնութիւն մը գգաց, նստեցաւ ճամբեգրի քարին եւ քար մըն ալ ինք աւելցաւ՝ երբեմնի չէն ապարանքներուն ու պարզուկ շինութիւններուն կենսուրախ, լուսաձայն եւ տոհմիկ անցեալը լռելեայն փառերգող փլատակներուն վրայ: Անդրադարձաւ, որ գիշերներէ ի վեր չէր քնացած եւ ոչ մէկ կաթիլ ջուր բոյն հիւսած էր իր շրթներու ակօսներուն:

Նստած՝ հայեացքը սեւեռեց անորոշին եւ ոչինչ տեսաւ: Բուք ու բորան ու մութ գիշերին՝ իր ներքին մութերուն վրայ առասպելական կտրիճները հրաշքին սխրալի արշալոյսները լայն բացին, լեռները դղրդացին իրենց կրանիթեայ աղիքներէն բարձրացող լինելութեան լաւային գօրութենէն, շանթերը դարձեալ անձնամոռներու ընտիր գունդեր կազմեցին եւ անցան սահմանէն անդին: Ինք մնաց: Մնաց նոյն տեղը՝ անշարժ, անգօր, բայց տագնապահար: Մնաց՝ ինչպէս անարժէք ու անիմաստ լքուած խճաքար մը եւ նախանձեցաւ երկինքէն անցնող սարեակներուն, ծաղկէ ծաղիկ սէր ու երազ ասեղնագործող մեղուներուն եւ նոյնիսկ օդին թեւերով ճամբորդող փոշի-

ին: Մնաց: Յետոյ՝ պապերը յիշեցնող ծերունի մը եկաւ, ալեփառ մօրուքը մինչեւ ծունկերը երկարած խորհրդաւոր նահապետ մը, իր կողքին տեղ գրաւեց եւ ըսաւ.

- Գիտեմ, թէ ինչու եկած ես: Գիտեմ, թէ ինչ կը փնտռես այս քաղաքին մէջ: Մի տկարանար, պողպատէ՝ հաւատքդ, ոտքի ել եւ հետեւէ ինծի, ճիշդ այնպէս՝ ինչպէս օրհնեալ օր մը լեռները իմ քայլերուս հետ քայլ կապեցին եւ հասան Երկիր:

- Բայց ո՞վ ես դուն:

- Ես այն անձն եմ,- շարունակեց նահապետը,- որ օտարականներուն հրապարակ առաջնորդող ճամբան ցոյց կու տայ: Ա՛յս է գործս, ի վերուստ ճշդուած ասպարէզս: Ես հոս կ'ապրիմ հազար-հազար տարիներէ ի վեր եւ տակաւին չմեռայ, որովհետեւ քաղաքի բնակիչներէն ո՛չ ոք ուզեց արհեստս սորվիլ եւ զայն ժառանգել: Կ'ուզե՞ս, կը սորվի՞ս արհեստս, ի՞նչ կ'ըսես, չխօսի՞ս: Մարմինս կարօտցած է հողը եւ յոգնատանջ ոսկորներս կ'ուզեն արժանանալ իրենց վերջնական հանգիստին: Որքան կ'ուզեմ...

- Ո՛չ,- գոռաց օտարականը, յետոյ իր ձայնին ահաւոր շեշտէն սարսափած՝ աւելցուց,- ո՛չ, ես քաղաքին կեդրոնական հրապարակը պիտի երթամ, հոն պէտք է անպայման գտնեմ ոսկեղուռ ապարանքը եւ...

Ձայնը անակնկալօրէն մարեցաւ կոկորդին մէջ՝ ինչպէս լոյսը, ինչպէս կեանքը եւ բոլոր գեղեցիկ բաները:

Քալեց ծանրաքայլ կորաքամակ ծերունին, հովը ծածանեց սպիտակ մօրուքը, որ ամպի մը կերպարանք ստանալով՝ կախարդեց օտարականը եւ հրահանգեց հետեւիլ նահապետին քայլերուն: Ենթարկուեցաւ: Առանց այլեւայլի: Ինքնակամ ու երջանիկ, մինչեւ որ ծերունին յանկարծ կանգ առաւ, «հասանք» ըսաւ եւ աներեւութացաւ:

Հսկայ հրապարակ մըն էր: Լուսաշող եւ լայնածաւալ սպիտակ հրապարակ մը, սպիտակ քարերէ կառուցուած աննման ապարանքներով, սպիտակ երկինքով եւ սպիտակ լռութեամբ շողողացող ընդարձակ հրապարակ մը, որ իր ծննդավայրին նոյնանման վարդագոյն հրապարակը կը յիշեցնէր: Միայն գոյնը տարբեր էր: Ամէն բան սպիտակ էր, նոյնիսկ իր ձայնը դարձած էր սպիտակ եւ կաթնասպիտակ երանութիւն մը ապրեցաւ:

Ապիտակ հայեացքները աջ ու ձախ օրօրուեցան, երկարեցան, գեփիւռներ սահեցան, բայց օտարականը ո՛չ ոսկեղուռ գտաւ եւ ոչ ալ արքայադուստրը:

Յառաջացաւ դէպի հրապարակին կեդրոնը, ուր սպիտակ լոյսեր կը փայլփլէին՝ աղամանդի մը վրայ խտացած ճառագայթին աչք շլացնող գունախաղերուն գրաւչութեամբ: Յանկարծ նկատեց խորհրդաւոր քանդակներով զարդարուն սպիտակ մարմարէ դագաղ մը, մէջը՝ քարացած սպիտակ դիակ մը եւ լսեց ճիշդ ու աղաղակ, լաց ու կոծ, սգերգ ու անէծք:

Ինչե՛ր չլսեց:

Եւ ինչե՛ր չտեսաւ:

Խոր կնճիռներու տակ թաղուած երջանիկ դէմք մը կարծես մահ կ'աղերսէր իր մեռելային անշարժութեան մէջ, մինչ ապշահար ու լայն բացուած աչքերը մահուան սարսափը կը սառէին մատաղ հոգիներու տարագիր գալիքի էջերուն: Երկիրը կը դողար բորենիներու կարմիր սպառնալիքներէն եւ վիշապներու վոհմակէն հալածական լոյսը իր կանխահաս նահատակութիւնը կը հիւծէր: Եւ շուրջը, աջ ու ձախ, իրար վրայ փուլ եկող չարաշուք ուրուականներ կային, ու դաւաճաններ կային, ու դասալիքներ կային, ու պատեհապաշտ սրիկաներ եւ փառքի վաշխառուներ կային, ու մա՛հ կար լիառատ, կար շա՛տ պատուհաս, կա՛ր...

Մութ եւ մութ կար, ու անսկիզբ ու անվերջ խաւար...

Ընդոստ շրջեց գլուխը, բայց ո՛չ ոք գտաւ: Ձեռնապայուսակը ջղային շարժումով

մը շարտեց գետին: Պայուսակը փշրուեցաւ բիւրեղեայ գեղօրի մը պէս եւ թուղթ ու գրիչ, հմայիլ ու մագաղաթ, չարխափան ու սրբանկար, տիւիտ ու համրիչ աջ ու ձախ թեւ առին եւ փոթորիկը զանոնք տարաւ դէպի անծանօթ հեռաստաններ:

Այդպէս թուեցաւ իրեն:

Նստեցաւ յուսահատ եւ սպասեց:

- Բայց ո՞ւր են արքայադուստրերը...

Զարմացաւ: Արդեօք իր ձայնն էր լսածը: Զկրցաւ ճշդել, մնաց որ ճշդելու ժամանակ ալ չունեցաւ, որովհետեւ ձայնը տարտղնուեցաւ ունկերուն մէջ՝ քամիէն հալածական աւագահատիկներուն պէս, ժամանակի կատղած երախին մէջ աջ ու ձախ նետուող օրերուն բեկորներուն նման եւ եղաւ համընդհանուր տակնուվրայութիւն:

Որոշեց հեռանալ քաղաքէն: Ասիկա քաղաք չէ, դժո՛խք է, գոռաց ու մտածեց անպաշտպան եւ ուրացուած դիակին մասին: Ասիկա քաղաք չէ, դժո՛ռ՝ո՛խք է, որոտաց գեհնականներու անողոք զայրոյթը իր ձայնին մէջ կռանելով եւ դուրս նետուեցաւ իր շուրջ կծկուող մղձաւանջներու ուռկանէն: Հիմա ի՞նչ ընէր, ո՞ւր երթար, որո՞ւ գիմէր, երբ իր կողքին այլեւս ոչ մէկ անկեղծ ընկեր մնացած էր, իսկ իբր թէ բարի եւ առաքինի եօթը արքայադուստրերը, սեւեր հագած ու դազադին շուրջ շրջանակ կազմած՝ կ'ողբային բարձրաձայն եւ իրենց բախտը կ'անիծէին:

Հարցուց եւ հարցուց:

Սգաւորներէն մէկը գլուխը բարձրացուց, թախծոտ աչքերով իրեն նայեցաւ եւ վիրաւոր շան կաղկանձը յիշեցնող խեղդուկ ձայնով մը լացաւ, թէ կ'ողբան անժամանակ մահը քաղաքի նորամանուկ թագաւորին, որ գահ չբարձրացած՝ քար-քար վիշտեր ննջեց սպիտակ դազադին մէջ:

Ուրիշ հարցումներ ալ ուղղեց արքայադուստրերուն, աստղերուն եւ յիշողութեան մշուշներէն դուրս եկող դէմքերուն, բայց բառերը չհասան ունկերուն եւ կորսուեցան միջոցին մէջ: Դարձեալ հարցուց եւ դարձեալ յիշեց: Յիշեց ինքզինք, աքաղաղն ու կատուն, արեւն ու կաթնադրիւրը եւ իրեն պատասխանած արքայադուստրը յիշեց: Ան կանգնած էր ոսկեղրան առջեւ: Ոսկեղրա՞ն, թէ դարպասին: Դարպասի՞ն, թէ՞ ոսկեղրան: Կարեւոր չէր: Կարեւորը այն էր, որ հիմա կանգնած էր յաղթածիգ եւ հարցուցած իրեն, թէ կը յիշէ՞ իրենց խոստումը: Ի՞նք հարցուց, թէ՞ ան: Զյիշեց: Միայն անդրադարձաւ, որ յանցաւոր մանուկի մը ահուդողով խնդրեց անկէ ցոյց տալ դէպի մայր դարպաս մեկնող ճամբան:

Բարձրացաւ լացուկոծը գեղուհիներուն: Ճիչն ու պոռչտուքը, ողբերն ու աղաղակները գարնուեցան սպիտակ պատերուն, արթնցուցին սպիտակ փոշիները յիշողութեան, փոթորկեցան, փրփուր-փրփուր ջախջախուեցան անորոշութեան խարակներուն, յետոյ տիրեց կաթնասպիտակ խաղաղութիւն մը: Անդորր լռութիւն մը եւ առաջին արքայադուստրը ըսաւ տխրաշէտ, թէ այլեւս չի յիշեր դարպաս տանող ճամբան, որովհետեւ եօթգլխանի վիշապը աչքերուն լոյսը կողոպտեց եւ փոթորիկները յիշողութեան աշտարակները տապալեցին: Ապա աւելցուց, թէ ի՞նչ պարիսպի մասին կը խօսի, որովհետեւ ինք չի յիշեր, թէ նման բան մը գոյութիւն ունի:

Հրաժեշտ տուաւ արքայադուստրին եւ սկսաւ վազել: Աարսափահարներ տեսաւ աջ ու ձախ եւ արիւնը պղտորեցաւ: Աչքերուն դէմ աստ ու անդ կմախքներու ուրլականներ հաջեցին եւ ապրելու ցանկութիւնը կորսնցուց: Անորոշութեան մառախուղներ խտացան հիւսիսէն ու հարաւէն եւ արեւելքի ու արեւմուտքի ճամբաներուն վրայ, հուժկու պատրանքներու հետ պարտութեան դաշինքներ կնքեց եւ ինքզինք սին երազներու դալուկ յոյսերով օրօրեց: Եւ իր դարձը եղաւ տխուր, տարօրէն տխուր ու ողբերգական, որովհետեւ պողոտաները դարձեալ յանգեցան դաւադիր նոր պողո-

տաներու, անապահով փողոցները աւելի անմարդաբնակ եւ ցրտաշունչ փողոցներու մէջ քնացան, թաղերը փուլ եկան ա՛լ աւելի մութ ու դարձդարձիկ գոիհներու մէջ, իսկ գոիհները աննկարագրելիօրէն սարսափազդու եւ դժնետեսիլ ընդյատակեայ բաւիղներու մէջ թաղուեցան:

Հայեացքը սեւեռեց հեռու հորիզոնին՝ փորձութիւններու թակարդին եւ ցնորքի աւերակներուն մէջ իր գալիք օրերուն ամուլ անցեալը որոնեց: Բայց ո՛չ պարիսպը եւ ոչ ալ Արեւադուռը գտաւ: Հրաժեշտ տուաւ իր մարմինին եւ, իր կարգին, անհորիզոն բաւիղ մըն ալ ինք դարձաւ՝ պատուհասներով ականուած մահաստանին կուղպ տափաստաններուն դիմաց:

Յետոյ լսեց երկար լացուկոծ մը, ժամանակէն չատ աւելի երկար ու ահասարսուռ աղաղակներ լսեց, յիշեց իր ձեռնապայտուսակը, իր կեանքի միակ հարստութիւն բառերը յիշեց, մազաղաթներն ու հմայիլները, չարխափանն ու սրբանկարը, թագաւորն ու արքայադուստրը, տիւիտն ու համրիչը, գինք սին երազներով օրօրած հատիկները համրիչին, արձագանգները իր բառերուն, յիշեց, դարձեալ յիշեց, ինքզինք գտաւ եւ...

... Եւ արթնցաւ:

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

(Հատուած՝ «Պարիսպէն անդին» անտիպ քնարավէպէն)



SILHOUETTE -
KHOCHAR



ՆԵԿՐԱՍՈՎԻՆ ԱՆԴԻՆ III - ՈՂՊԵՐԹ ԵԼԻՔԵԿԵՆՆ

ԵՐԿՈՒ ԿԻՆԵՐ

Նոյն ծուռիկ կտուրին տակ երկու ընտանիք էին՝ Անահիտը իր զաւակներուն հետ, եւ քիւրտ Մերալը իր թուրք ամուսինին եւ թերաճ աղջկան՝ Պերեվանին հետ։ Կ'ապրէին հանգիստ դրացնութեամբ. կարծես եղած չըլլային 96-ի ջարդերը, եղած չըլլար Մեծ Եղեռնը։

Բայց 96-ի ջարդերը եղեր էին, Մեծ Եղեռնը եղեր էր ու անոնց միջեւ՝ քանի մը մեծ ու փոքր ջարդեր եղեր էին։

Ասիկա գիտէր Անահիտը, իր մեծ-մայրիկէն լսած, գիտէին Անահիտին երկու զաւակները, եւ գիտէր քիւրտ Մերալը։

Անահիտին եւ Մերալին միջեւ ամբողջ աշխարհ մը կար, որ կը սկսէր Տաւրոսեան լեռներէն, կ'անցնէր Ատլանտեանը, կ'ոլորուէր Յնդկաստանի շուրջ եւ կ'աւարտէր Անատոլուի տափաստաններուն մէջ։ Եւ այդ աշխարհին մէջ ապրող բոլոր բոլոր բոլորը չէին, որ գիտէին ջարդերը՝ մեծ թէ փոքր։

Ծուռիկ կտուրին տակ ծուռիկ պատերով երկու տունիկներ, եւ տունիկներուն մէջ մեծ-մեծ ցաւերով երկու պզտիկ ընտանիքներ, որոնք աշխարհին կը նայէին իրենց պզտիկ բարձունքէն, եւ իրարու կը նայէին վանդակորմին մէջ բացուած պատուհանիկէն։

- Մերալ,- կը կանչէր Անահիտը իր կողմէն։

- Եկա՛յ,- կը ծայներ Մերալը։

Անահիտը կը սպասէր առօրեայի յոգնութիւնը ուսերուն. բայց Մերալը կ'ուշանար։

- Պերեվանին մագերը կը սանտրէի,- կ'ըսէր,- հիւսակներ ըրի, տեսնես ի՞նչ հաստ հիւսակներ, ինչ աղուոր ալ վայլեցին... ..

Մերալը ամբողջ օրը Պերեվանը կը հոգար, կը մաքրէր, կը լուար դէմքը, կը շփէր ոտքերն ու ձեռքերը այնպիսի անսպառ գուրգուրանքով եւ համբերութեամբ, որ միայն մայր մը կրնայ ունենալ:

Անահիտը վաղուց մոռցեր էր Մերալին քրտութիւնը. երկու կիներ էին, որոնք, իրենց տունիկներուն պէս, ուս ուսի տուած կը կրէին կեանքը: Բայց Անահիտը չէր կրնար մոռնալ Ջարդը, չէր կրնար մոռնալ անկէ ծնած ծինային անդոհանքը, որ կարծես նոր ծնւ առեր էր՝ քնանալէն առաջ փառք կու տար իր զաւակներուն առողջութեան եւ համբերանք կը խնդրէր Մերալին համար. յետոյ կը մտածէր՝ չէ, իր խելացի, քաղցրաբարոյ եւ տառապած դրացուհին չէր կրնար որեւէ առընչութիւն ունենալ եկնիչերիներուն հետ...

* * *

Իրիկունը, գործէն դարձին, Անահիտը տուն մտաւ գնումներով բեռնաւորւած եւ շիտակ խոհանոց գնաց: Պատին ետեւէն խօսակցութեան աղմուկ կու գար.

- Զիւրե՞ր, ա՞յս ժամուն,- զարմացաւ Անահիտը եւ անզգալաբար սկսաւ մտիկ ընել:

Մերալին ծայնն էր, անսովոր կերպով բարձր ու բարկացած. որո՞ւ հետ կը վիճէր. ամուսինը այս ժամուն գիշերապահի իր գործին կ'ըլլար արդէն:

Աւելի լարուած մտիկ ըրաւ. Մերալին ծայնը կը շարունակուէր, բայց անոր պատասխանող ուրիշ ծայն չկար:

- Նայէ՛,- կ'ըսէր Մերալը,- հոս նայէ՛. այս ցաւը տուիր, բան չըսի, Դուն ալ գիտես թէ ի՞նչ սիրով կրեցի. բան մը պակսեցուցի՞, ուտել-խմելը տեղն ու տեղօք, լուալ-մաքրելը տեղն ու տեղօք, գուրգուրանքը տեղն ու տեղօք, բայց այս խաղը ա՛լ մի խաղար հետս՝ պիտի մեռնի, կը մեռնի կոր... մայր եմ... Դուն կը դիմանայի՞ր. բայց ի՞նչ կը հարցնեմ, մայր չես, չես հասկնար... այս խաղը մի՛ խաղար... զի՞նք կ'ուզես, ինչո՞ւ, ի՞նչ պիտի ընես... ես սորվեր եմ իրեն հետ խօսիլ, իր աչքերը կարդալ... Դուն ի՞նչ պիտի ընես զինք, ինք իմ օրս է, զիշերս է, մութս-լոյսս է, շունչս է...

Անահիտին մարմնէն սարսուռ անցաւ. ճի՞շդ կը հասկնար արդեօք լսածը. Մերալը կը շարունակէր, բայց արդէն կերկեր ծայնով.

- Այս խաղը մի՛ խաղար... շա՞տ կ'ուզես զինք. ա՛ռ ա՛ռ ա՛ռ ... ահա Քեզի կու տամ... առ ու վազ անցիր ինձմէ... ...

Անահիտ մօտեցաւ վանդակորմին, գլուխը ամբողջութեամբ մտցուց եւ նայեցաւ.

- Աստուած իմ... ...

Իր շարժական մահիճին վրայ փռուէր էր Պերեվանը, սովորականին պէս պարապ նայուածքով, բայց կուրծքը չէր բարձրանար եւ վերջին շրջանին խռպոտիլ սկսող շնչառութիւնը չկար.

- Տէ՛ր Աստուած,- կրկնեց Անահիտ եւ կամացուկ մը կանչեց,- Մերա՛լ...

Կինը, որ ծունկի եկեր էր սնարին վերել, բարձրացաւ անմիջապէս եւ եկաւ Անահիտին քով.

- Անահի՛տ, տուի, աղջիկս Իրեն տուի, ա՛ռ ըսի, այսքանը եթէ շատ տեսար, ա՛ռ, Քեզի թող ըլլայ, տուի, Անահիտ, Պերեվանս տուի... ...

- Ուրեմն մեռաւ,- մտածեց Անահիտը եւ գլուխը ետ քաշելով պատուհանէն, ձեռքը դրաւ կնոջ ուսին,- Մերալ, Աստուծոյ գործն է, թերեւս այսպէս աւելի լաւ է Պերեվանին համար... ...

Երկու կիները պահ մը լուռ մնացին. պահը երկարեցաւ, ծանրացաւ, իւրաքանչիւրը քաշելով իր ետեւէն, տանելով անցեալի վիհերը, պատմութեան խոր-խորատները, հոգիի մութ անտառները.

- Իր մէկ թերաճ աղջկան համար այսքան կը կռուի իր Աստծոյն հետ, չի՞ մտածեր մերկիւնները ինչպէ՞ս դիմացան իրենց գեղեցիկ, զարգացած աղջիկներուն ջարդը դիտելով:

- Ամօթ ինձի,- մտածեց Մերալը,- որ այսքան ու այսպէս կ'ողբամ, մինչ իրենցը... ...

Ջարդը թապու էր Մերալին համար. կը վախճար այդ մասին Անահիտին խօսելու. հապա՞ թէ կորսնցնէր այս օտար ու մութ քաղաքի իր միակ բարեկամուհին. բայց քանի-քանի անգամներ հասկցուցեր էր՝ այո՛, իրաւունք ունիք, եղածը մարդկային չէր... բայց մենք ալ այսօր... կը տեսնես մեզ, ձգեր եկեր ենք, մարդ ինչո՞ւ իր երկիրը պիտի ձգէ, եթէ... ...

Պահը կ'երկննար, կ'երկննար ու կը լեցուէր մահովը այս աղջնակին, կը բազմապատկուէր, կը յորդէր անհաշուելի մահերով, որոնք, տարօրինակ, կը մօտեցնէին երկու կիները, դարձնելով զիրենք եղբրամայրեր, այնքա՛ն անշիրիմ մեռելներու համար լացող երկու մայրեր...

Բայց չէին լար: Դեռ չէին լար: Դեռ...

Մահճակալին կողմէն փոքրիկ հառաչ մը լսուեցաւ ու երկու կիները ցնցուեցան, իրենց հիմները երերացին կարծես: Պերեվանը աչքերը բացաւ:

- Ի՞նչ,- պոռաց Մերալը անակնկալ ու բիրտ ճիչով,- ի՞նչ, չե՞ս առներ... ուզեցիր ուզեցիր ուզեցիր. օրեր շարունակ հսկեցի. շունչը կը թթւնար, կը հատնէր, կը դադրէր. կոտրեցիր զիս ու հիմա ե՞տ կու տաս զինք ինձի. տուեր էի, ինչո՞ւ չառիր, ինչո՞ւ, լայըխ չտեսա՞ր... կը տեսնե՞ս, Անահիտ, ուզեց, հոգիս առաւ մինչեւ աղջիկս տուի Իրեն, պզտիկ Պերեվանս, հիմա ետ կու տայ զինք, ըսէ՛ Անահիտ, ինչո՞ւ, ըսէ՛... այս ի՞նչ դաժան Աստուած է մերը...

Ըսաւ ու ետ դէպի մահիճը գնաց.

- Հա հոգիս, ծարա՞ւ ես, պտուղի ջուր բերեմ, լա՞ւ ես հիմա... ...

Մերալը, մոռցած մէկ վայրկեան առաջուան իր վիճակը, աղջկան հոգածութեան լծուեր էր արդէն:

Անահիտն ալ քաշուեցաւ ցանկորմի պատուհանէն ու նստեցաւ խոհանոցի փայտէ աթոռակին վրայ: Մէկը ըլլար սուրճ մը դնէր կամ զինի մը տար: Անդոհանք մը սկսաւ մեծնալ ներսիդին: Անահիտը, որ ունէր փորձառութիւնը նման վիճակներու, վախցաւ գալիքէն: Միայն վերջերը անդրադարձեր էր, որ երբեք չի կրնար կարդալ Ջարդին նուիրուած գիրքերը, որոնք վերջին տասնամեակին մեծ թափով սկսեր էին հրատարակուիլ, արխիւներէ եւ ականատեսներու վկայութիւններէն քաղելով իրենց պատումը: Չէր կրնար: Ֆիզիքապէս չէր կրնար շարունակել ընթերցումը. նախ ջիղերը կը պրկուէին, ստամոքսը կը գալարուէր ու եթէ շարունակէր, փսխումքի եւ փորհարութեան սուր տագնապներէ ետք, կը մարէր: Վախցաւ: Պէտք էր զսպէր այս անդոհանքը, որ կրնար շատ մեծնալ եւ կլլել զինք: Սորվեր էր, որ նման պահերու պէտք էր ինքզինք յոգնեցնէր ծանր աշխատանքով մը՝ խոհանոցին վարագոյրը իջեցնել ու լուալ, պատուհանները սրբել...

Փոխարէնը սրճեփը լեցուց, դրաւ կրակին ու եռալը սպասեց, սուրճին տփիկն ու դգալը ձեռքը:

Երբեք չէր մտածած Ջարդին մասին. մանկութենէն սորվեր էր երթալ եկեղե-

ցի, ձեռնարկի, մոմավառութեան. ասելի ուշ՝ բողոքի ցոյցերուն կը մասնակցէր. բայց այս բոլորը կ'ընէր վարժանքով, տեսակ մը բնագոյով, խմբուելու, բոլորին միանալու մղումով: Բայց Ջարդին մասին չէր մտածած: Արդէն կարելի ալ չէր մտածել. ինչպէ՞ս մտածել բան մը, որուն ահաւորութիւնը իր հասողութենէն անդին կը մնար:

Կար ատեն, որ այսպէս մտածելուն համար խղճի խայթ կը զգար. բայց «Վերջին Մտքին Յեքիաթը» մեղմացուցեր էր տագնապը. Անահիտը տեսեր էր, որ ուրիշներ ալ կան իրեն պէս, մինակ չէ իր խղճի խայթին հետ...

Քովիններուն գալէն ետք, սկիզբը ամէն գիշեր Անահիտ անկողին կը մտնէր ու բաց աչքերը առաստաղին կը մտածէր թէ ի՞նչ կը նշանակէ այս օտար քաղաքին մէջ թուրքերու եւ քիւրտերու հետ դրացնութիւն ընելը. կը մտածէր թէ ինչպէ՞ս պիտի նայի այդ կնոջ աչքերուն, առանց յիշելու մեծ-մօր սեւ պատմութիւնները. եւ բարեւ պիտի տա՞յ, եթէ հանդիպի անոնց, թէ՞ աչքերը գետնին տուն պիտի մտնէ:

Մերալը ինք առեր էր առաջին քայլը.

- Դրացի՛,- կանչեր էր ցանկորմին այն կողմէն, եւ շա՛տ զարմացած Անահիտին - ասանկ բան կ'ըլլա՞յ Փարիզի մէջ - սկսեր էր պատմել այս քաղաքին դժուարութիւններէն՝ դուն ալ օտար ես,- ըսեր էր,- կը զգաս փոքրամասնութիւններու պատկանելուն վիճակը, առաջին օրէն որ եկանք, գիտցայ որ հայ ես, մերիները հայ դրացիներ ունեցած են...

Տաք-տաք կին մըն էր սա Մերալը՝ աչքերը մեծ, սեւ, տաք ու տխուր, հոգին մեծ ու փոթորկոտ, եւ սիրտը լայն ու կնճռոտած:

Մէկ բան չէր հասկցեր Անահիտ. Մերալ ունէ՞ր իր հոգիին պէս չապրուած յուշերով ծանրացած հոգի... եթէ Ջարդը իր մէջ կը շարունակէր կոտտալ, եւ եթէ Մերալ իրեն պէս կին մըն էր՝ տաք, խորունկ ու փոթորկոտ, ուրեմն անոր հոգին ալ յանցանքով, իր չգործած մեղքերուն խղճահարութեամբ պէտք է ծանր ըլլայ:

Եւ բան փնտռող շան պէս Անահիտ կը հոտուրտար Մերալի խօսքերը, նայւածքը, էութիւնը ամէն անգամ որ հանդիպէին, ամէն անգամ որ Մերալը թափէր իր խօսքին ու եռանդին լաւան:

- Ի՞նչ կը փնտռես,- օր մը Մերալ ընդմիջեր էր խօսքը եւ հարցուցեր Անահիտին:

- Ի՞նչ,- տագնապէր էր Անահիտ՝ ուրեմն կը զգայ վիճակս:

- Մէջս ի՞նչ կը փնտռես,- կրկներ էր քիւրտ կինը:

Բաւական ետքն էր ասիկա, երբ ամէնօրեայ սուրճը եւ սուրճին հետ քակուող ու հիւսուող մտերմութիւնը իրաւունք տուեր էին Մերալին նման հարցում ուղղելու: Նոյն մտերմութեան իրաւունքով Անահիտ պատասխանեց.

- Կը մտածեմ թէ ինչպէ՞ս կը խօսիմ հետդ... ..

Սուրճին կիսալեցուն գաւաթին առջեւ Անահիտ մտածումներու մէջ թաղւած թէւ, կը լսէր Մերալին կերկեր օրօրը եւ աղջկան չղաղրող, մանր հեկեկոցները. երգին մէջ այնքան յոգնութիւն կար եւ այնքան գուրգուրանք, որ Անահիտի աչքերէն արցունքը սկսաւ հոսիլ ինքնաբեր, մինչ դէմքը կը մնար ցաւի ծայրայեղ պրկումի մէջ.

- Տէ՛ր Աստուած, եթէ զիրենք քովս դրիր մեր մեծ ցաւին հատուցում որպէս ... որ մեծ- մօրս փոխարէն ե՛ս տեսնեմ իրենց երկարածգուող տառապանքը ... Տէր Աստուած, չեմ ուզեր ... չեմ ուզեր ... չեմ ուզեր ասիկա...

Ըսաւ ու կեցաւ. բնական էր իր այս ըսածը. ատենը չէ՞ր որ անոնք եւս զգա-

յին, իրենց մորթերուն վրայ եւ զաւակներուն հանդէպ ինչ որ հայ կիներն ու մայրերը, հարիւր հազար հայ կիներն ու մայրերը զգացեր էին: Մեծ-մայրիկը պիտի ներէ՞ր իրեն ասիկա, այս ապրումը, որուն անունը ի՞նչ էր՝ մարդասիրութի՞ւն. նոյն այդ մեծ-մայրիկը չէ՞ր, որ յաճախ, միշտ, կը յիշէր ու կ'ըսէր՝ Աստուած թշնամիիս չիտայ մեր տեսածը...

- Ա՛ս եմք մենք, այսպէ՛ս ենք...

Եւ կրկին կրկին Անահիտի աչքերուն առջեւէն տողանցեց շարանը Շահին կանանոցին՝ ազատ արձակուած ու վերադարձուող. այս մէկ պատկերը միայն այնպէ՛ս տառապեցուցեր է Անահիտը, նախակրթարանի վերջին դասարանին մէջ սորված հայոց պատմութեան այս դրուագը: Նեղացեր էր, բայց չէր հասկըցեր նեղութեան պատճառը: Յետոյ մեծօցեր, ապրեր էր իր բաժին կեանքը ու կրկին չէր հասկցեր.

- Ազնուութի՞ւն ... վեհանձնութի՞ւն ... պարզապէս չեն հասկցած Շահը, չեն հասկցած անոր ժողովուրդը եւ զայն վարող կրօնքը ... չեն հասկցած որ կինն է անոնց տկար կէտը եւ կինն է միակ զէնքը անոնց դէմ. մեր թագաւորը, սպարապետը, մեր աւագանին չէի՞ն լսած Տրովադայի Դելենին մասին ... բայց ա՛յս ենք, ես ալ միասին.....

Անահիտ յանձնուեցաւ ծիներով իրեն հասած ժառանգութեան՝ ազնուութիւն, վեհանձնութիւն եւ անդոհանք, ամբողջութեամբ գլխագիր ԱՆԴՈՂԱՆՔ, որովհետեւ հակառակ իր «ինքնադաստիարակութեան», մնացեր էր նոյնը:

Մէկ պատով բաժնուած երկու կիները, երկու տարբեր ցաւերու յանձնուած, նոյն արցունքը կու լային արդէն:

Շարունակեց նստած մնալ, ականջը Մերալի մեղմացող օրօրին:

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՍԵԱՆ

Հալէպ 03/ 05 / 08



ՏԵՍԱՐԱՆԷՆ ԱՆԴՈՂԱՆՔ - Ի ՂԿԵՆԻՆ ԴԵԼԵՆԻՆ



ՈԳԻՆ

Գրսից կռուի աղմուկ, բղաւոցներ եւ հայհոյանքներ լսեցին: Միրիկը լարուեց, ձեռքը բռնունցքուեց, վեր թռաւ տեղից՝ պատրաստ դուրս նետուելու:

- Գործ չունես, վեր ընկի տեղդ,- սաստեց մայրը:

Տղան չպատասխանեց, բայց հագիւ հր զսպում իրեն: Այնտեղ ընկերները ծեծում ու ծեծւում էին:

- Ամօթ ա, ա՛յ մէր, ախր, մարդիկ ի՞նչ կ'ասեն, դու անհոգ կաց, ինձ բան չի պատահի:

- Խնդրում եմ, տղա՛ս, հէրդ չկայ, իմ յոյսը դու ես,- թախանձագին մրմնջաց մայրը եւ գոգնոցի փէշով աչքերը սրբելով՝ անհանգիստ նստեց թախտի ծայրին, ուր միշտ բազմում էր հայրը՝ գործից յոգնած տուն վերադառնալուց ու թեթեւ ընթրելուց յետոյ. խոնջացած թիկն էր տալիս գորգապատ բարձին ու ծխում իր ձեռքով պատրաստած գլանիկը: Փոքր տարիքում, թախտի վրայ հօր կողքին նստելն ու նրա պատմածներին ականջ դնելը, իր ամենասիրած հաճոյքն էին: Քանի անգամ, նստած տեղը քնել էր եւ առաւօտեան աչքերը բացել անկողնում: Հօր պատկերաւոր պատմութիւնները շարունակւում էին երազում եւ ամուր դաջւում իր հոգու ամենանուիրական անկիւններում:

Հայրը պատմում էր, թէ ինչպէս տարիներ առաջ, երբ ինք դեռ պատանի էր, ոչ մի թուրք չէր համարձակւում անցնել իրենց թաղի գլխաւոր հայանուն փողոցով: Մի անգամ յայտնի փորագրիչ, պստիկ-մստիկ կազմուածքով ըմբոստ Խնձոր Հրայրը,

որը, հօր ասելով, յետոյ Հայաստան էր ներգաղթել ու յետոյ ձէնը Սիրիոյից էր եկել, այնպէս էր ղնգստել քաղաքի նշանաւոր ըմբիշ Աղբաշին, որ համբաւը գնացել ու հասել էր մինչեւ հեռու թաղերը: Աղբաշի վիզը, - նկարագրում էր հայրը ձեռքերի օգնութեամբ, - ասես ածիլուած, սեխաձեւ գլխի շարունակութիւնը լինէր, ծոծրակին՝ բլրաչափ ծալքեր... Էդ իւրօրինակ աժդահայի հէնց միայն խնամքով սղալած թաւ պելներն ու պլշտած աչքերի խիստ արտայայտութիւնը բաւական էին, որ նայողի սիրտը ան ընկնէր, հագնում էր կոշտ կտորից կարուած երկար սպիտակ աբա եւ քայլելիս, թեւատակի փքուած մկանների պատճառով, թեւերը հեռու էին մնում կոճղանման իրանից: Տրամադիր պահերին՝ հայրը, վեր էր կենում թախտից ու քայլում՝ նմանակելով Աղբաշին: Ինք թուլանում էր ծիծաղից, իսկ մայրը մատները չռած՝ չանչում հօրը:

Հօր պատմելով՝ Աղբաշը գրագ էր բռնել ընկերների հետ երկու թումանի վրայ, որ մենակ՝ անարգել կը մտնի հրմանինների թաղն ու անցնելով գլխաւոր փողոցով՝ մէկ ժամ կը կանգնի, մեյդանչայում... Սակայն նրա յաղթական երթը ընդհատուել էր փողոցի սկզբում գտնուող փորագրիչ Խնձոր Հրայրի խանութի առջեւ: Փոքրամարմին հայր ցցուել էր նրա դէմ ու պահանջել՝ հեռանալ: Կատաղած Աղբաշը ուզել էր մէկ հարուածով տապալել յանդուգն հրմանուն, բայց նա ճարպկօրէն խոյս էր տուել ու բռնեցքով հարուածել Աղբաշի քթին: Հարուածը եղել էր այնքան դիպուկ, որ քթից արիւն էր բացուել: Շարունակելով նոյն մարտավարութիւնը՝ Խնձոր Հրայրը Աղբաշին դէմքը դարձրել էր ծեծած քիւֆտա: Ամէն անգամ հայրը Աղբաշի խայտառակ փախուստը նկարագրելիս լիաթոք ծիծաղում էր: Ով տեսնէր աչքերին չէր հաւատայ, առջեւից օրօրուելով ու հազիւ հաւասարակչութիւնը պահելով՝ փախչում էր հսկամարմին արիւնլիկ դարձած ըմբիշը, իսկ ետեւից քացիների հարուած տեղալով, թռչկոտելով նրան հետապնդում էր հետաքրքրասէրների ամբոխով չրջապատւած պստիկ-մստիկ Խնձոր Հրայրը... Եւ աւելացնում էր, որ Հրայրը խոհեմ չէր գտնուել, որովհետեւ եթէ Աղբաշը կարողանար ճանկել նրան բանը բուրդ կը լինէր... Հայրը պինդ գրկում էր իրեն, ցաւեցնելու չափ սեղմում կրծքին եւ ասում. «Այ, էսպէս»... Մայրը յաճախ նախատում էր հօրը. «Էլ բան չգտար սովրեցնես լակոտին»: Հօր բազուկները պողպատէ ամրութիւն ունէին: Միրիկը որոշել էր մեծանալուց յետոյ մարզուել, որպէսզի հօր նման գոյգ բազուկները դէպի ներս ծալելիս՝ թեւերի վրայ բլրաչափ գնդեր գոյանային...

Տարիներ անց, վերացաւ տաբուն, թուրքերը ոտք դրին իրենց թաղը, շատացան, հաստատուեցին պապենական բոյնը լքած հայերի տներում, գրաւեցին հայերի խանութները: Սկսուեցին նոյնիսկ բարի դրացիական յարաբերութիւններ, երկուստեք խուսափում էին հին դարմանը քամուն տալուց: Այնուամենայնիւ, խստօրէն պահպանում էին ազգային աւանդոյթները՝ ոչ մի հայ տղայ կնութեան չէր առնում թուրքի աղջկան, եւ՝ հակառակը: Իսկ իրիկունները մեյդանչան մնում էր հայ տղամարդկանց հաւաքատեղին: Ինչեւէ, երբեմն չնչին պատրուակներով՝ դեռեւս շարունակում էին արիւնալի բախումները: Երբեմն նոյնիսկ լինում էին վիրաւորներ. ճեղքուած գլուխները դարմանում էին հչի ճարպ քսելով, վնասուած յօդերն ու ոսկորները՝ ոչխարի դմակ եւ ձու ղնելով: Մնողները անհանգստանում էին, ոմանք՝ նախանձում, ոմանք՝ քաջալերում...

Եւ հաճախ, նորից վերսկսուել էին փողոցային տուրուղմփոցները, որի գլխաւոր շարժառիթը Ռեզա Ռեշտին էր: Ոչ ոք չգիտէր, թէ ո՞վ է՝ այդ բարձրահասակ, նիհար, զանգուր մազերով, թուխ, բարետես երիտասարդը, որ օրերից մի օր յայտնուեց մեյդանչայում յանկարծակի եւ մեն-մենակ կանգնեց կաթնամթերք վաճառող հայախօս

Դառնալի խանութի առջեւ, ճիշդ այնտեղ, ուր իրիկունները հաւաքւում էին թաղի հայ տղերքը: Ոչ ոք չգիտէր նրա գալու բուն նպատակը: Պարզուեց, որ նա թրքերէն չգիտի, եկել է ծովափնեայ մի քաղաքից, անունը՝ Ռեզա Ռեշտի: Պարզ չէր՝ իր այդ յատկանիշնե՞րի, թէ՛ բարեկիրթ պահուածքի պատճառով, սկզբում ոչինչ տեղի չունեցաւ: Սակայն հետզհետէ նա դարձաւ հայ տղաների աչքի փուշը, որովհետեւ Ռեզա Ռեշտին ոչ միայն անամթաքար անտեսում էր նրանց գոյութիւնը, այլեւ լկտիաբար «խեթում էր» դպրոցից տուն վերադարձող աղջիկներին: Շշուկներ տարածուեցին, որ «հարուստի լակոտ» է, մեծ «խումբ» ունի, որոնք գինուած են դանակներով: Լուրերը գալիս էին Բելոչկայից: Բելոչկայի թաղի տեղեկատուութեան կենտրոնն էր, որ առաւօտից մինչ իրիկուն կանգնած էր լինում իր տան դրան առջեւ ու երբեւէ չէր լռում: Յայտնի չէր, թէ նրան ինչպէս է յաջողւում հանգամանօրէն հաւաքագրել օրւայ ամենահրատապ նորութիւնները. երբ «մինի-ժուպ»ը մոտա դարձաւ, նա արդէն գիտէր ու «հաղորդեց» կարճ փէշ հագած եւ մինչեւ իսկ տնից դեռ ոտքը դուրս չդրած աղջիկների անունները՝ անխտիր:

Բելոչկայի տարածած ցնցող լուրը ռումբի նման պայթեց ու տակնուվրայ արեց ողջ թաղը. Ռեզա Ռեշտին սիրահարուել է Նելլին... Լուրը կայծակի արագութեամբ մտաւ տները, դուրս եկաւ ճոխացած, ալիք տուեց, ներխուժեց դպրոց, մարզադաշտ, ակումբ, աներեւոյթ շղարշի պէս պարուրեց մարդկանց ուղեղներն ու նոյնիսկ մի կողմ մղեց՝ այդ օրերին, թեքզաս նահանգում ԱՄՆ-ի պրիզիտենդ Ջոն Քենեդիի ահաբեկման լուրը: Իրարամերժ կարծիքները, դատողութիւններն ու ենթադրութիւնները չէին դադարում, որով՝ Նելլի եւ Ռեզա Ռեշտիի սիրոյ պատմութիւնը երբեք չէր կորցնում իր թարմութիւնը:

Այնու ամենայնիւ, ընդհանուր մօտեցումն այն էր, որ սէրն ու սիրահարուածութիւնը դժուար թէ միակողմանի լինի եւ Նելլին ինչ որ ձեւով հրահրել ու շարունակում է հրահրել Ռեզա Ռեշտիին: Սահման չճանաչող մարդկային երեւակայութիւնը չարամտօրէն ու առանց կշռադատելու հետեւանքները, մոգոնում էր այնպիսի հրէշաւոր ու անհեթեթ պատկերներ, որոնք գուցէ ճակատագրական հետեւանքներ թողնէին հէզ աղկկայ կեանքում: Ասում էին, որ Ռեզա Ռեշտին առաջին անգամ Նելլիին տեսել է քաղաքից դուրս՝ մերձակայ գրօսայգիներում կազմակերպուած հայոց դպրոցի հերթական արշաւներից մէկի ժամանակ եւ, «նետը կպել է սրտին»...

- Մի հաւատա՛ չար լեզուներին,- յաճախ ասում էր բարի մայրը,- Նելլին, էդպիսի մէկը չի, չի սիրի էդ տիպին: Վա՛յ, էս մարդի՛կ, հողեմ գլուխները...

Այլ էր իր թաղի «ղէյրաթով» տղաների մօտեցումը: Իրենք չէին խորանում զգացմունքային նրբութիւնների մէջ: Խնդիրը պարզ էր օրուայ լոյսի պէս. միաժամանակ ոտնահարուել էր թաղը եւ հայ աղջիկների պատիւը... Ուստի Ռեզա Ռեշտին պիտի չքուի անյապաղ:

Անցաւ մի քանի օր, բայց ոչինչ տեղի չունեցաւ: Ռեզա Ռեշտին ամէն օր գալիս էր ճիշդ ժամին վայելչօրէն հագնուած ու անտարբեր շրջապատին՝ կանգնելով նոյն վայրում սպասում էր հայոց դպրոցի վերջին գանգին: Իսկ Նելլին, սուսուփուս, գլուխը կախ անցնում էր Ռեզա Ռեշտիի առջեւից ու փութկոտ քայլերով տուն շտապում:

Մի րիկը չէր սիրում, երբ թաղի կանայք գրպարտում էին Նելլին: Մի օր փողոցով անցնելիս նա ակամայից լսեց հետեւեալ խօսակցութիւնը.

- Տեսա՞ր, աչքի տակով ոնց նայեց,- ասողը «ժեշտանչիկ» Սմբատի կինն էր, որ կանգնած գրուցում էր հարեւանուհու հետ:

- Հա, ես էլ նկատեցի, դեռ նայելը հէջ, յօնքի շարժումով մի բան հասկացրեց տղային,- ետ չմնաց հարեւանուհին:

- Չէ՞ք ամաչում,- բարկացած միջամտեց Միրիկը,- ի՞նչ էք կպել խեղճ աղջկան:
- Վա՛հ, վա՛հ, հէնց միայն դու ես պակաս, որ ասպետութիւն խաղաս հդ ուռած ջա-
նովդ,- շչպուեց «ժեշտանչիկ» Սմբատի կինը ու փքուած հեռացաւ:

Դրա յաջորդ օրը, լուր տարածուեց, որ Միրիկն էլ անտարբեր չէ «հդ կապը կտրած քածի հանդէպ»: Մի օր էլ Նելլին, իրենց նեղ փողոցով անցնելիս, ուղիղ նայեց Միրի-
կի աչքերի մէջ ու ժպտաց: Միրիկը երախտագիտութեան հետ մէկտեղ ինչ որ անծա-
նօթ կայծեր որսաց Նելլիի հայեացքում, որոնք նրան հանգիստ չէին տալիս մենու-
թեան պահերին...

Նելլին տարիքով մեծ էր թէ՛ իրենից եւ թէ՛ իր համադասարանցիներից: Թաղում
նրանից աւելի սիրունները կային: Գրաւիչ էին խոշոր սեւ-սեւ աչքերն ու արդէն գար-
գացած անթերի կազմուածքը, որով նա լիովին տարբերուում էր իր դասընկերուհիներ-
ից: Հարթ սեւաթոյր մազերը թափուում էին ուսերին ու ծածկում մէկ աչքը: Նա յա-
ճախ աջ ձեռքի նազելի շարժումով ետ էր տանում մազերն ու կոճկում դպրոցական
մուգ կապոյտ գոգնոցի վերի կոճակը, որը բացւում էր նրա լիքը կրծքի ճնշումից: Յո-
րենագոյն մորթը հարթ էր: Նա հագուադէպ էր մասնակցում թաղի երկսեռ հաւա-
քոյթներին, բայց լաւ երգում ու պարում էր:

Սակայն, ամէն բան մէկ կողմ, տարօրինակ էր Նելլիի հմայիչ ժպիտը: Միրիկը չէր
հասկանում՝ ի՞նչ գորութիւն կայ թաքնուած այդ ժպիտի մէջ, որ այդչափ ազդում ու
ցնցում է իրեն: Երբ Նելլին ժպտում էր, դէմքը փոխւում, գեղեցկանում էր, դառնում
էր ուրիշ մարդ: Չէ, ինչ որ առեղծուածային, կախարդիչ բան մը կար այդ աղջկայ
ժպիտի մէջ...

Չնայած տարածուած լուրերին, Նելլիի հայրն ու մայրը ցոյց չէին տալիս որեւէ
լուրջ հակազդեցութիւն: Խօսում էին, որ հայրը յորդորել էր գործ չունենալ այդ «այ-
լազգի» տղայի հետ, որպէսզի խնդիրը չբարդանայ: «Մի քանի օր կը կանգնի, կը յոգ-
նի, կը գնայ,- յուզուած ասել էր նա Միրիկին:- Նելլին գործ չունի նրա հետ, սուտ է,
դուք էլ մի խառնուէք ու մի խաղացէք աղջկայ անուան ու պատուի հետ...»

Բայց Ռեզա Ռեշտին գնալու մտադրութիւն ցոյց չէր տալիս: Լցւում էր համբերու-
թեան բաժակը եւ չուշացաւ առաջին ընդհարումը, որին յաջորդեցին նորերը: Միրի-
կը Նելլիի հօրը տուած իր խոստմանը համաձայն, եւ մօրը չվշտացնելու համար, որ-
քան հնարաւոր էր իրեն հեռու էր պահում բախումներից կամ հանդէս գալիս «խօս-
քով գլուխը մտցնելու եւ հեռացնելու» գաղափարի օգտին, աշխատում էր խաղաղեց-
նել բորբոքուած կրքերը՝ յարուցանելով ընկերների գարմանքն ու վրդովմունքը:
Նրանցից ոմանք խէթ-խէթ էին նայում իրեն մարգաղահիւճում, ուր կանգնած հայե-
լու առջեւ ջանասիրաբար մարզւում էր: Պրկուած դրութեամբ Միրիկի թեւերի հաս-
տութիւնը հաւասար էր վզի կամ գօտկատեղի տրամագծին: Իր նման «հսկաներ»՝
մէկը ասորի Վալտդիան էր ու մէկն էլ Խեւ Մելիքը, որը մի օր թեւերը պարզած ու
բռնած շլինքներից՝ գետնից կտրել ու բարձրացրել էր երկու թրքի՝ եւ ապա գլուխնե-
րը զարկել մէկը միւսին:

Գրսից լսուող ձայները չէին դադարում:

- Մեղք են տղերքը,- սիրտը մղկտաց...

Միրիկը հին ցածլիկ պահարանի հայելու մէջ մի պահ տեսաւ իրեն, իր հուժկու թե-
ւերն ու մորթի տակ խլրտացող շարժուն մկանները: Էլ ինչի՞ պէտք է սրանք, եթէ ին-
քը վախկոտի նման վեր է ընկել տանը ու մատը մատին չի խփում...

- Ա՛յ մէր, ես չեմ խառնուի, գնամ, իմանամ ինչ խաբար է...,- ասաց նա վճռակամ:

- Ինքդ գիտես, որդիս, գնա՛, գնա՛, գնա տեսնեմ, ոնց չես խառնուելու...

Միրիկը դուրս նետուեց առանց նայելու մօր կողմը. խիղճը հանգիստ չէր, բայց մօ-



տալուտ վտանգի գրգիռը խթանում էր նրան ու արտասովոր հաճությամբ լցնում էր թիւնը:

Մայրը ակամայից մօտեցաւ պատուհանին ու բացեց փոքրիկ լուսանցքը: Գրսից լսուող ձայները մի պահ դադարեցին: Լսում էր միայն բարձրաձայն խօսակցութիւն, որի մէջ նա հեշտութեամբ տարբերում էր որդու առնական ձայնը եւ արտատրորոփ սպասում, թէ ինչով կ'աւարտուի այդ գզուրուտոցը: Պա երկար չտեւեց, որովհետեւ խօսակցութիւնը փոխուեց փոխադարձ հայհոյանքների. յետոյ լսուեց հարուածների ու քայլերի ձայն, ցաւի տնքոցներ, բացականչութիւններ, որոնք ինչպէս սկսուել էին յանկարծակի, այնպէս էր աւարտուեցին միանգամից: Տիրեց չարագուշակ լռութիւն:

* *
*

Միւրիկ աչքերը բացեց թթուածինի արհեստական ներմուծման թափանցիկ թաղանթի տակ ու նայեց շուրջը: Ինչ որ գաղջ հոտ խտրատացրեց ռուսները: Շուրջը լուսաւորուած էր աղօտ լոյսով: Գլուխը ծանր էր, դժուար էր շնչում: Յիշեց, որ կռուից յետոյ էլ շունչը կտրուում էր ու աչքերը սկսեցին սեւանալ... Վերջին պահին, ուզեց կառչել բռնցքամարտիկ Արոյի ոտքից, բայց ընկաւ բերանը հպելով նրա պայտած կօշիկին... նա հասցրեց նշմարել քիչ հեռու ընկած ձիան թրիքը, որից յետոյ էլ ոչինչ չէր յիշում...

Գլուխը հագիւ թեքեց ու տեսաւ մօրը՝ դէմքին տառապալից արտայայտութեամբ, աչքերը փակ՝ նստած մահճակալի կողքին դրուած աթոռին: Խանդաղատանքի հետ

միախառնուած խղճահարուածիւնը այլք տուեց ու ողողեց ողջ հուծիւնը: Ինք չէր ցանկանում կռուել, նոյնիսկ փորձեց խաղաղեցնել բորբոքուած կրքերը, սակայն տեսնելով Աբոյի քթից հոսող արիւնն ու Խաչիկի խեղճացած դէմքը, կորցրեց ինքնատիրապետումը, հայհոյեց ու առանց իրեն հաշիւ տալու գրոհեց միանգամից: Իր մէկ կամ երկու ուժգին հարուածներից յետոյ թուրքերը ետ քաշուեցին ու փախան դէպի մեյտանչա: Նրանք հինգ հոգի էին՝ իրենք՝ չորս. կարող էին բաւականանալ տուած ջարդով, բայց ոգեւորուած թուրքերի նահանջից, սկսեցին հետապնդել նրանց: Իսկական ընդհարումը տեղի ունեցաւ մեյտանչայում: Կռուին խառնուեցին նաեւ Ռեզա Ռեշտիի երկու թիկնապահները: Միրիկ հարուածում հր անխնայ: Յետ չէին մնում նաեւ իր ընկերները: Կռուի տաք պահին, Միրիկ սուր այրոց զգաց մէջքին, բայց ուշադրութիւն չդարձրեց: Դրանից յետոյ թուրքերը յանկարծ անհետացան: Ի՞նչ էր պատահել իրեն, ինչո՞ւ էր պառկած այս տարօրինակ վրանի մէջ: Նորից նայեց մօրը.

- Այ մէ՛ր, այ մէ՛ր,- Միրիկը հագիւ լսեց իր ձայնն ու նորից շունչը կտրուեց Բնագդական մղումով, թէ՞ որդու ձայնը լսելով մայրը վեր թռաւ աթոռից ու վրանի դուռը կիսաճեղք անելով՝ յուզուած շշնջաց.

- Ի՞նչ ա, բալէս, մէրդ քեզ դուրպան...

... Մօր կցկտուր պատմածից պարզուեց, որ իր գնալուց յետոյ նա չէր կարողացել «պարտակուել» տանը, չալը գցել էր ուսերին ու դուրս եկել փողոց, ուր ոչ ոքու չէր հանդիպել: Յետոյ գնացել էր մեյտանչա ու տեսել Միրիկին ոտքի վրայ, «հարբածի նման օրօրուելիս ու գետին ընկնելիս»:

- Մէջքդ լրիւ արուն էր, ոտքերս թուլացան,- կերկերուն ձայնով պատմում էր մայրը:- Տղերքը օգնեցին՝ քեզ Փայտոնով բերինք էստեղ...

- Էստե՞ղ, որտեղ...

- Քաղաքի միակ «խելքը գլխին» ամերիկեան հիւանդանոցը,- պատասխանեց մայրը,- էլ ուրիշ որտեղ: Դոկտոր Սթուարթին ասաց, որ մահից ես փրկուել, որովհետեւ դանակի սայրը մագաչափ տարածութեամբ անցել է սրտիդ կողքից ու վիրաւորել միայն թոքդ:

- Այ մէր, բա էստեղ թանկ չի՞...

Սա առաջին միտքն էր, որ աչքերը բացելուց յետոյ անցաւ Միրիկի գլխով: Իրենց վիճակը՝ վիճակ չէր...

- Էդ, ի՞նչ կարեւոր ա, այ բալա ջան, ջանդ՝ սաղ: Դու միայն շուտ լաւացիր, Աստուած օղորմած է... Դոկտոր Սթուարթին ասաց, որ շունչդ շուտով կը կարգաւորուի ու էլ, «օքսիթենի» պէտք չի լինի:

Միրիկի գլխում խառնաշփոթ էր: Ասես երազի մէջ յիշում էր, որ թուրքերի փախուստից յետոյ տղերքը, խօսքերը մէկ արած, վագեցին նրանց ետեւից: Ինք տատանւում էր, չապիկը շտկեց ու սկսեց նոր գնած շալվարը մաքրել ձեռքի ափով: Զգիտէր գնա՞ր, թէ՞ վերադառնար տուն: Սակայն նոյնիսկ հիմա էլ համոզուած է, որ այդ ընկերների կանչերն ու հրահրումները չէին, որ պատճառ դարձան միանալու նրանց: Ի՞նչ էր դա, իր հոգու խորքում նստած այդ աներեւոյթ «բանը», որը երբեք հանգիստ չի տալիս իրեն: Զէ՞ որ ինք կարող էր տանը մնալ, չվշտացնել ծերացած մօրը ու ոչինչ էլ չի պատահի: Ինչո՞ւ չի կարողանում զսպել իրեն:

Միրիկը մի պահ փակեց աչքերն ու տեսաւ հօրը, կանգնած ողջ հասակով, ժպտադէմ իրեն նայելիս: «Տեսնես ի՞նչ կ'ասէր, եթէ կենդանի կը լինէր»...

- Ժամը քանի՞սն ա, ա՛յ մէր:

- Դիչերուայ չորսն ա, քնի՛ր բալես, լուսը կը բացուի բարին հետը...

- Բա տղերքն ո՞ւր են:

- Քեզ բերելուց յետոյ, մինչեւ ուշ գիշեր հստեղ էին, քիչ առաջ գնացին: Քնիր, քնիր, որ շուտ լաւանաս, ախր, ա՛յ բալէս... Մայրը չչարունակեց ու լաց եղաւ հեծկըլ-տալով:

- Կը ներես, ա՛յ մէր, ձեռքս չէր...

- Իմանում եմ տղա՛ս, հանգիստ կաց...

- Վաղը տուն կը գնա՞նք...

- Ձէ բալէս, դուկտոր Սթուարթին ասաց, որ դեռ մի երկու շաբաթ պիտի պառկած մնաս, մինչեւ ներսի արուներ կտրուի, շունչդ տեղը գայ...

«Մի երկու շաբաթ...»

Ծանօթ հայուհի բուժֆոյրը ներս մտաւ, նայեց սարքերին, չափեց ջերմութիւնը եւ փակեց վրանը:

- Ինչքա՞ն ա, աղջիկ ջան:

- Քառասունի մօտ ա, Աննա մօրքուր, կ'անցնի...

Միրիկ փակեց աչքերն ու նորից տեսաւ հօրը, այս անգամ Նելլիի ձեռքը բռնած: Երկուսն էլ նայում էին իրեն ու ժպտում: Յետոյ հայրը ձուլուեց մշուշին ու աստի-ճանաբար անյայտացաւ: Մնաց միայն Նելլին, եւ սկսեց մօտենալ իրեն կախարդական ժպտը թառած բալագոյն շրթներին:

- Ես քեզ սիրում եմ, Միրիկ, արի փախչենք...

- Փախչե՞նք, ո՞ւր գնանք...

Նելլին աւելի մօտեցաւ ու աղջկական սպիտակ, փափուկ ափերով բռնեց Միրիկի ձեռքը: Նելլին երբեք այսքան մօտ չէր եղել իրեն: Ինք պարզ զգում էր նրա մազերի բոյրը, սրտի հեքը, կանացիութիւնը... Երջանկութիւնից Միրիկի շունչը կտրուեց ու արհամարհեց մէջքի տանջող ցաւը:

- Ուր պատահի, միայն հեռանանք հս անիծուած քաղաքից... Ռեզա Ռեշտիից...

Նելլին էլ չէր ժպտում:

- Նելլի՛...

- Խնդրում եմ, Միրիկ, տա՛ր ինձ, փրկի՛ր ինձ, ես քո կիներ կը դառնամ...

Նելլիի խոշոր սեւ աչքերից ցած սահեցին մարգարտեայ կաթիլներ: Միրիկի գլխում անվերջ պտըտւում էր այն տանջող միտքը, որ ինք տարիքով փոքր է Նելլիից, բայց ամաչում էր ասել: Նելլին թեւերն օդակեց Միրիկի մէջքին ու գլուխը դրեց՝ հօր կրծքին...

Նելլիի թեւերի հպումից Միրիկը ուժեղ ծակոց զգաց մէջքի մասում ու նորից շունչը կտրուեց... Չնայած ուժեղ ցաւին Միրիկը ցանկանում էր, որ Նելլին գրկած մնայ իրեն, սեղմուի աւելի ամուր...

- Ես երեխաներ կը բերեմ քեզ համար,- շշնջաց Նելլին Միրիկի ականջին...

- Նելլի՛, Նելլի՛...

Միրիկը աչքերը բացեց ու նայեց շուրջը: Ասես փնտռում էր Նելլիին: Տեսաւ մօրը եւ թուաց, թէ նա զարմացած ու քննախոյզ հայեացքով նայում է իրեն...

«Մօրս կը տանեմ ինձ հետ, մեղք ա... բա՛...»

Յետոյ մտածեց, որ Նելլիից, անշուշտ, արու զաւակ կ'ունենայ եւ անպայման «լա-կոտին» կը մարզի ու կը սովորեցնի ըմբշամարտի ու ձեռնամարտի բոլոր նրբու-թիւններն ու գաղտնիքները...



ՅԱՄՏԻԿ ՍԱՌՅԵԱՆ

ՅԱՄԵՑՈՂ ԳԱՐՈՒՆԸ

Այդ դժուար տարիներին անգամ վեհափառության պատիւը դեռ շարունակում էր մնալ իր վեհության պատուանդանին:

Գարունը յամենալով էր գալիս: Տրտաշունչ ձմեռը դեռ զգացնել էր տալիս իր խստադէմ ներկայութիւնը:

Ծաղկազարդի երեկոն էր: Իր հին փառքից ու պաճուճանքից մերկացած, ասես անպատեհ ժամին յայտնուած մարդկային մի խլեակ, երերուն քայլուածքով ու դէմքի մռայլ արտայայտութեամբ վեհարանի հին շէնքից իջնում էր Մայր Տաճար:

Կրօնական հալածանքների ու անհաւատութեան լայնատարած այդ ժամանակաշրջանում աղօթքի այդ տունը մնացել էր կանգուն՝ իբրեւ կենդանի վկայ լեռնակուտակ անարդարութիւնների եւ անցեալի տխրահռչակ դէպքերի: Այդ բոլորով հանդերձ նա վկան էր նաեւ խիզախ մաքառումների ի խնդիր քրիստոնէական հաւատի եւ ազգային սրբութիւնների անաղարտ պահպանման: Նոյ-

նիսկ նշուած այդ դժբախտ օրերին դեռ գոյութիւն ունէր հրաշքի զօրութիւնը, քանզի բոլորովին չէր հանգել Մայր Տաճարում պլպլացող հայ ժողովրդի հաւատի սրբազան կանթեղը:

Ժամանակի ոգուն անյարիր, զառամեալ եկեղեցականների այդ նուաղկուն թափօրի առաջնորդն էր նոյնինքն Ամենայն հայոց Գեորգ Զ կաթողիկոսը, որի դէմքի զսպուածութիւնը, տառապանքից ու սովից կմախք դարձած կերպարանքը, դէպի հեռուները սեւեռուած թախծոտ նայուածքը ներկայացնում էին պատկերը մի գերբնական, անդրաշխարհային անձնաւորութեան, հին դարերի խորքից եկած ու միայն իրեն յայտնի ուղղութեամբ գնացող մի յաւիտենական ու յաւերժախորհուրդ ճամբորդի:

Խումբը մուտք գործեց Մայր Տաճար, ուր, ըստ աւանդութեան, իջել էր Քրիստոս: Ի յիշատակ այդ իրողութեան տաճարի կենտրոնում կանգնեցուած էր մարմարեայ մի յուշարձան՝ յայտնի Իջման Ս. Սեղան անունով, որի շուրջբոլորը, գեղակերտ սիւների վրայ բարձրանում էր մի փառաւոր գմբէ՝ գունագեղ նախշերով ու Աստուածամօր մանրանկարով (այն այսօր իր տեղում չէ): Քառանկիւն սեղանը խորհրդանշում էր երկիրը, իսկ սիւների վրայ հանգչող գմբէ՝ երկնքի նախադուռը: Սեղանից դէպի երկնասլաց գմբէք եւ այնուհետեւ դէպի աստուածային անհունութիւններն էին բարձրանում հաւատացեալների մաքուր սրտերի բոլորանուէր աղօթքն ու պաղատանքը:

Հայրապետը տեղ գրաւեց Ս. Սեղանի դիմաց: Նրա շուրջը կանգնած էին մի քանի շփոթահար եկեղեցականներ, որոնցից յատկապէս երեքն ապրում էին իրենց կեանքի մայրամուտը, իսկ մնացածները բոլորն հալածանքների օրերին հրաժարուել էին հոգեւոր կարգից, այլապէս իրենց բազմաթիւ պաշտօնակիցների նման պիտի աքսորուէին կամ էլ գնդակահարուէին: Բայց երբ մի քիչ մեղմացել էին պետութեան կողմից գործադրուող անմարդկային ճնշումները հոգեւորականների վրայ, կաթողիկոսը համոզել էր վերջիններին վերադառնալ իրենց առաքելութեանը: Այդուհանդերձ նրանց մտքից չէր հեռանում ձերբակալուելու վախն ու կասկածը:

Տաճարի ծախակողմեան դասում տեղ էին գրաւել հազիւ մի քանի տարի առաջ վերաբացուած Հոգեւոր Ճեմարանի սակաւաթիւ սաները: Կային նաեւ մի քանի աղօթող կանայք, որոնց միայն մահը կարող էր բաժանել այդ սրբավայրից: Այնքան զօրաւոր էր նրանց կապը Աստծոյ հետ, որ այս աշխարհի խաւարչտին ուժերը ոչնչով չէին կարող ազդել նրանց հաւատի վրայ: Նրանք մեծ անձկութեամբ սպասում էին Աստծոյ հրաշքին, այնպիսի մի զարնան բացուելուն, որ իր հետ պիտի բերէր մեղմաշունչ զեփիւռների կախարդիչ հրճուանքը: Բայց այդ զարունը շատ էր ուշանում:

Իջման Սուրբ Սեղանի առաջ կանգնած՝ կաթողիկոսի փակ շուրթերը դժուարութեամբ շարժուեցին: Ոչ ոք չէր ակնկալում, որ նա մի բան կ'ասի, ոչ ոք չէր կարծում, թէ նա այդ պահին մտքով հետեւում էր եկեղեցական արարողութեանը: Լսուեց նրա առնական խրոխտ ձայնը.

- Երգի՛ր, տէր Նիկո՛լ, երգի՛ր...:

Տէր Նիկոլը, Էջմիածնի այդ ամենաձայնեղ շարականագետը, լսելով իր անունը, սթափուեց մտածմունքներից, եկաւ խոնարհուեց հայրապետի առաջ, ապա շրջուեց դէպի Իջման Ս. Սեղանը, ծնրադրեց այնտեղ, խոր շունչ քաշեց եւ իր աստուածատուր ձայնով ու բացառիկ ներշնչանքով սկսեց երգել.

- Բա՛ց մեզ, Տէ՛ր, բա՛ց, զդուռն ողորմութեան...:

Ունկնդիրները համակուեցին մի սրբազան սարսուռով, յուզումից քարացան: Մեղեդու բառերը թեւ աղաչական էին, բայց երգողի ծայնը անսպառ էր ու յաղթական: Թուում էր, թէ ամբողջ տաճարը երգի էր վերածուել. երգում էին եկեղեցու յարութիւն առած բոլոր սրբերը, երգում էին եկեղեցու նահատակները, աքսորուած ու անմեղօրէն գնդակահարուած քահանաները, նրանց անմխիթար այրիներն ու որբերը: Սակայն հայրապետի միտքն ուրիշ տեղ էր: Ոսկրացած դէմքի վրայ ոչ մի արտայայտութիւն, ոչ մի պրկում, հայեացքն էլ բոլորովին անհաղորդ իրականութեան հետ:

Տէր Նիկոլն իր թոքերի ողջ ուժով կրկին անգամ սկսեց երգել. «Բա՛ց մեզ, Տէր»-ը: Վեհափառն այս անգամ երկար նայեց ճեմարանի սաների կողմը, ապա դարձաւ դէպի խորան, մի փոքր ցնցուեց: Նրա մինչ այդ անհաղորդ ու անտարբեր կարծուած աչքերից արցունք էր հոսում: Դէմքը ողողուել էր սրբութեան ճաճանչով, ասես սրբալոյս միւռնով նորաօծ սրբապատկեր լինէր: Սակայն ի՞նչն էր պատճառը նրա այդօրինակ յուզումի. ճեմարանի սաները դրանից շատ բան չէին հասկանում, բայց տարեց միաբանները իրենք էլ ապրում էին հայրապետի խռովքը:

Նրանք գիտէին, օրինակ, որ պետական հովանաւորութիւնը վայելող անհաւատութեան ալիքը ահաւոր վայրագութիւններ էր գործել եկեղեցու եւ եկեղեցական սպասաւորների հանդէպ: Նախորդ կաթողիկոսի դառնադէտ վախճանումից յետոյ պետութեան ծրագիրն էր թանգարանի վերածել Էջմիածնի Մայր Տաճարը՝ հայ ժողովրդի հաւատի ամրոցն ու կանգուն մնացած միակ սրբավայրը ամբողջ Հայաստանում: Գէորգ Զ Վեհափառը ոգի ի բռին պայքարում էր այդ հրէշային ծրագրի դէմ: «Թող մեռնեն,- ասում էր նա,- բայց չտեսնեն Էջմիածինը թանգարանի վերածուած»: Անհաւատութեան ոգով դաստիարակուած երիտասարդները դրսում Վեհափառին տեսնելիս՝ նոյնիսկ անարգում էին նրան: Մի օր, երբ նա դեռ եպիսկոպոս էր, գնացել էր բանաստեղծ եւ Գէորգեան ճեմարանի նախկին դասախօս Յովհաննէս Յովհաննէսեանին այցելելու: Նրա տունը վանքից շատ հեռու չէր: Այդ նոյն երիտասարդները հայիոյանքներով յարձակուել էին նրա վրայ եւ եկեղեցականի սքեմը ամբողջութեամբ անարգել: Բանաստեղծի կինը արցունքն աչքերին, իբրեւ Յիսուսի ոտքերը օծող մի նոր Մարիամ, սրբել էր հայ երիտասարդների թողած կեղտը Սրբազանի սքեմից: Խորապէս խոցուած էր Սրբազանի սիրտը, բայց Էջմիածնի հանդէպ ունեցած նրա անսահման սէրը, ինչպէս նաեւ բարու եւ ճշմարտութեան յաղթանակի յոյսը երբեք չէին թողնում, որ նա վիատութեան մատնուի: Նրա անդուլ ջանքերի շնորհիւ միայն հնարաւոր դարձաւ վերաբացել Էջմիածնի Հոգեւոր ճեմարանն ու մի քանի փակուած եկեղեցիներ, ինչպէս նաեւ վերատիրանալ պետութեան կողմից բռնագրաւուած վանքերից երեքին:

Գէորգ Զ կաթողիկոսը մեծութեան եւ արիութեան, իսկական վեհափառութեան խորհրդանիշ էր: Այս յատկանիշներով էր աւելի շատ պայմանաւորուած հայրապետի գերագոյն փառքը, քան նրա ունեցած աստուածաբանական ու երաժշտական խոր գիտելիքներով: Վեհափառը Յիսուսի նման նախատուած, բայց նրա նման էլ ժողովրդին սիրող մի անյիշաչար անձնաւորութիւն էր:

Հին ու վեհատեսիլ սրբապատկերի դէմքով Վեհափառ հայրապետը, Դռնբացէքի այդ երեկոյին, ո՞վ գիտէ, թէ ինչպիսի՞ խռովալից մտածմունքների մէջ էր: Նա զգում էր կարծես իր մօտալուտ վախճանը: Դրա համար էլ Դռնբացէքի մեղեդին հագիւ թէ աւարտուած, նա առանց իսկ նայելու երգողի կողմը, շշնջաց.

- Մի անգամ էլ երգի՛ր, Տէր Նիկոլ, մի անգամ էլ, գուցէ չհասնեն գալիք Դռնբացէին:

Տէր Նիկոլն իր փառահեղ ծայնով դարձեալ սկսեց «Բա՛ց մեզ, Տէ՛ր»ը, որին յաջորդեց ճեմարանի սաների երգած շարականը, ուր աւետիսն էր տրուում մի նոր աւազանի հաստատման՝ մեր մեղքերի թողութեան եւ մեր սրտերի մաքրաջրման համար: Դա իրօք էլ այդպէս էր. վշտալի հայրապետի առաքինի ոգով դաստիարակուած այդ ճեմարանականներն էին, որ պիտի կարողանային քրիստոնէութեան աւազանի կենսահաղորդ ջրերում լուանալ սրբութիւնները անարգողների հոգիները եւ չար գազանի թունալից նետերով խոցուած ու շատ անգամ նոյնպէս գազանացած մարդկանց գարշահոտ վերքերը: Դա էր պատճառը, որ հայոց հայրապետը այդ երեկոյ նայում էր միայն երկու ուղղութեամբ՝ Իջման Սուրբ Սեղանի եւ ճեմարանականների, այսինքն՝ դէպի Աստուած եւ դէպի յուսալից ապագայ:

Գէորգ Զ կաթողիկոսը չհասցրեց մասնակցել Դռնբացէի յաջորդ արարողութեանը: Իր խարխլած մեքենայի ետեւի նստարանին տեղաւորուած՝ մօտեցաւ Երեւանի գլխաւոր հրապարակին, ուր մարդկային ուրախ եռուզեռ կար, եւ հրահանգեց վարորդին.

- Վազգէ՛ն, մի պահ կանգնի՛ր այստեղ, ուզում եմ հեռուից նայել, թէ ինչպէ՞ս են հագնուած մեր երիտասարդները, ինչպէ՞ս է նրանց առողջութիւնն ու տրամադրութիւնը:

Հրճւում էր հայրապետը՝ տեսնելով նոր սերնդին առողջ, ժիր եւ կենսախինդ: Սակայն այդ երիտասարդները կտրուած էին հայոց անցեալից, դարաւոր սրբութիւններից ու եկեղեցուց: Նրանցից մի քանիսը նշմարեցին կաթողիկոսին եւ սկսեցին հայիոյել տէրտէրների հասցէին...: Վարորդը քշեց մեքենան: Այս անգամ, սակայն, ծերունազարդ հայրապետը հառաչանքի ու ներքին տառապանքի ոչ մի ճիշ չարձակեց, այլ ինքնավստահ շեշտով ասաց.

- Ճեմարանի մեր տղաները անպայման կը կրթեն սրանց:

Մի քանի շաբաթ յետոյ, ճեմարանի տղաներով շրջապատուած հայոց հայրապետը աւանդում էր հոգին՝ այնպէ՛ս խաղաղ, այնպէ՛ս հեշտ, որ կարծես թէ շտապում էր նորից քնել, որպէսզի տեսնի շարունակութիւնը կիսատ մնացած իր հիասքանչ երազի:

Այս դէպքը կատարուեց Մայիս ամսին: Հայաստանում պէտք է գարուն լինէր, բայց այդ իսկական գարունը յամենալով էր գալիս...:

ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ



ՆԱՍԽԱՆՈՒԹ ՓՈԽՈՍԵ - ՆԱՍԽԱՆՈՒԹ ՓՈԽՈՍԵ

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

Վարդան Պէյրուժի հայկական արուարձանի մուտքին կանգնած պահակն է՝ հարազատ ներկայացուցիչը անոր բնակչութեան: Յաջողած՝ անխոնջ ու յարատեւ ճիւղով ու տեղ հասած՝ հիմա ճարտար ոսկերիչ: Մարդ եղած է հօր խօսքը մտիկ ընելով ու անոր օրինակին հետեւելով: Հայրը ուզած է որ զաւակը արհեստ սորվի, քանի որ ինք չարչարուած ու տառապած է: Երկիրը լքելէ ետք հաստատուած է բազմահազար գաղթական հայրենակիցներու հետ մայրաքաղաքի այս ցեխոտ ու բազում հիւանդութիւններով լեցուն արեւելեան այս ափը՝ ուր մինչեւ քսանը եօթը տարիքը պտըտած է անոր գլխահներուն մէջ բոպիկ, ինչպէս կ'ըսէ: Միշտ յիշեցուցած է իր զաւակին աքսորուած հայրը ճակատագիրը, այսինքն արմատախիլ ժողովուրդ, որ հաստատուած է մայրիններու երկրին մէջ՝ խուսափելու համար գազանի վայրագ ախորժակներէն:

Կորսնցնելէ ետք տուն տեղ, ամէն ինչ, վերադարձի յոյսն ու երազը պահած էր: Այն օրերուն կար տակաւին այդ յոյսը, որ մարած ըլլալ կը թուի ներկայիս:

- Տարիները անցան,- ըսաւ Վարդան,- ոչինչի կարիք ունինք ներկայիս, գացին այն սեւ օրերը, հիմա լաւ ենք, հացի կարիք չունինք, բայց կեանքը դիւրին չէ, ինչպէս գիտէք, նկատի առնելով երկրի դիմագրաւած դժուար կացութիւնը եւ անբուժելի անորոշութիւնը, բայց կը դիմանանք, ուրիշ ճար չկայ, հայր վարժուած է դժուարութեան, համբերութիւնը կեանք եղած է իրեն համար:

Այս «հասուն երիտասարդին» խօսքերը, ան արդէն յիսունը անց է, կը յուզեն զիս: Ճիշդ է որ առանց աշխատանքի ոչինչ կարելի է ակնկալել կեանքէն, այս պարագային արդիւնքը չօղափելի էր դժուարութեանց մէջ թրծուած այս հայուն համար, ինչ որ յուսալու առիթ կը պարգեւէ ինծի:

Մերինները արհեստաւոր կամ վաճառական կը ծնին, կը մտածեմ, միայն յետոյ է, որ մարդը կը հասուննայ իրենց մէջ ու կը յանգին մասնագիտութեանց եւ այլեւայլ ծրագիրներու իրազորման, նաեւ՝ ստեղծագործութեան:

Հիմա Վարդան գոհ է իր կեանքէն, սկսած է նոր տուն շինել: Գոհ է նաեւ մեր խօսակցութենէն, մեր հանդիպումէն, ինչ որ հաճոյք կը պատճառէ երկուքիս:

Այնուհետեւ Հայաւանի մուտքին կանգնած այս նոր գտնուած բարեկամս խորհուրդ կու տայ ինծի խորանալ ականէն ներս ուզածս գտնելու համար:

Յոյց կու տայ երթալիք ուղղութիւնս լուծում մը գտնելու համար խնդիրիս:

Կը բաժնուիմ իրմէ գոհունակ՝ կրկին տեսնուելու բաղձանքով ու կը յառաջանամ հայկական ականէն ներս գտնելու համար կարիքս գոհացնող վարպետը:

Լեռ տապալել չէր միտքս, ոչ ալ երկինքը վար բերել իր կապոյտ վեհութենէն: Շատ փոքր գործ մըն էր եղածը: Կը հարցնեմ աջ ու ձախ, մեր լեզուով, - մենք մեզի հետ ենք հոս -, ամէն մարդ կ'ուզէ օգտակար ըլլալ ինծի ցոյց տալով երթալիք ուղղութիւնս:

Մէկ ուղղութիւն կար, այն ալ դէպի Նոր Մարաշ տանող ճամբան, այսինքն Արաքս մայր պողոտային գուգահեռ աննշան փողոց մը: Նորէն կը հարցնեմ չսխալելու համար, ի վերջոյ կը հասնիմ խանութի մը առջեւ, որուն ճակատին գրուած էր հայերէն մեծ տառերով՝ «Կօշկակար»: Ոտնաման նորոգող:

Հագիւ կարելի կ'ըլլայ մտնել փոքր խանութէն ներս, շատ փոքր կրպակ մը, ուր արդէն յաճախորդ մը կար եւ տարեց մարդ մը՝ իրեն չափ հին կարի մեքենայի մը առջեւ: Ճերմակ մազերով, չածիլուած մօրուքով, ջրհեղեղէն մնացած քիթին կպցուցած ակնոցով: Զբաղած էր ծայր աստիճան, ո՛չ ոքի կը նայէր: Ան կը փորձէր գոհացնել իր դիմաց կանգնած երիտասարդը: Անոր ժամացոյցի կաշեայ փրթած զօտին կ'ուզէր ամրացնել, նորոգելու համար զայն քանի մը կարի կարիք կար, ըստ երեւոյթին դիւրին գործ չէր, որովհետեւ դերձանը կը մերժէր կարգի մտնել, այդ հօր ճիգ կը պահանջէր, վարպետէն քիթին իջնող ակնոցներու օգնութեամբ: Կը ջղայնանար, կ'աշխատէր, կ'ուզէր գոհացնել յաճախորդը, բայց անտէր դերձանը կը մերժէր ասեղին ծակէն անցնիլ: Այնպէս որ ինծի ուշադրութիւն ընելու ժամանակ չունէր, ատենն ալ չէր, քանի որ իր ձեռքին գործ կար: Կը ճգնէր իր բոլոր ուժերով կարել ժամացոյցի կաշին, որ բացառիկ կերպով վատ վիճակի մը մէջ կը գտնուէր: Կարելի էր անոր տեղ նոր մը գնել, բայց այդ արդէն ուրիշ հարց էր:

Կը թուէր թէ ակնոցը շատ օգտակարութիւն չունէր իր դերը կատարելու համար:

Պատուոյ խնդիր մը կար մէջտեղ, պէտք է որ յաջողէր այս գործը գլուխ հանել: Ժամանակի կարիք կար:

Ի վերջոյ վապետը կը յաջողի... ու լայն շունչ մը կ'առնէ, մինչ երիտասարդը առանց վճարելու կը մեկնի, այն ատեն կարգը կու գայ ինծի, այսինքն՝ իմ գործիս: Հագիւ կը նայի... իմ կողմս, ես քաջալերուած այդ ներկայացող առիթէն:

- Բարեւ պարոն, կ'ըսեմ...

Հակազդեցութիւն չ'ըլլար, չկար: Զի պատասխաներ...

Կը կրկնեմ: Միշտ լուռ՝ ինծի կը նայի մաշած ակնոցի ապակիներու տակէն:

Կը փորձեմ խօսակցութիւն հաստատել իրեն հետ այս անգամ ձայնս բարձրացնելով:

- Գո՞ւք էք այն վարպետը, որուն մասին ամբողջ Պուրճ-Համուտը կը խօսի ցոյց տալով ձեր հասցէն, որպէս միակ եւ իսկական համբաւաւոր վարպետը կօշիկներուս լուծում մը գտնելու համար, այսինքն անոնց կաշեայ լեզուակները երկարելու համար, որպէսզի իրենց պաշտօնը կատարեն եւ ոտքիս վրայ ամրանան, քալած ատենս չկորսնցնելու համար զանոնք:

- Ասաաա... մը կ'արձակէ, ... իմ մասի՞ս...

- Այո՛, այնքան համբաւաւոր որ ամէն մարդ ձեր մասին կը խօսի եւ ձեզ ցոյց կու

տայ այս գործը գլուխ հանելու համար:

- Այն ատեն՝ կմկմալով կը հարցնէ... ոչ շատ ինքնավստահ, տարակուսանքով՝ ու շփոթած...

- Համբաւաւոր երբուրնէ՞ ի վեր,- կը հարցնէ, յատկապէս հետաքրքրուած:

- Ի՞նչ երբուրնէ ի վեր, պարոն, պատմական այս օրուրնէ ի վեր, երբ կը խօսիմ ձեզի հետ, այսինքն հիմակուրնէ ի վեր:

Գլուխը կը ճօճէ, կը դարձնէ գայն կարծես արժէք չի տար ըսածիս, ուրիշ բանով գրադիլ կը ձեւացնէ, բայց թաքուն գոհունակութեամբ:

Մինչ դուրսը իր թոռնիկը եկած կը շողակրատէր իրմէ աւելի փոքր երկու տղոց հետ, որոնք ըստ երեւոյթին իր դասընկերներն էին, որոնք շարժում ու կենսունակութիւն կը փոխանցէին շրջապատին:

Այն ատեն մարդս կրկին կը նայի ինծի ու կը նետէ հարցումը օդին մէջ.

- Ե՞րբ կ'ուզես կօշիկներդ ...

- Այսօ՛ր, հիմա՛, եթէ կարելի է, եղածին չափ շուտ...

- Այդ պարագային հինգ հազար լիբանանեան օսկի կ'ըլլայ,- կ'ըսէ, բարձրացնելով գլուխը կարի մեքենայէն:

- Դժա՛տ լաւ..., - ըսի...

- Աաա... շատ լա՞ւ... Այն ատեն տասը հազար կու տաս,- ըսաւ:

- Հապա՞ քիչ առաջ հինգ հազար ըսիր, ինչո՞ւ կը փոխես խօսքդ: Ինչո՞ւ այս փոփոխութիւնը, յարգէ՛ ըսածդ, մարդու պէս:

Զարմացած ինծի կը նայի, այդ նայուածքէն կարելի չէր յստակ բան մը յուսալ:

Յամենայնդէպս ձեռք կ'առնէ գործս, լուռ ու մունջ, առանց աւելորդ շատախօսութեան: Բայց ինչպէս ընել երկարելու համար նոր գնած կօշիկներու կաշեայ լեզւակները, երկու եզրերը իրարու զօղելու, այսինքն միջանկեալ շողկապ մը դնելու համար:

Այն ատեն քովի դարակէն կը վերցնէ Նոյեան Տապանէն մնացած ժանգոտած մկրատ մը եւ «խարթ-խարթ» կը կտրէ եղած կաշեայ շողկապները: Այս արդէն դէպի առաջին հանգրուան տանող յանդուգն քայլ էր, որ կը նշանակէր թէ անկէ ետք կարելի էր անցնիլ երկրորդ փուլ: Յարմար բան մը գտնելու միտքով քովի աղբամանին մէջ կը փնտռէ հոն նետուած կերպընկալ երիզ մը, ցոյց կու տայ. հաւանութիւնս առնելու համար: Չեմ ընդդիմանար. եղածը ի վերջոյ կապ մըն է, որ գործս կրնար կատարել, այսինքն՝ ոտնամաններս ամրացնել ոտքերուս:

Անկէ աւելի ինչ սպասել, այդքանը բաւ էր արդէն աւելիի կարիք չկար ուզածս լայնօրէն կը գոհացնէր:

Գլուխով հաւանութիւն կու տամ: Այն ատեն վարպետը կ'անցնի գործի, փորձելով կարել երկու կողմերը այդ կերպընկալ երիզին:

Սակայն ինչպէս անցնել սեւ դերձանը մեքենային ասեղի ծակէն, որ կարծես փակ էր, բան չէր երեւար, ու թելը անցնելու գործողութիւնը երկար կը տեւէր: Վարպետը կը յամառի, կ'ուզէ անպայման անցնել թելը ասեղի գոց ծակէն: Ուղիտ մը անցնելու նման: Հերոսանալու արարք մը. կա՛րճ. հերոսամարտ մը, առակի կարգ անցնելիք:

Մեղմելու համար ներկայացող խնդրին բարդութիւնը, կը փորձէ ձեւով մը շեղել ուշադրութիւնս:

Առանց հարցումի սպասելու, կը սկսի իր պատմութիւնը, այսինքն այս աւանին հիմնադրութեան գորչ օրերուն ողիսականը:

- Հոս ծնած եմ,- կ'ըսէ. Մարաշ (մենք Նոր Մարաշ կը կոչենք, բայց իր եւ իր նմաններուն համար հոս Մարաշ է, ո՛չ այլ բան: Եւ կը պնդէ):

- Լաւ եթէ այդպէս է, թող ուզածիդ պէս ըլլայ, կորուսեալ Մարաշը հիմնուած է հոս գաղթականներու ճիգով ու ջանքով, արիւնով ու քրտինքով, հաւատքով ու կամքով, անոնք որոնք լքեցին իրենց հարազատ քաղաքը ու հետեւեցան Փրանսական նահանջող զօրքերուն, երբ անոնք արդէն յաղթանակ տարած էին թշնամիին վրայ անոնց քիթը-մուկը արիւնելով, փառաւոր դաս մը տալով: Աւաղ...

Ու կը շարունակէ.

Ծնած եմ 1924ին, երբ մերինները լքեցին Մարաշը ու ձիւններուն վրայէն քալելով նահանջեցին: Ճամբու ընթացքին երեսուն հազար մարդ զոհ գնաց մեզմէ, ձիւնին ցուրտին, փոթորիկին: Հայրս պատմած է ինծի այս բոլորը: Ո՞վ որ ետ կը նայէր ցուրտը կը քարացնէր զինք՝ Ղովտի աղէ արձաններուն նման: Ժողովուրդ մը ամբողջ զոհ գնաց դաշնակից ըսուած դաւաճաններու դաւադրութեան: Ճշմարիտ. ճշմարիտ կ'ըսեմ քեզի, յետոյ որպէսզի մեռելները ետ գան մերինները մտածեցին պակսողերուն տեղը լեցնել նորերով ու հարիւրաւոր նոր ամուսնութիւններ կնքուեցան, ու սերունդներ մէջտեղ եկան :

Վարպետը կը շարունակէր խօսիլ տեսնելով հետաքրքրութիւնս:

Ուրեմն, երբ օր մը հայրիկս «չինեց» մայրս (ըսելու ռամիկ եղանակ մը) ես աշխարհ եկայ ...«ձեռագործ» այս աւանին մէջ, առաջին մէկ օրէն սկսեւ էին քար-քարի վրայ դնել, թիթեղ-թիթեղի կպցնել, ոչինչէն աւան մը մէջտեղ բերին մերինները:

Ի՞նչ կ'ըսես...հաւատա՞մ, ի՞նչպէս կ'ըլլայ այդ մէկը, ակնարկելով իր հօրը մասին ըսածին, բայց պարոն վարպետ, ձեր ըսածը խայտառակութիւն է...

Կը պնդէ. կը կրկնէ, առանց ուշադրութիւն ընելու ըսածին պղծութեան, շարունակելով ձեռքին գործը

Երբ հայրս մայրս «չինեց»...(նոյն անպատկառ եղանակով...)

- Պարոն, չէք ամչնար, կը վիրաւորէք զիս, ատանկ բան չ'ըսուիր, ամօթ է ձեզի, այդ ի՞նչ կը նշանակէ, նոյն բանը կրնանք ըսել ուրիշ կերպով, օրինակ՝ հայրս սիրեց մայրիկս ես այդ սիրոյն պտուղն եմ, այդպէս ալ աշխարհ եկայ այս աւանին մէջ, մեր նուագած թիւր բազմացնելու համար:

Խոթուած՝ դէմքիս կը նայի, անակնկալի եկած, նման հակազդեցութեան մը չէր սպասեր, կը թուի թէ չէր հանդիպած ինծի նման մէկու մը, որ նման արտայայտութիւն մը ունեցած ըլլար:

Կողմնացոյցը կորսնցուցած մէկու մը նման ակնոցներու տակէն ինծի կը նայէր այլայլած, գրեթէ սահմուկած, ըսելիքը չգիտցող մէկու մը նման, որ յանկարծ լախտի հարուած մը կը ստանար գլխուն վրայ: Այնուհետեւ բառեր կը պակսին իրեն, բառ կը փնտռէ, բան մը ըսելու համար, բայց ոչինչ կու գար, լեզուն բռնուած էր, կը կակազէր, միաժամանակ ուղեղը աշխատելէ դադրած էր, լռութիւնը կը խորանար. ան կը տարածուէր մեր միջեւ:

Զգաց թէ անտեղի ու տգեղ արտայայտութիւն մը ունեցած էր, շարունակելով ստանձնած գործը, այս բջիջին մէջ, ուր հագիւ տեղ կար շնչելու, երբ յաճախորդի մը պոչին կէսը ներս, միւս կէսը դուրս կը մնար:

Քիչ ետք ըսելիք բան մը կը գտնէ, միշտ գործը կատարելու փորձով, վերջապէս կը յաջողի ձեւակերպել նախադասութիւն մը ու կը հրամցնէ:

- Պարոն, գիտէք թէ առաջին ունկնդիրն էք որ նման արտայայտութիւն մը կ'ուսնայ ու կը գայթակղի...նոյն խօսքերս շատերու ըսած եմ, բայց ոչ ոք բան մը ըսած է, բացի ձեզմէ:

- Խնդրեմ, ի՞նչ կը նշանակէ, ձեր արտայայտած այս եղանակը, բացատրեցէք:

Մարդը ուժ առած հաշիւ կը պահանջէր ինձմէ իր մեղաւոր ու անկիրթ արտայայ-

տութեան համար, անարգելով ծնողքը եւ անոնց յիշատակը: Կարծես անոնք ատոր կարիք ունեցած ըլլային իրենց տեսած բազում դժուարութիւններէն ետք: Մեր բոլոր ծնողներուն նման, որոնք իրենց շուշը առին այս հողին վրայ, մեր մեծ Զրհեղեղէն ետք, խարուած սրիկաներու տուած խոստումէն ու անոնց դաւաճանութենէն: Մեր ժողովուրդը շատ բան տեսաւ, երբ եկաւ եւ հաստատուեցաւ այս ճահիճներու վրայ, ճաշակելով կեանքի դժուարութիւններն ու զարմանազան հիւանդութիւնները, քաշելով տիղմի ու աղտեղութեանց ընդմէջէն :

Այս եղած է արմատախիլ մեր ազգին մեծագոյն ողբերգութիւնը:

Մինչ վարպետը կը շարունակէր գործս:

Մեղմելու համար իր տղեղ արտայայտութիւնը, այսինքն՝ իր մեղանչումը ծնողքին հանդէպ, աւելցուց.

- Գիտէ՞ք, պարոն, ես հոս յարգուած մարդ եղած եմ եւ եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամ եմ եւ թէ լաւ կապեր ունիմ կղերական դասուն հետ:

- Օ՛հ ... Ի՞նչ կ'ըսէք...(զարմացած ու յարգալիւր...)

Այն ատեն շարունակեց.

- Նախկինները տարբեր էին, նորերը անոնց չեն նմանիր...

Ի՞նչ ըսել կ'ուզէր, չուզեցի խորացնել, հարցումը անտեղի էր, հարկ չկար մանրամասնութեան մէջ մտնելու: Կղերականները կրնան իրենց ուզածը ընել, պայմանաւ որ այդ ըլլայ մեր եկեղեցիէն դուրս, որպէսզի շարունակուի մեր սուրբ աւանդութիւնը:

- Ի հարկէ հիները միշտ աւելի լաւ կ'ըլլան, անանկ չէ՞:

Ու նիւթը փոխելու համար անսպասելի կերպով հարցում մը կու տար:

- Ի՞նչ կը խորհիք, պարոն, քանի տարի կու տաք տակաւին ինծի մինչեւ մահս:

- Այս ի՞նչ հարցում է . այս ո՞ւրկէ ելաւ...:

- Գուք տեղեակ կը թուիք, ուզեցի ձեր կարծիքը առնել:

(Իրեն բան չէի ըսած իմ մասին):

- Հիմա մեռնելու թուականը ետ մղուած է, առհասարակ կ'անցնի իննիսուն տարիքը:

Գոհունակ՝ ժպտաց ու աւելցուց.

- Ուրեմն քանի մը տարի եւս ունիմ այս կեանքը քաջքշելու համար, այդ ըսել կ'ուզես...այդպէս չէ՞...

- Եթէ կը փափաքիս... քեզմէ կախում ունի այդ մէկը, բայց արժանի պէտք է ըլլաւ...անոր:

- Ի՞նչ կ'ըսես... ի՞նչ ըսել կ'ուզես...

- Ուշադրութիւն ըրէ սատանան կրնայ լսել...

- Շէյթանին ականջը խուլ,- ըսաւ:

Գործս լքած էր ու գիս մտիկ ընել սկսած:

- Լաւ, այդ պարագային քեզմէ կախում ունի, քեզի կը մնայ խուսափել, կարելի եղածին չափ, չափազանցութիւններէ: Այսինքն չափաւոր ապրիլ ու ծայրայեղութիւններէ հեռու մնալ:

- Ի՞նչ ըսել կ'ուզես...ինչ բանէ պէտք է խուսափել, ինչ պէտք չէ ընեմ:

Հարցը լրջացած էր. առանց ուզելու կարծես լախտի նոր հարուած մը իջած էր վարպետի գլխուն:

Շարունակեց պնդել, գործս մէկդի դնելով:

Եթէ կը պնդես պիտի ըսեմ...

- Հա՛, ըսէ՛, ըսէ՛ նայիմ, կը լսեմ..

- Այսինքն՝ չափաւոր պէտք է ըլլաս, այսպէս ըսած քու ըսածիդ նման «չինելու» արարքին մէջ: Քիչ չինես, մաքուր ապրիս...

Մարդս խնդալէն մարեցաւ ոչ թէ ըսածիս համար, այլ՝ իմ վրաս:

Այս էր պակաս: Հարցուցի.

- Ինչո՞ւ կը խնդաք, պարոն:

- Ասանկ խրատ չէի լսած երկար ատենէ ի վեր,- ըսաւ:

- Հա, զարմանալի...

Հարցուցի անունը: Տուաւ զայն ցած ձայնով... որպէսզի սաղայէլը չլսէ ինչ կ'ըլլայ, ինչ չ'ըլլար...

Այդ անունը վատ բան մը կը յիշեցնէր ինծի:

- Ինչո՞ւ կը ծամածռես դէմքդ,- հարցուց:

- Անցնինք,- ըսի,- կարեւորութիւն չունի. այդ արդէն ուրիշ բան է:

- Լաւ ինչպէս որ ուզես...

- Ասանկ որ դիպուածը միշտ մեզ կը սպասէ, ուր որ ալ ըլլանք:

Իմ «ծերունի երիտասարդս» շարունակեց իրեն վստահուած գործը: Եղածը մեծ բան մը չէր, բայց ժամանակ առաւ:

Այն ատեն տեսակ մը ափսոսանք ու ներողութիւն խնդրելու պէս եղաւ, սկիզբի իր յիմարաբանութիւնը մոռցնելու համար:

Վերջաւորութեան գոյգ կօշիկներս նոր ու նորոգուած երկարեց ինծի, որպէսզի գէթ անգամ մը փորձեմ:

Երկու կարուած լեզուակներէն դուրս մնացած էին դերձանի մասնիկներ, մեքենան գէշ կարած էր ու ինք չէր տեսած:

Կրպակէն դուրս մայթին վրայ թռուիկները ուժի ցուցադրութիւն կ'ընէին իրենց թաղեցի փոքր ընկերով: Անոնք կեանք ու զուարթութիւն կը հաղորդէին իրենց շրջապատին:

Իրարու կ'ըսէին, թէ կ'ուզէին դպրոց փոխել. ուրիշ վարժարանի մը առաւելութիւնները գովելով: Հոն տարբեր է:

- Հիմա այլազգիները հայկական վարժարան յաճախել սկսած են եղեր, բայց մէկ պայմանով՝ պէտք է հետեւին նաեւ հայերէն դասընթացներու:

Այս էր նաեւ նորութիւնը, այլապէս անոնք չէին ընդունուեր հայկական հաստատութենէն ներս:

Վարպետին կ'երկարեմ համաձայնուած գումարը: Առարկութիւն չ'ըներ, սակայն խոստում մը կը պահանջէ, կ'ուզէ որ վերադառնամ իր մօտ աւելի լայնօրէն խօսելու համար մեզ հետաքրքրող այլ նիւթերու շուրջ, նոյնիսկ սուրճի խոստումով: Այս անգամ չկայ, բայց յաջորդ անգամ անպայման:

Այսինքն՝ հարցը ամբողջովին չէր փակուած, բաց մնացած գլուխ կար մեր կրած բոլոր փորձանքերուն մասին: Գազանը կը յոխորտայ իբրեւ թէ յաղթանակ տարած ըլլար մեր վրայ Կիլիկիոյ մէջ՝ մղուած մարտերու ընթացքին, որմէ ամբողջովին խաբուած դուրս եկաւ մեր ազգը: Հազար ափսոս...

- Ուրիշ անգամ այդ մասին կը խօսինք,- ըսի:

Եւ ուղղուեցայ դէպի արեւը, որ արդէն մայր մտնել սկսած էր քաղաքին հրավառ միւս հորիզոնին ետեւ:


ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԵՒՈՐԵԱՆ

Սենթ Իփոլիթ, 10 Յունիս 2008
Նուազի-լը-Կրամ 2 Յունիս 2008

ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍ

1877-1962

Հերման Հեսս մեծ գրող է, գերմանացի, ստացած է Նոպելեան գրական մրցանակը, 1946ին: Հեղինակ է բազմաթիվ վեպերու եւ պատմուածքներու: Ալեքսանտրա Քատ ինքնատիպ գաղափարը ունեցած է փոքրիկ հատորի մը մէջ ամփոփելու մեծ գրողի ինքնատիպ էջերէն պատառիկներ, գրուած երբ ան արդէն յառաջացեալ տարիք ունէր: Ինչպէս կ'ըսուի գիրքի կողքին վրայ, Հերման Հեսս կը դիմագրաւէր իր կեանքի վերջին մարտահրաւերը. շնորհալիութեամբ ընդունիլ ծերութիւնը եւ մահը: Գիրքը իմաստութեան, պայծառութեան, գեղեցիկի, հոգեկան խաղաղութեան եւ գեղեցիկ խօսքի ծաղկաքաղ մըն է, որ հակառակ գերմաներէնէ ֆրանսերէնի վերծանման, ոչինչ կորսնցուցած է իր խորութենէն եւ խորհուրդէն: Խօսքի հեզասահ եւ պարզ ընթացքը կը վկայէ իմաստութեան հասած անձի մասին: Գիրքը կը քննարար գրադարանիս մէջ, երբ ուրիշ մը փնտռած ատենս ըսաւ, թէ երկար ատենէ ի վեր ընթերցող կը սպասէր: Դժուար էր դիմադրել այդ էջերէն փունջ մը հայերէնի վերածելու փորձութեան: Ի հարկէ, ոչ մէկ թարգմանութիւն փոխարինած է բնագիրի մը ընթերցումը: Հերման Հեսսէն էջերու Ալեքսանտրա Քատի կատարած թարգմանութիւններու գիրքը կը ներկայանայ “Գովք Ծերութեան” անունով (Eloge de la Vieillesse, Hermann Hesse, Calman-Lévy, 2000): «Նինա»-ի նուիրուած էջերը, որոնք ստորեւ ներկայացուած են, իրենց պարզութեամբ կը թափանցեն մարդու, կեանքի եւ համակրանքի խորհուրդները, ցոյց կու տան թէ որքան բարակ է կեանքի եւ մահուան միջեւ ձգուած թելը: Անսեփեւթ պատումով, Հերման Հեսս մեզ կ'ուղղէ դէպի մեր ներաշխարհը, առանց մեծ գաղափարներու հնչեղ տարազներուն:



Յաճախ մտածած եմ առանցքային կարգ մը վիճակներու եւ գաղափարներու շուրջ հաւաքել հայ գրողներու եւ բանաստեղծներու էջերը, օրինակ, ինչպէ՞ս կը ներկայանան գոյները եւ ձայները քնարական չորս մեծ բանաստեղծներու մօտ, որոնք թոքախտաւոր էին. Պետրոս Դուրեան, Տէրեան, Մեծարեան, Զարիֆեան, այսինքն՝ փնտռել բնախօսական վիճակներու եւ ստեղծագործութեան առընչութիւնները: Ալեքսանտրա Քատի ընտրութիւնը եւ թարգմանութիւնը այլապէս թելադրող են:

ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԻ «ԳՈՎՔ ԾԵՐՈՒԹԵԱՆ» գիրքեն ընթերցումներ

ՈՒՆԿՆԴՐԵԼՈՎ

Մեղմ երաժշտութիւն մը, նոր սիւք մը
Կ'անցնի օրուան գորշութեան վրայէն
Կը թուի վախժխած զերթ թափահարում մը թելերու
Տատամսող՝ ինչպէս բոյր գարնանային:

Եկած շատ հեռուէն, գոյութեան արշալոյսէն,
Բիւր յուշեր յանկարծ կը խուժեն, ինչպէս՝
Անսահման ովկիանոսին վրայ անծրել մը արծաթ
Դող կու տան եթերին եւ ալ չկան:

Ներկան, անցեալը կը թուին ըլլալ այնքան անջատ
Բայց մոռցուած բաները հեռու չեն,
Սքանչելի ժամանակները, հին աշխարհը
Հոն են, ինչպէս բաց պարտէզ մը, որ վերջ չունի:

Թերեւս այս պահուն նախահայրս կը հսկէ,
Ան որ կը հանգչի հազար տարիէ ի վեր արդէն,
Իր ձայնը այլեւս նման է իմ ձայնիս,
Կորով կ'առնէ արեանս մէջ մարմինն իր:

Թերեւս սուրհանդակ մը դարպասին առջեւ կը սպասէ,
Եւ շուտով պիտի մտնէ իմ յարկիս տակ
Թերեւս շատ անելի առաջ օրուան անարտէն
Ես յաւերժօրէն իմ բնակարանս պիտի մտնեմ:

ԳԱՐՆԱՆ ԼԵԶՈՒՆ

Ամէն մանուկ շատ լաւ գիտէ թէ գարունը ինչ կ'ըսէ.
Մեծցի՛ր, աճի՛ր, յուսա՛, սիրէ՛ որքան որ կրնաս,
Հետեւի՛ր նոր ցանկութիւններուդ, եղի՛ր ուրախ,
Տրուի՛ր ամբողջութեամբ եւ մի՛ վախճար կեանքէն:

Ամէն ծերունի շատ լաւ գիտէ թէ գարունը ինչ կ'ըսէ.
Դուն, տարեց մարդ, թոյլ տուր որ քեզ թաղեն,
Տեղդ զիջի՛ր մանուկներուն զուարթ,
Տրուի՛ր ամբողջութեամբ, մի՛ վախճար (հոգեվարքէն):

ԿԵԱՆՔԻ ՄԸ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐԸ

Ամեն ծաղիկ կը թօշնի, ամեն երիտասարդութիւն պարտուած է՝
Ծերութենէն. այսպէս կեանքի իւրաքանչիւր հանգրուան
Իւրացուած ամեն իմաստութիւն որպէս առաքինութիւն
Կը բացուի իր ժամանակին եւ պահ մը սոսկ կը տեսէ:

Կեանքի իւրաքանչիւր հրաւերին,
Սիրտը պէտք է գիտնայ հրաժեշտ տալ եւ վերսկսիլ
Նոր կապեր ստեղծելու համար, տարբեր,
Ընթանալ քաջութեամբ եւ անզիղջ:
Ամեն սկիզբ կը թաքցնէ պահուած կախարդանք մը
Որ կու գայ մեզ պաշտպանելու, կ'օգնէ որ յետոյ ապրինք:

Յաջորդական հանգրուանները անցնիլ զուարթութեամբ,
Զսիրել զանոնք զերթ հայրենիք,
Աշխարհի ոգին ոչ մեզ կը բանտարկէ, ոչ կը կապէ,
Ամեն հանգրուանի մեզ կ'ազատագրէ, կը մեծցնէ:

Երբ կը թափանցենք գոյութեան մը շրջանակէն ներս,
Եւ տուն կը զգանք, կը դառնանք զգայազիրկ,
Միայն մարդը որ չի վախճար ոչ մեկնումէն ոչ հեռուէն,
Ձերծ կը մնայ թմրեցնող սովորութենէ:
Թերեւս մահը, երբ իր ժամը հասնի,
Մեզ պիտի տանի կայտառութեամբ, անստոյգ վայրեր,
Մեր մէջ, կեանքի կանչը պիտի հնչէ անվերջ...
Այն ատեն, սիրտ իմ, հրաժեշտ տո՛ւր եւ վերջապէս ազատի՛ր:

ԱՆՑԵԱԼԻՆ ԶԿԱՌԶԻԼ

Մենք պէտք չէ ճիգ ընենք պահելու անցեալը կամ զայն վերարտադրելու:
Կարող պէտք է ըլլալ փոխակերպուելու, մեր բոլոր ուժերով ապրելու նորու-
թիւնը: Տխրութեան զգացումը որ կը ծնի կորսուածին կապուելով լաւ չէ եւ չի
համապատասխաներ կեանքի իրաւ իմաստին:

ՎԵՐՍՏԻՆ ՀԱՆԴԻՊԵԼՈՎ ՆԻՆԱՅԻՆ

Երբ ամիսներու բացակայութենէ ետք Թեսսէնի բլուրս կը վերագտնեն, զար-
մացած եւ յուզուած ամեն անգամ անոր գեղեցկութեամբ, ինքզինքս անմիջա-
պէս տուն չեմ զգար: Նախ ստիպուած եմ տեղափոխուիլ, կրկին արմատաւոր-
ւիլ, ստիպուած եմ վերստին հանգուցել կապերը, վերագտնել սովորութիւննե-
րը, ասդին-անդին վերագտնել անցեալիս եւ երկրիս հետ կապերը, վայելել
սկսելէ առաջ կեանքի հմայքը հարաւի հողերուն վրայ: Ապա, չի բաւեր բանալ
ճամպրուկները, անոնցմէ հանել պարտէզի կօշիկները եւ ամառնային զգեստ-
ները: Բայց հարկաւոր է նաեւ երթալ եւ տեսնել թէ ձմրան ընթացքին անձրեւը

թափանցա՞ծ է սենեակները, դրացիները դեռ կ'ապրի՞ն, հարկ է քննել թե ի՞նչ փոխուած է անցած վեց ամիսներուն, գնահատել ընթացքը փոփոխութեան որ այս հրաշալի վայրը կը մերկացնէ իր երկար ժամանակ պահպանուած մաքրութենէն, զայն մխրճելով քաղաքակրթութեան բարիքներուն մէջ: Արդարեւ, կրկին ամբողջովին անտառազրկած են հանդիպակաց հեղեղատի մը զառիկողը, նաեւ կը կառուցեն առանձնատուն մը, եւ մեր ճամբան ընդլայնուած է դարձուածքի մը վրայ, ինչ որ անհետացուցած է հին եւ սքանչելի պարտէզ մը: Գաւառակի վերջին ձիաքարշ փոխադրակառքերը վերցուած են եւ փոխարինուած նոր ինքնաշարժներով, զգալապէս մեծկակ մեր հին ու նեղիկ փողոցներուն համար: Ուրեմն այլեւս երբեք պիտի չտեսնեն ծեր Փիէրոն, իր փառայեղ երկու ձիերով, որ լեռնէն կ'իջներ իր դեղին հանրակառքին մէջ, իր կապոյտ համազգեստով: Այլեւս բնաւ, երբեք զինք պիտի չհամոզեն աշխատանքի պարտադրանքէն դուրս փոքրիկ դադար մը առնելու, որպէսզի Կրոթօ տէլ Փաշէ գայ եւ ինծի հետ վայելէ բաժակ մը գինի: Դժբախտաբար, այլեւս բնաւ պիտի չնստիմ իմ նախասիրած վայրս՝ նկարելու համար, վեհաշուք անտառածածկ զառիթափերու վրայ՝ որոնք կը կախուին Լիկունոյի վերեւ: Օտարական մը, արդարեւ, գնած է անտառները եւ մարգերը, ցանկապատած է, եւ հոն ուր կը բարձրանային քանի մը հրաշալի հացիկներ, կը կառուցեն կառատուն մը:

Թէեւ խոտը կը բուսնի որթատունկերուն միջեւ, աւելի քան երբեք թարմ: Ինչպէս միշտ կը լսենք զմրուխտի գոյնով մողէզները, որոնք կը սահին մեռած տերեւներու ընդմէջէն, կուսածաղիկները, հարսնուկները, վայրի ելակներու ծաղիկները տեղ-տեղ կը ցանուին կապոյտ եւ սպիտակ հետքերով, եւ կը տեսնենք ծառերու փափուկ կանաչի ընդմէջէն թարմ եւ թեթեւ պսպղումը լիճին...

Ինչ որ ալ պատահի, դեռ առջեւս ունիմ լրիւ ամառ մը, նաեւ աշուն մը, եւ ինչպէս անցեալին, կը յուսամ քանի մը հաճելի ամիսներ անցնել, բացօթեայ ապրիլ երջանիկ օրեր, քիչ մը մոռնալ զիս տառապեցնող յօդացաւի կաթուածը, երանգապնակիս վրայ խաղալ գոյներով, ապրիլ աւելի զուարթօրէն, աւելի անմեղօրէն քան ինչ որ կ'ընեն ձմեռը քաղաքներու մէջ: Տարիները շուտ կ'անցնին: Բոպիկ տղաքը, զորս կար ժամանակ, կը տեսնէի երբ կը վազէին դպրոցին մէջ, գիւղ հասնելէ անմիջապէս վերջ, արդէն ամուսնացած են կամ գացած են Լուկանօ, Միլանօ, նստած գրամեքենայի մը առջեւ, վաճառատան մը սեղանին ետին: Ինչ կը վերաբերի ծերերուն, գիւղի ծերունիները, միջոցին մեռած են:

Բայց յանկարծ կը յիշեն Նինան: Կ'ապրի՞ դեռ: Աստուած իմ, միայն հիմա՞ կը մտածեն իր մասին: Նինան բարեկամուհիս է, մէկը շրջանին մէջ ունեցած հագլագիւտ լաւ բարեկամուհիներէ: Եօթանսուն ութը տարեկան, ան կը բնակի այդ անկիւնի ամենահեռաւոր գիւղակներէն մէկը, որ տակաւին խնայուած է արդիականութենէ: Հոն տանող ճանապարհը յոգնեցուցիչ եւ սեպ է: Ստիպւած են քանի մը հարիւր մեթր լեռնէն իջնել արեւուն տակ, յետոյ բարձրանալու համար հանդիպակաց բլրակողը: Բայց կ'որոշեն անմիջապէս ճամբայ ելլել, նախ ուղղակի իջնելով այգիներու եւ անտառի մէջէն, անցնելով նեղ եւ կանաչ ձորէն, եւ վերջապէս բարձրանալով միւս կողմէն, ամառը ծաղկած նապաստակի ականջներով եւ ձմեռը Ծննդեան վարդերով ծածկուած նեղ զառիթափներէն: Գիւղի առաջին հանդիպած մանուկին կը հարցնեն թե ի՞նչ կ'ընէ Նինան: Օհ, կ'ըսէ, ան երեկոյեան միշտ կը նստի եկեղեցիի պատին առջեւ եւ իր քթախոտը կը շնչէ: Գոհունակ, ճամբաս կը շարունակեն, ուրեմն ողջ է, դեռ զինք չեն կորսնցուցած: Ան զիս ազնուութեամբ պիտի դիմաւորէ, վստահօրէն

պիտի քրթմնջայ եւ պիտի դժգոհի, բայց ինծի ցոյց պիտի տայ օրինակը անկեղծ եւ հաւատարիմ ծեր եւ մենակեաց էակի մը, որ համբերութեամբ կը հանդուրժէ, քիչ մը զուարթախոհութեամբ, տարիքը, յօդացաւը, թշուառութիւնը, մեկուսացումը, եւ որ փոխանակ ծիծաղելի ըլլալու եւ խոնարհութիւններ ընելու աշխարհի առջեւ, կը թքէ անոր վրայ, հաստատապէս որոշած ըլլալով մինչեւ իր վերջին ժամը չդիմել ոչ բժիշկին, ոչ քահանային:

Կը ձգեն ճամբու շլացնող լոյսը եւ կը մտնեն դարաւոր եւ մթին տաճարի մը աւերակներու շուքը, որոնք կանգուն են, ծռած եւ յամառ, բարձունքի մը գագաթը, անգիտանալով ժամանակը որ կ'անցնի, չճանչնալով ամեն օր վերայտնուող անշարժ արեւէն տարբեր ներկայ մը, չճանչնալով այլ փոփոխութիւն քան եղանակները, տասնամեակէ տասնամեակ, դարէ դար: Օր մը, այս հին պատերը եւս պիտի իյնան, այս սքանչելի անկիւնները, մթին եւ քիչ առողջապահական, պիտի փոխուին, վերադասաւորուին կրաղիւսով եւ մետաղէ թերթերով, ջուրով պիտի մատակարարուին, առողջապահական անհրաժեշտով, ձայնապնակ լսելու սարքերով եւ այլ մշակութային ինչքերով: Ծերունի Նինայի ոսկորներուն վրայ պիտի բարձրանայ պանդոկ մը, ներկայացնելով ֆրանսական ճաշացուցակ, կամ պերլինցի մը ամառնային առանձնատուն մը պիտի կառուցէ: Մինչ այդ հին պատերը դեռ հոն են, եւ ես կը մտնեմ իմ բարեկամուհի Նինայիս քարաշէն շէնէն, կը բարձրանամ ոլորուն աստիճաններէն, որոնք կը տանին իր խոհանոցը: Ինչպէս միշտ, կայ քարի եւ զովութեան, մուրի եւ սուրճի հոտը, կպած է հոտը թաց փայտի, որ կը վառի: Նինա նստած է իր աթոռակին վրայ, հսկայ բուխերիկին առջեւ: Իր աչքերը քիչ մը կու լան մուխին պատճառով, բայց իր շագանակագոյն դարձած մատներով, յօդացաւի պատճառով ձեւազեղւած, կը շարունակէ մնացած փայտի կտորները հրել դէպի բոցը:

“Բարի օր Նինա, բարեւ, զիս կը ճանչնա՞ս:

- Օ՛, **սինեոր փոէթա, քարօ ամիկօ, սոն քոնթենթա տի ռեվետերլա՛**:

Ոտքի կ'ելլէ, հակառակ որ կ'արգիլեն, կը կայնի դանդաղօրէն, ցաւի դժուարութեամբ՝ իր կարծրացած անդամներուն պատճառով: Իր դողդղացող ձախ ձեռքին ունի փայտեայ քթախոտի տուփ մը եւ ուսին ձգած է բուրդէ սեւ կրկնակ մը, զոր ագուցած է կուրծքին վրայ: Ամբողջովին խորշոմած գիշատիչի դէմքին վրայ, իր սրատես եւ ուշիմ աչքերը կը նետեն միաժամանակ տխուր եւ ծաղրական նայուածք մը: Երգիծող բայց միաժամանակ անկեղծ ընկերականութեան երեւոյթով, զիս կը դիտէ: Ան կը ճանչնայ անտառներու գայլը, լաւ գիտէ որ **Սինիորէ** մըն են եւ արուեստագետ մը, բայց նոյն ատեն կեանքիս մէջ շատ բան չի պատահիր: Հոս, Թեսսէնի մէջ, առանձին կը պտըտիմ, ես նաեւ նոյնքան շատ չեմ յաջողած երջանկութեան հասնելու որքան ինք, հակառակ անոր որ երկուքս ալ անվիճելիօրէն զայն ուժգնօրէն փնտռած ըլլանք: Ափսո՛ս, Նինա, որ ծնած ըլլաս ինծի համար քառասուն տարի առաջ: Ափսո՛ս: Արդարեւ, դուն բոլորի աչքին գեղեցիկ չես երեւիր, շատեր քեզ կը դիտեն որպէս ծեր կախարդ, քու քիչ մը կարմրած աչքերովդ, ծռած անդամներովդ, աղտոտ մատներովդ եւ քթախոտդ ռունգերուդ մօտ: Բայց ի՞նչ քիթ այս արծիւի խորշոմած դէմքիդ վրայ: Ի՞նչ շարժումներ երբ ոտքի կ'ելլէ եւ կը կանգնի իր ճգնաւորի մեծութեամբ: Ինչպէս հիանալիօրէն գծուած ազատ եւ յանդուգն աչքերդ կ'արտայայտէին ուշիմութիւն, հպարտութիւն, ամեն կարգի չարութենէ զերծ արհամարհանք: Այլեւս այնքա՛ն ծերացած սիրելի Նինա, ի՞նչ գեղեցիկ աղջիկ, ի՞նչ գեղեցիկ հպարտ եւ ազնուազարմ կին եղած ըլլալու ես: Նինա կը պատմէ անց-

եալ ամրան իր յուշերը, բարեկամներս, քոյրս, սիրած կինս, բոլոր այն անձերը զորս կը ճանչնայ: Նոյն ատեն, կը հետեւի եռուցիչին: Երբ ջուրը կ'եռայ, անոր մէջ կը դնէ սուրճը, զոր աղացած էր իր սուրճի ջաղացքով, առջեւս կը դնէ բաժակ մը եւ քթախոտ կ'առաջարկէ: Այժմ նստած ենք կրակին մօտ եւ կ'ըմպենք մեր սուրճը, կը քթենք բոցերուն վրայ, իրարու կը պատմենք բաներ, իրարու հարցումներ կ'ուղղենք, եւ յետոյ քիչ-քիչ կը լռենք, այս կամ այն միտքը կը յայտարարենք մեր յօդային կաթուածին, ձմրան եւ գոյութեան անորոշութեան մասին:

“Յօդային կաթուած, ի՞նչ բոզ, ի՞նչ սատանայական բոզ, **սփորքա փիւթթանա:** Սատանա՛ն տանի: Գոհ եմ որ եկաք, շատ գոհ եմ: Բարեկամ մնանք: Երբ ծեր ենք, շատ մարդ չկայ մեզ այցելող: Այժմ եօթանասուն ութը տարեկան եմ.”

Կրկին դժուարութեամբ ոտքի կ'ելլէ եւ կ'երթայ կողքի սենեակը, ուր կախուած են, հայելիի կողքին, գունաթափ լուսանկարներ: Գիտեմ որ ինծի նուէր մը պիտի բերէ, իր հիւրին: Բան մը չգտնելով, ինծի կը նուիրէ հին լուսանկարներէն մին, եւ քանի որ ես չեմ ընդունիր իր նուէրը, կը ստիպուիմ քթախոտ առնել:

Բարեկամուհիս խոհանոցը շատ ալ մաքրութիւն չի բուրեր, եւ աւելի նուազ՝ առողջապահութիւն: Գետինը կեղտոտած է թուքով, իր աթոռի հիւսուած յարդերը վաղուց կորսուած են, եւ ձեզմէ քիչեր, ընթերցողներ, սիրով պիտի խմէին թիթեղէ հին սրճեփին մէջ գտնուող սուրճէն, մուրէ սեւցած, լեցուած գորշ մոխիրի մնացորդով, որուն եզերքները ծածկուած են չորցած սուրճի հաստ խաւով մը, կազմուած տարուէ տարի: Հոս կ'ապրինք այսօրուան ժամանակէն դուրս, ներկայ օրերէն դուրս: Անշուշտ այս բոլորը բաւականաչափ խեղճ է եւ մաշած, բաւականաչափ քայքայուած, եւ իրապէս հեռու առողջապահութենէ, բայց միաժամանակ մօտ ենք անտառին եւ լեռան, մօտ այծերուն եւ հաւերուն՝ որոնք կ'չկչալով կ'անցնին խոհանոցէն, այնքա՛ն նման կախարդներուն եւ առասպելներուն: Թիթեղեայ ծռմռած սրճեփին մէջ պատրաստուած սուրճը հիւանալի է: Ան ուժեղ է, շատ սեւ, մուխի թեթեւ լեղի համով մը, հազիւ նկատելի, եւ բուրումնաւտ: Նստիլ Նինայի ներկայութեան եւ անոր հետ սուրճ վայելել, զայն ունկնդրել երբ կը հայիոյէ եւ յետոյ կը դառնայ սիրալիր, հիւանալ անոր ծեր եւ քաջ դէմքին, ինծի աւելի անսահման հաճոյք կը պատճառեն քան երկուտասնեակ մը թէյասեղան-պարանցիկները, երկուտասնեակ մը գրական երեկոյցները՝ հռչակաւոր մտաւորականներու շրջանակներուն մէջ, թեւ չեմ կասկածիր այդ հրաշալի բաներու յարաբերական արժէքին:

Դուրսը արեւը կ'անյայտանայ, Նինայի կատուն տուն կը դառնայ եւ կը նետուի իր ծունկերուն վրայ: Կրակին գոյնը աւելի ջերմ գոյն մը կ'առնէ կիրով ճերմկած պատի քարերուն վրայ: Ձմեռը ցուրտ եղած ըլլալու է, սարսափելիօրէն ցուրտ այս հսկայ եւ դատարկ քարէ քարայրին մէջ, ուր ոչինչ կայ բացի բուխերիկին մէջ այս կայծկլտակցող կրակէն եւ յօդացաւի հետեւանքով ծռմռած ոսկորներով այս պառաւած եւ մենակեաց կնոջմէ, որուն միակ ընկերները կատուն եւ երեք հաւերն են:

Կատուն դուրս կը դրկէ: Նինա ոտքի կ'ելլէ: Կը կանգնի զերթ հսկայ եւ ուրաւականային՝ կիսաստուերին մէջ, նիհար եւ ոսկրուտ ուրուագիծ մը, սպիտակ մազերով փունջով մը, որ կ'իշխէ բիրտ նայուածքով գիշատիչի դէմքի մը վրայ: Չի ձգեր որ մեկնիմ: Չիս հրաւիրած է դեռ ժամ մըն ալ մնալ իր մօտը եւ հիմա կ'երթայ հաց ու գինի բերելու:

Հայացում՝ 3.Պ.



ԽՆԴՐԱՅԱՐՈՅՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՅԻՒՆ ՅԵՏ

Երիտասարդ բանաստեղծուհի է Վիոլետ Գրիգորեանը: Հայ գրական անդամատանին մէջ, վերջին շրջանին, խնդրայարոյց անուն մը: Իւրաքանչիւր սերունդ հրապարակ կու գայ անցեալը հարցականի ենթարկելով, նորը կառուցելու ցանկութեամբ: Հակադրուելով ինքնահաստատում փնտռելու սովորական ընթացք: Մեր անմիջական աշխարհին մէջ, քաղաքակրթութիւնները սահմանագիծ չունին, փոխազդեցութիւնները ընդհանուր օրէնք են, տարբեր մշակոյթներ կը ներթափանցուն մէկը միւսով, երբ հաղորդակցութիւնները ակնթարթային են եւ ընդունուած բարոյական, ընկերային եւ քաղաքական արժեքները գլխիվայր կը շրջուն: Բանաստեղծը, - եւ ընդհանրապէս մտածողը -, չի կրնար հեզասահ կերպով շարունակել իր արարման գործը, քանի որ ստեղծագործութիւնը ինք կրկնութիւն չէ:

Վիոլետ Գրիգորեանի պարագան իւրայատուկ է, քանի որ իր դէմ եղած արտա-

յայտությունները վիճարկումի եւ բանավէճի սահմաններէն անդին անցած են, թող թոյլ տրուի ըսել՝ հասած են գռեհկութեան, քննադատութիւնը եւ բանավէճը փոխադրելով անընդունելի տեղեր: Կան, ի հարկէ, հազուադիւս բացառութիւններ: Կարելի է իր բանաստեղծութեան ոճը եւ նիւթը քննադատել, վեր առնելով անոր արժէքը կամ անարժէքութիւնը, այդ նոյնիսկ օգտակար է գրական հրապարակին ընդհանրապէս: Սակայն անընդունելի է հաւատաքննական աթոռին նստեցնել ենթական եւ խարոյկի դատապարտելու նմանող վերաբերում ունենալ: Ճիշդ է: Ի վերջոյ, ժամանակը եւ ժողովուրդն են դատաւոր, անոնք են որ զտում պիտի կատարեն:

Վիոլէտ Գրիգորեան Փարիզ կը գտնուէր բանաստեղծութեան նուիրուած հատորի մը ներկայացման առիթով, թարգմանութիւն՝ հայերէնէ ֆրանսերէն: Առիթը յարմար էր ճանչնալու անձը եւ ծանօթանալու անոր հայեացքներուն, Երեւան տիրող կիրքի մթնոլորտէն հեռու: Թէ ինչո՞ւ այսքան կիրք կայ բանաստեղծուհիի գործին եւ անձին նկատմամբ, Վիոլէտ Գրիգորեան կը փորձէ բացատրել:

- Պատճառները բազմաթիւ են, կ'ըսէ Վիոլէտ Գրիգորեան, եւ կ'արժէ զանոնք վերլուծել: Հայաստանի մէջ ներկայիս իսկական «գրական վերլուծութիւն» չկայ, եւ անոր բացակայութեան կան հայհոյանք կամ հիացում, ծայրայեղութիւններ: Ի հարկէ կան նաեւ անձնական յաւակնութիւններ, ըսենք՝ նախանձ, մէկը միւսին դէմ: Դժբախտաբար տեսակէտի տարբերութիւններու հարցեր չկան, անոնք չեն քննուիր: Իմ մասիս կը խօսին՝ նսեմացնելու համար: Ինչպէս ըսի, այսօր գրական վերլուծումներ չկան, իսկ սովետական շրջանին կար գաղափարախօսական վերլուծում: Շատ բան է փոխուած: Այժմ, չգրուած գրաքննութիւն կայ, ազգային քարոզչական կացութենէն մեկնելով, ազգայնամոլական, հեռատեսիլով, մամուլով: Բայց ի՞նչ ազգայնամոլութիւն, կայ քաղաքական շահարկում, «բիզնեսային» առնչութեամբ: Բացատրեմ: Սիկարէթ, կ'արտադրեն...ազգի համար, ազգի փրկութիւն, լաւ ազրանք՝ ազգին համար: Մտածողութիւնները չեն փոխուած, կար կոմունիստական գրաքննութիւն, այժմ կայ քրիստոնէական գրաքննութիւն: Միտում կայ ստեղծելու վերահսկողութիւնը եւ հակակշռելու ստեղծագործութիւնը:

Քաղաքական իշխանութեան եւ ռուսական տիրապետող ազդեցութեան մասին ընթացաւ զրոյցը, մանաւանդ երբ կը յիշենք որ Հայաստանի աւագանին, նաեւ ուրիշներ, իրենց զաւակները կը զրկէին ռուսական դպրոցներ, որուն հետեւանքով, ներկայ իշխանութեան մաս կազմողներէն շատեր կու դան այդ դպրոցներէն: Վիոլէտ Գրիգորեան այս մասին կ'արտայայտէ հետքերական տեսակէտներ:

- Ներկայիս եւս օտար դպրոցները, ռուսական եւ այլ, կը գերազնահատուին, հայկական դպրոցները կը համարուին տիրացուական, նեղմիտ: Այս վերաբերումը, անցեալին եւ ներկայիս, կը հիմնուի անձնական շահերու վրայ, եւ ոչ ազգային կրթութեան եւ մշակոյթի հեռանկարի: Այս պայմաններուն մէջ ստեղծագործական մթնոլորտը կը բացակայի, մարդիկ, իշխանութիւն եւ հեղինակութիւններ, կը համախմբուին դրամագլուխի - կապիտալի - շուրջ:

Գրականութիւնը գիրք է, գոր հարկ է տպագրել եւ վաճառել: Վիոլէտ Գրիգորեան դառնութեամբ կը խօսի այս մասին, երկու պատճառներով:

- Հայաստանի մէջ գրքի շուկան չէ ձեւաւորուած, հայերէն գրքերուն կարեւորութիւն չի տրուիր, գրախանութիւններու մէջ ռուսական գիրքերը կը ցուցադրուին: Վերաբերում ճշդած են իմ գրքերուս դէմ: Ըսած են որ ինչ որ կը գրեմ «անտի-պոէզիա» է, հակաբանաստեղծութիւն: Հայաստանի մէջ իսկական ընթերցողը սկսած է նոր յայտնաբերուիլ: Պարտադրուած գրականութիւն չկայ, վերջացած են այն օրերը երբ քարոզչական նպատակներով հարիւրհազար տպաքանակով դիրքեր լոյս կը տես-


նէին: Յառաջդիմութիւնը այն է որ նոր ընթերցողը ինք կ'ընտրէ եւ իր ուզածը կը կարդայ, չի հետեւիր քարոզչական միտումով տրուած ուղղութիւններու:

Այս օրերուն պիտի տրուին Նոպէլեան մրցանակները: Երբեմն, հայկական միջավայրի մէջ, Հայաստան եւ Արիւնք, խօսք կ'ըլլայ հայ մը ներկայացնելու գրականութեան մրցանակի համար: Այս հարցումներուն կը պատասխանէ Վիոլէտ Գրիգորեան:

- Հայաստանի գրողները իրարու չեն օգներ, ընդհակառակն: Իսկ Նոպէլեան մրցանակի թեկնածութեան մասին ընդհանրապէս խօսք չէ եղած, եղած են սրճարանային խօսակցութիւններ:

Հարկ էր որ Վիոլէտ Գրիգորեան խօսէր իր գրականութեան եւ անոր դէմ եղած բռնն հակազդեցութիւններու մասին: Գրասէրներ ծանօթ են բազմաթիւ գրութիւններու, որոնք բռնն կերպով կը խօսին իր բանաստեղծութեան մասին, ամփոփելով ըսենք որ զայն կը համարեն աղբ, այնքան որ քաղաքի աղբատար բեռնակառքերը չեն բաւեր զայն մաքրելու: Վիոլէտ Գրիգորեան, տխրութեամբ կը խօսի:

- Իմ անձը կը մարմնաւորէ կին մը որ կը ստեղծէ ազատ գրականութիւն: Հալածանք կայ այն տրամաբանութեամբ, որ կին մը կրնա՞յ նման բան գրել, թեմաներ՝ որոնք կը մերժուին, մանաւանդ՝ սեռական բառապաշարը կնոջ մը խօսքերուն մէջ: Դէմ են ինծի, համարելով որ ես սեռական բանաստեղծութիւն կը գրեմ, իսկ ես չեմ համոզուած որ սեռական բանաստեղծութիւն կը գրեմ: Կը խորհիմ որ իմ բանաստեղծութիւնը չ'ընկալուիր, քանի որ ազգային չէ: Իսկ ես կ'ըսեմ որ հայ գրականութեան մէջ կինը միշտ եղած է, Շուշանիկ Կուրդինեան գրած է կնոջ մասին, անոր ապրումներուն մասին: Հայ ընկերութեան մէջ կնոջ մասին պատկերացումը իսլամական է, ես կ'ըսեմ՝ տղամարդու «չովինիզմ»: Իրաւ գրականութեան զարգացումը չի կրնար տեղի ունենալ արգելքներով, գրականութիւնը կը ստեղծուի արգելքները մերժելով: Ներկայիս հայ գրողը



պատի դէմ կը գտնուի: Աւելցնեմ որ մեր ժողովուրդը աւելի լայնախոհ է, հասկացողութեան ոգի ունի, մինչ մտաւորականութիւնը խոչընդոտ է, ան ինքզինք կը համարէ ազգային աւանդոյթներու շարունակող: Իսկ այս բոլորի կողքին, կարեւորութեամբ պէտք է նշել որ մեր մէջ իսկական քննադատութիւն չկայ: Յակոբ Օշական ծանօթ չէ: Երիտասարդ գրողը կ'աշխատի համալսարանի մէջ, եթէ չհետեւի ճիշդ համարուած ուղիին... գործէ կը հանեն: Կը տիրեն տգիտութիւն եւ քծնանք: Բանաստեղծութիւնը լաւ բանաստեղծութիւն պէտք է ըլլայ:

Հայերէնը, Սփիւռքի մէջ տեղի կու տայ, Հայաստանի մէջ կայ լեզուի խնդիր: Խօսեցանք նաեւ գրական դպրոցներու մասին, նաեւ՝ թարգմանական գրականութեան: Հետաքրքրական էր լսել երիտասարդ եւ ընդունուած ու միջին չափանիշներու չպատշաճող բանաստեղծուհին:

- Ժողովուրդի մը լեզուն իր ինքնութեան հիմքն է, ան ներծծուած է ազգայինով: Հայաստանի մէջ լեզուի գտումը ընթացքի մէջ է: Գրական դպրոցները հայկական չեն, բայց անոնք կ'ազդեն, իւրաքանչիւրը կը բերէ իր երանգը: Օրինակ, Վահան Տէրեանի խորհրդապաշտութիւնը կապկում չէ: Ազդեցութիւնները բնական են: Եթէ միայն ազգայինով պիտի բաւարարուինք, պէտք է մնալ շարականի սահմաններուն մէջ: Բայց այսօր ո՞վ շարական կը գրէ, եւ եթէ գրուի ո՞վ պիտի կարդայ: Երբ նորերը յանգաւոր բանաստեղծութիւն չեն գրեր, ոմանք կը զարմանան, բայց պէտք է գիտնալ որ յանգաւոր բանաստեղծութիւնը հայկական չէ: Թարգմանական գրականութիւնը կ'առնչուի մշակութային քաղաքականութեան, ան առաջնահերթութիւններու մաս կը կազմէ: Անով է որ գրականութիւնը եւ լեզուն կը մտնեն միջազգային դաշտ: Թարգմանական գրականութիւնը չի կրնար բաւարարուիլ անցեալին եղածով, այլ հարկ է կրկին թարգմանել օտար գրականութիւնը, նոր ոճով, ժամանակակից լեզուով:

Վիոլէտ Գրիգորեան երիտասարդ է, եւ բնական էր որ խօսէինք սերունդներու յարաբերութեան մասին: Խիստ ուշագրաւ դատումներ ունի:

- Սովետներու ժամանակ նորերուն տեղ կար, նորերը կը քաջալերուէին: Այսօր, մեծ թիւով երիտասարդներ եւ աւագները համերաշխ են, միջին սերունդն է որ տարբեր կեցուածք ունի: Նորերը, աւագներուն պէս, ազգայնական դիրքերու վրայ կը գտնուին, ինչ որ յարակարծիք է - փարատութիւն: Զարմանալի է որ երիտասարդները ամբողջատիրական - տոտալիտար - եղանակով կը մտածեն:

Հայաստանի եւ Սփիւռքի գրականութիւններու փոխյարաբերութեան մասին երբ հարց տուի, Վիոլէտ Գրիգորեան պարզապէս ըսաւ.

- Հայաստան մատներու արանքէն կը դիտեն Սփիւռքը եւ անոր գրողները:

Այս վերջին մտածումը, թէ եւ խրտչեցնող, մտածելու առիթ պէտք է ըլլայ երկուստեք, գերանցում կատարելու նպատակով: Արծարծուած հարցերը եւ յայտնուած տեսակէտները, խմբագրուելով, բան մը կ'որսնցնեն իրենց հարազատութենէն, բայց կը մնան խնդիրները, որոնք յաղթահարուելով, յառաջդիմութեան ազդակ կը դառնան:

Օրին զարմացած էի որ Արամ Ա Կաթողիկոսի նախաձեռնութեամբ Անթիլիաս գումարուած գրողներու համաժողովին, աւագներու կողքին, չէր եկած Վիոլէտ Գրիգորեան, որուն ներկայութիւնը տարբեր երանգ կրնար բերել, ապահովաբար մասնակցութեան փափաքը չէր պակսած:

3. Պ.

Հոկտեմբեր 2006, Փարիզ

ԻՄՄԱՆՈՒԷԼ ԿԱՆՏ՝ ԳԵՐՄԱՆԱՅԻ ՄԵԾ ԻՄԱՍՏԱՍԵՐԻՆ (1724-1804)

«ԶՈՒՏ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ»

ԿՈԹՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՎ

Հայերէն մտածող եւ հայախօս մարդկանց համար եւ մանաւանդ այն հայախօսների համար, որոնք եւրոպական կարեւոր ու տարածուած լեզուներից որեւէ մէկին չեն տիրապետում, մեծ գոհունակութիւն ու հրճուանք է տրամադրութեան տակ ունենալ գերմանացի ականաւոր փիլիսոփայ՝ Իմմանուէլ Կանտի **Զուտ Բանականութեան Քննադատութիւն** գործը այն աշխատասիրութեան (Թարգմանիչ՝ Սերգէյ Ստեփանեան, «Իմացութիւն» գրադարան, Թարգմանութեան խմբագիր՝ Լեւոն Աբրահամեան, Երեւան 2006, Սարգիս Խաչենց Փրինթինֆո) հայերէն թարգմանութիւնը՝ չափազանց կարեւոր ու շնորհակալ մի հրատարակութիւն, որը իբրեւ նուէր կարող է ընդունուել բոլոր հետաքրքրասէրների կողմից:

Նիւթից մի քիչ չեղուելով նշենք, որ մշակոյթների անհաւասար ու դաժան մրցակցութեան այս դարում, ոչ բազմամարդ եւ փոքր երկրների եւ այս պարագայում, հայրութեան ու Հայաստանի գոյատեւման համար կենսական նշանակութիւն ունի զարգացած ու հարուստ մշակոյթը:

Մեծ ու բազմամարդ երկրները իրենց մշակոյթը զարգացնելու եւ հարստացնելու համար մտահոգուելու եւ յատուկ քաղաքականութիւն մշակելու շատ էլ կարիք չունեն, քանզի այդ երկրներում շուկան այնքան ընդարձակ է եւ գեղարուեստական, գիտական, իմաստասիրական գործերի ու աշխատասիրութեանց համար՝ պահանջարկը այնքան մեծ է, որ մշակոյթը զարգանում ու հարստանում է համարեա ինքնաբերաբար, սակայն մեր երկրում մշակոյթը չի կարող զարգանալ ու հարստանալ ինքնաբերաբար:

Ի խնդիր հայկական մշակոյթի զարգացման ու հարստացման, անհրաժեշտ է, որ մեր երկրի իշխանութիւնները եւ աշխարհասփիւռ հայկական կազմակերպութիւնները, յատուկ ու հետեւողական քաղաքականութեամբ, նիւթապէս ու բարոյապէս եւ նպատակայարմար բոլոր միջոցներով, օժանդակեն հայկական մշակոյթի զարգացնող ու հարստացնող բոլոր մարդկանց ու կառույցներին:

Աշխարհին բացուելու, զարգացած մր-շակոյթների հետ քայլ պահելու եւ հայկական մշակոյթը զարգացնելու ու հարստացնելու առումով, ամենակարեւոր քայլերից մէկը, գեղարուեստական արժէքաւոր ու նոր եւ նաեւ դասական երկերի եւ գիտական ու իմաստասիրական բնագաւառներում ականառու նորութիւն հանդիսացող աշխատասիրութեանց թարգմանութիւնն է:

Հայկական մշակոյթը զարգացնելու, հարստացնելու եւ անխոցելի ու տոկուն



դարձնելու համար թարգմանութիւնը այնքան կենսական է, որ մենք այս դարը պէտք է դարձնենք մի նոր թարգմանչաց դար՝ ոսկեդար, սակայն թարգմանական նման շարժում ստեղծելու համար անհրաժեշտ են տնտեսական հսկայ միջոցներ, որոնցից առայժմ դուրկ է Հայաստանը (բայց ոչ հայութիւնը ամբողջութեամբ վերցրած) եւ դա ի հարկէ մեծ դժուարութիւն է, բայց միաժամանակ այդ շարժումը ստեղծելու համար հայութիւնը օժտուած է մեծ կարողականութեամբ, քանզի Հայաստանի քաղաքացիների եւ աշխարհի շուրջ յիսուն երկրներում սփռուած հայերի մէջ կան մեծ թուով հայեր, որոնք տիրապետում են հայերէնի եւ մէկ-երկու այլ լեզուների, որոնք կարող են լաւ թարգմանիչներ դառնալ, այնպէս որ առանց յաւելեալ ճիգի, մենք արդէն իսկ ունենք մեծ թուով թարգմանիչներ՝ որոնց պատրաստման համար տարբեր երկրներ ստիպուած են նիւթական հսկայ միջոցներ յատկացնել:

Թարգմանական շարժման անցնելու համար վերեւում տնտեսական միջոցների պակասը նշեցինք իբրեւ դժուարութիւն, սակայն այդ դժուարութիւնը կարելի է յաղթահարել: Փակագծերում նշեցինք, որ հայութիւնը որպէս ամբողջութիւն նիւթական պակասի հարց չունի, ուստի գործը պետական մակարդակով կազմակերպելով եւ օգտուելով հայութեան նիւթական կարողութիւնից ու մեր յիշած թարգմանական կարողականութիւնից, մենք կարող ենք այս դարը վերածել թարգմանչաց դարի՝ ոսկեդարի եւ սա ոչ միայն իղձ ու փափաք է, այլ նաեւ՝ կարելիութիւն եւ հնարաւորութիւն:

Այժմ անցնենք մեր բուն նիւթին եւ անդրադառնանք Աերգէյ Ատեփանեանի շնորհակալ գործին՝ Իմմանուէլ Կանտի **Ձուտ Բանականութեան Քննադատութիւն** աշխատասիրութեան հայերէն թարգմանութեանը:

Այս աշխատասիրութիւնը բաւական բարդ է եւ բարդ է ոչ միայն շարքային ընթերցողի համար, այլ բարդ է նաեւ քիչ թէ շատ իմաստասիրութեամբ զբաղուող մարդկանց համար:

Կանտի կազմած պարբերութիւնները եւ նախադասութիւնները բաւական երկար են եւ դրանք լաւ ըմբռնելու համար յաճախ նոյն նախադասութիւնները քանի մը անգամ պէտք է կարդալ:

Հեղինակը փակագիծ շատ է բացում եւ փակագծերում երկար ու բարակ բացատրութիւններ է տալիս: Գրանք խոչընդոտում են բովանդակութեան ընկալմանը:

Էջատակի յաւելեալ ծանօթութիւններն ու բացատրութիւնները թէ՛ շատ են եւ թէ՛ երկար ու բարակ, որոնք խանգարում են աշխատասիրութեան (թարգմանութեան) դիւրընթեռնելիութիւնը:

Գերմաներէն չիմանալով հանդերձ, կարելի է ասել, թէ յիշեալ աշխատասիրութեան (թարգմանութեան) բարդութեան պատասխանատուն ինքը հեղինակն է եւ ոչ թէ այդ աշխատասիրութեան թարգմանիչը:

Կանտը ժամանակին քննադատուել է իր աշխատասիրութեանց բարդութեան համար եւ ինքը եւս ընդունում է, որ բարդ են իր գրութիւնները:

Ինչպէս արդէն անդրադարձանք, յիշեալ գրքի թարգմանութիւնը ինքնին մեծ գործ է եւ այդ թարգմանութեան մէջ տեղ են գտել հայերէն բառեր, որոնք չկան էդ. Ադայեանի եւ Ատ. Մալխասեանցի բացատրական բառարաններում եւ 1975-ին Երեւանում, ռուսերէնից հայերէնի թարգմանուած Փիլիսոփայական Բառարանում:

Կարելի է ենթադրել, որ յիշեալ նոր բառերը **Ձուտ Բանականութեան Քննադատութիւնը** հայերէնի թարգմանած թարգմանչի յօրինումներն են, որոնք հարստացնում են մեր լեզուն:

Ահա մի քանիսը այդ բառերից՝

Ամենագիրկ, անդրազանց, բառօգտագործում, գոյրնիաց, զգայահասու, ինքնա-

կասկած, լեզուակիրառում, խաղաղորոշ, նախաէութիւն:

Սակայն սրանց կողքին, յիշեալ թարգմանութեան մէջ կան օտար բառեր, ինչպէս օրինակ՝ **տրանսցենդենտալ** (Հայաստան մարդու համար չափազանց դժուար է այս եւ նման դժուարահունչ օտար բառերի արտաբերումը) **անթրոպոմորֆիզմ**, **ինտուիտիւ**, **սիլլոգիզմ** եւ հարիւրաւոր նման բառեր, որոնց կարելի է հանդիպել թարգմանութեան համարեա բոլոր էջերում:

Հարցն այն է, որ մեր յիշած ու նաեւ չյիշատակած այդ օտար հարիւրաւոր բառերի համարժէք ու նոյնանիշ հայերէն բառերը մասամբ կարելի է գտնել բացատրական բառարաններում, օրինակ մեր բացատրական բառարաններում **տրանսցենդենտալ** բառի դիմաց կարելի է գտնել **վերազանցական** հայերէն գեղեցիկ բառը:

Կարծում ենք այսպիսի պարագաներում թարգմանիչը ի խնդիր ճշգրտութեան, եթէ ցանկանում է գործածել օտար բառը, կարող է այդ անել հայերէն բառի դիմաց, փակագծերի մէջ, այն նշելով:

Ասենք նաեւ, որ յիշեալ թարգմանութեան մէջ կան բազմաթիւ այնպիսի օտար բառեր, որոնք նոյնիսկ գոյութիւն չունեն մեր յիշած բացատրական բառարաններում. գոյութիւն չունեն նաեւ Փիլիսոփայական Բառարանում: Այս բառարանի վերջին չորս էջերում գլխաւորաբար լատիներէն եւ երբեմն նաեւ անգլերէն կամ ֆրանսերէն փիլիսոփայական եզրերի դիմաց գտնում ենք նրանց բացատրութիւնը եւ հագուադիւպօրէն նաեւ հայերէն համապատասխան եզրը, սակայն բառարանի այս ամփոփ բաժնից չի կարող օգտուել եւրոպական գլխաւոր լեզուները չիմացող Հայաստանը:

Ահա մի քանիսը այն օտար բառերից, որոնք անգտանելի են նոյնիսկ բառարաններում՝ **Ֆիլոդոքսիա**, **սցենտիֆետական**, **հրպոստատիկ**, **տրեդիկարիլիա**, **նոռոգիստ**, **ասսերտորիկ**, **ասիմտոտիկօրէն** եւ այլն:

Հայ ընթերցողի համար այսպիսի դժուարահունչ ու անըմբռնելի օտար բառերի անհարկի գործածութիւնը էլ աւելի է բարդացնում **Զուտ Բանականութեան Քննադատութիւն** արդէն իսկ բարդ աշխատասիրութեան ընկալումը:

Օտար բառերի այս կոյտը յիշեալ թարգմանութեան մէջ ոչ միայն չի նպաստում մեր լեզուի հարստացմանը՝ այլ ընդհակառակն՝ աղքատացնում է հայերէնը:

Այստեղ կարեւորութեամբ կ'ուզէինք արձանագրել, որ մենք դէմ ենք լեզուական մաքրամոլութեան, սակայն դէմ ենք նաեւ օտար բառերի անհարկի գործածութեան, որոնք աղճատում ու աղաւաղում են մեր լեզուն:

Կան բազմաթիւ զուտ տեղական բառեր, յատկապէս կենդանիների, սովորութեանց, կերակրատեսակների ու բոյսերի անուններ, որոնք կարող ենք փոխ առնել օտարներից. օրինակ՝ մենք ստիպուած չենք զուտ տեղական **կանգուրու** կամ **կանգառու** կոչուող կենդանուն **ազեկազ** անուանել՝ դա մաքրամոլութիւն է:

Մեզ կարող են առարկել, որ եւրոպական լեզուները առատօրէն օգտւում են լատիներէնից ու յունարէնից եւ իսկապէս դա այդպէս է եւրոպական համեմատաբար նոր լեզուների պարագայում, որոնց համար յիշեալ երկու լեզուները հիմք են ծառայում, սակայն հայերէնը եւրոպական նոր լեզու չէ եւ յետոյ՝ հայերէնում բառակազմութիւնը եւ նոր բառերի յօրինումը բաւական դիւրին է:

Թարգմանութեան մէջ հանդիպեցինք բառերի, որոնց տառադարձութիւնը չի համապատասխանում բառարաններում գոյութիւն ունեցող նոյն այդ բառերի տառադարձութեան. օրինակ թարգմանութեան մէջ հանդիպեցինք **իմմանենտ**, **Ֆիզուր** եւ **ապպերցեպցիա** բառերին, իսկ բառարաններում՝ **իմանենտ**, **Ֆիզուրա** եւ **ապերցեպցիա** ձեւերին:

Զուտ Բանականութեան Քննադատութիւն գրքում որոշ բառերի միայն մէկ

մասն է տպուած եւ ընթեռնելի եւ ոչ ամբողջը:

Գրքում որ շաղկապի եւ նրա թեքումած՝ որին, որը, որի, որն ձեւերի փոխարէն, ոչ միշտ, սակայն յաճախ, հանդիպում ենք **ինչ** դերանուն եւ նրա թեքումած, **ինչին**, **ինչը**, **ինչի**, **ինչն** ձեւերին:

Չնայած երկրորդ ձեւերը եւս գործածուում են մեր դասական գրականութեան մէջ՝ սակայն շատ հազուադէպ:

Մեր կարծիքով պարզապէս նախընտրելի են առաջին ձեւերը:

Յիշեալ ձեւերից բացի գրքում **որեւէ** կամ **իւրաքանչիւր** բառերի փոխարէն յաճախ հանդիպում ենք **ցանկանալ** բայի **ցանկացած** յարակատար ձեւին. օրինակ՝ **«ցանկացած աստուածաբանութիւն»**, **«ցանկացած հիմնադրոյթ»**, **«ցանկացած դրոյթ»**, **«ցանկացած սխալ»**:

Մեզ թւում է, որ **ցանկացած** բառի այդպիսի գործածութիւնը բաւական խորթ է հայերէնի լեզուամտածողութեանը:

Մի՞թէ կարելի է բացասական իմաստ արտայայտող բառերի կողքին գործածել **ցանկացած** բառը: Արդեօք կարելի՞ է ասել՝ **ցանկացած** սխալ, **ցանկացած** ոճիր, **ցանկացած** հիւանդութիւն...:

Յիշեալ գրքում 366-րդ էջից մինչեւ 394-րդ էջը, էջերի եւ հետեւաբար պարբերութեանց ու նախադասութեանց յաջորդականութիւնը այնպէս է խախտուած, որ մեծ դժուարութեամբ է մարդ կարողանում միմեանց յաջորդող մտքերին հետեւել. օրինակ՝ գրքի 381-րդ էջի շարունակութիւնը գտնուում է ոչ թէ 382-րդ էջում, այլ՝ 383-րդ էջում եւ այդպիսին է գրքի 28 էջերի պարագան:

Գրքում տեղ գտած թերութեանց ու սխալների համար թարգմանչից գատ, պատասխանատու են նաեւ գրքի հրատարակիչները, թարգմանութեան խմբագիրը եւ այն տպարանը, որ լոյս է ընծայել գիրքը:

Գիրքը իր բոլոր թերութիւններով հանդերձ, ինչպէս ասացինք, շնորհակալ ու խրախուսանքի արժանի գործ է եւ յոյս ունենք ու նաեւ հաւատում ենք, որ թարգմանական կարեւոր գործին լծուած մեր մտաւորականները կը շարունակեն իրենց յոյժ հայանպաստ գործը:

Ի միջի այլոց նշենք, որ ժողովրդին յուզող ամենածանրակշիռ հարցերը եւ թերեւս նաեւ մեր այս յօդուածում առաջ քաշուած հարցերը կարելի է լուծել համայն հայութեան կարողութիւններն ու կարողականութիւնները լաւապէս օգտագործելով եւ դա հնարաւոր է, եթէ մեր երկիրը օժտուի Հայաստան-Ափիւռք յարաբերութիւնները կարգաւորող նախարարութեամբ: Այդ նախարարութեան անհրաժեշտութեանը անդրադարձել ենք «Ալիք» օրաթերթի 2007-ի Ապրիլ 3-ի համարում՝ «Հայաստան-Սփիւռք Յարաբերութիւնները Կարգաւորող Նախարարութիւնը Կենսական Անհրաժեշտութիւն է» յօդուածով:

ԱՅՎԱԶ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Սիտնի, Հինգշաբթի, 24 Յունուար 2008

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՕՆԻ ԴԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

1917 թ. Դեկտեմբերի 5/18-ին, Երզնկայում, Ռուսական, զինուորական հրամանատարության, Անդրկովկասի Կոմիսարիատի ու Թուրքիայի միջև կնքուեց զինադադարի պայմանագիր, որի նկատմամբ կողմերը հետապնդում էին տարբեր նպատակներ: Եթե Կոմիսարիատը այն համարում էր արտաքին քաղաքականության առաջին լուրջ նուաճում, ապա թուրքական կողմը զինադադարը օգտագործելու էր անգլիական ռազմաճակատն ուժեղացնելու, Անդրկովկասի քաղաքական միասնությունը քայքայելու եւ յարմար պահը ներկայանալուն պես վերջնական հարուած հասցնելու համար: Թուրքիան այդպես էլ վարուեց: 1918թ. Յունւարի 30-ին, խախտելով զինադադարի պայմանները, թուրքերը անցան յարձակման ու մինչեւ Փետրուարի 29-ը գրաւեցին Երզնկան, Բայբուրդը, Մամախաթունն ու Կարինը (Էրզրումը): Թուրքական յարձակումը աւելի խորացրեց երկրամասի ազգային կուսակցությունների հակասությունները, աւելի պարզորոշ ընդգծուեցին նրանց գործունեության ասպարեզները: Վրաց մենշեւիկները ամրացնում էին Պաթումի, Օզորգեթի, Փոթիի պաշտպանությունը, Հ. Յ. Դաշնակցությունը օրհասական պայքար է մղում Սարիղամիշը, Կարսն ու Ալեքսանդրապոլը փրկելու համար: Մուսաւաթականները յաղթական դրօշը բարձր պարգած դէպի երկրամասի խորքն էին առաջնորդում թուրքական բանակին:

Այս պայմաններում խորացող կենտրոնախոյս գործելակերպի կնքահօր դերը ստանձնում էին մուսաւաթականները, որոնք իրականացնում էին երկրամասի տնտեսական ու քաղաքական կազմալուծման թուրքական ծրագիրը: Այս առիթով Գ. Ղարաջեանը գրում էր. «Մուսաւաթը սկզբից մինչեւ վերջ իր դաւաճանական գործողություններով եւ արարքներով ձեռք-ձեռքի տուած Էնվեր-Թալեաթ կառավարության հետ հանդիսացաւ մի կատարեալ պատուհաս Անդրկովկասի քաղաքական եւ կուլտուրական կեանքի համար»:

Քաղաքական այս տարաձայնություններն էլ դարձան Կոմիսարիատը քայքայող գործոնները: 1918 թ. Փետրուարի 10-ին նրան փոխարինելու եկաւ Սէյմը: Մենշեւիկ Ա. Զինսկելին ընտրուեց Սէյմի նախագահ եւ արտաքին գործերի նախարար: Խ. Կարճիկեանը նշանակուեց ֆինանսների, Յ. Զաջազնունին՝ խնամակալության նախարար:

Սէյմի երկրորդ նիստը նուիրուած էր քաղաքական հարցերի մշակմանը: Հ. Յ. Դաշնակցության անունից ելոյթ ունեցաւ Յ. Զաջազնունին: Նրա այն միտքը, թէ Անդրկովկասը պէտք է դիտել որպէս Ռուսաստանի մասնիկ, լուրջ մտահոգութիւն ծնեց մուսաւաթի ու մենշեւիկների մէջ, որովհետեւ Զաջազնունու միտքը նշանակում էր կապերի պաշտպանում Ռուսաստանի հետ, իսկ մենշեւիկներն ու մուսաւաթականները վարում էին հեռանալու քաղաքականութիւն: Սա էր պատճառը, որ Սէյմը ցաւալի անտարբերութիւն էր ցուցաբերում շարունակուող թուրքական յարձակման նկատմամբ, քա-

մահրանքով ընդունում հայերի ռուսասիրութիւնը, որն այդ ժամանակ հայ ժողովրդի անվտանգութեան գրաւականն էր համարում:

1918 թ. թուրք-գերմանական համատեղ յարձակումն աւարտուեց Բրեստի պայմանագրով /1918թ. Մարտի 3/: Սէյմը չճանաչեց պայմանագիրն ու որոշեց անջատ հաշտութիւն կնքել Թուրքիայի հետ: 1918թ. Յունուարի 1-ին թուրքական կովկասեան բանակի հրամանատար Վեհիբ փաշան Էնվերի անունից հեռագիր ուղարկեց Թիֆլիս, հարցնելով, թէ «Անկախ Ադրկովկասի» կառավարութիւնը ի՞նչ է մտածում հաշտութեան պայմանագրի մասին, յայտնում նաեւ, որ մտադրութիւն կայ պատուիրակութիւն ուղարկել Թիֆլիս, հաշտութիւն կնքելու համար:

Փաստօրէն Թուրքիան Անդրկովկասի կառավարութեանը յուշում էր դիմել անկախութեան, նպատակ ունենալով իր հսկողութեան, ապա նաեւ գերիշխանութեան տակ առնել երկրամասը, ի վերջոյ Անդրկովկասը վերածելով իր եւ Ռուսաստանի միջեւ պատնէշի:

Սէյմը չէր կարող չարձագանգել «հրաւերին»: 1918 թ. Փետրուարի 16-ին (Մարտի 1), Սէյմը քննարկեց այս խնդիրը, մշակելով նաեւ երկրամասի պատուիրակութեան գործունեութեան նախագիծը, որը յանգում էր հետեւեալին. 1. Անկախ Բրեստի պայմանագրից, Անդրկովկասը իրաւունք ունի հաշտութիւն կնքել Թուրքիայի հետ: 2. Անհրաժեշտ է հասնել վերջնական հաշտութեան: 3. Հաշտութեան պայմանագրի հիմքում պէտք է դնել մինչ պատերազմեան ռուս-թուրքական սահմանի ճանաչման պահանջը: 4. Պէտք է հասնել «Արեւելեան Անատոլիայի ժողովուրդների ինքնորոշման իրաւունքի» ճանաչմանը, յատկապէս՝ «Տաճկահայաստանի աւտոնոմիայի տաճկական պետութեան շրջանակներում»:

Սէյմի նոյն նիստում ընտրուեց պատուիրակութիւն Ա. Չխենկելու գլխաւորութեամբ, որի կազմում էին նաեւ Յ. Զաջազունին, Ալ. Խատիսեանը եւ պատմաբան Լեօն՝ որպէս խորհրդական:

Երկրամասի պատուիրակութիւնը կազմուած է քառասուն հոգուց: Թուրքական թերթերը ծաղրանքով նկատում էին. «Եթէ եկածը զինուորական արշաւախումբ մըն է, փոքր է, բայց եթէ հաշտութեան պատուիրակութիւն մըն է, չափից աւելի մեծ է»:

Մեծաքանակ պատուիրակութեան գոյութիւնը ինքնին խօսում էր երկրամասի քաղաքական անմիաբանութեան, ազգային կուսակցութիւնների խորը տարաձայնութիւնների, անվստահութեան մասին:

1918 թ. Մարտի 1/14 Տրապիզոնում սկսուեցին բանակցութիւնները, որոնք սակայն աւարտուեցին անարդիւնք: Սէյմը տեղեկանալով թուրքական նոր պահանջների մասին, Ապրիլի մէկին ետ կանչեց պատուիրակութեանը եւ որոշեց մահի եւ կենաց պայքար մղել երկրամասի պատիւը պաշտպանելու համար: Ընտրուեց Պաշտպանութեան Գերագոյն Խորհուրդ: Բանակցութիւններից հրաժարուելը, պաշտպանութեան խորհրդի ստեղծումը դիտելով որպէս պատերազմի շարունակում, թուրքական կողմը պատրաստուում էր նոր յարձակման: Այն յոյսը, թէ պատերազմի սպառնալիքը կը համախմբի ուժերը, դարձաւ լոկ խաբկանք: Փոխանակ զաւթիչի դէմ միասնական պայքար մղելուն, մենշելիկներն ու մուսաւաթականները որոշեցին ազատուել կաշկանդից խնդրից, այն է՝ յայտարարել Անդրկովկասի անկախութիւնը եւ որպէս լիիրաւ կողմ նստել նոր բանակցութիւնների

սեղանի շուրջ: Այս իրավիճակում, երբ Անդրկովկասի ձեռական միասնությունը երաշխիք չէր դառնում հայ ժողովրդի անվտանգության, ի՞նչ հնարաւոր տարբերակներ կային խնդրի լուծման ուղղութեամբ: «... ոմանք այդ օրերին ցոյց էին տալիս Խորհրդային Ռուսաստանի ճամբան, առաջարկելով ձեռք մեկնել բոլշեւիկներին:... Սակայն այս մտքի անհեթեթութիւնը այնքան ակներեւ էր, որ Նոյնիսկ նրա հեղինակները լուրջ քայլ չառին այդ ուղղութեամբ»:

Տուեալ տեսակետի համար հիմք էին ծառայում 1917 թ. Դեկտեմբեր-1918 թ. Յունուար ամիսներին Թիֆլիսում Ստ. Շահումեանի, Ա. Կասեանի, Գ. Շահվերդեանի, Երեւանում Պ. Մակինցեանի հետ Զ. Յ. Դաշակցութեան լիազօրուած ներկայացուցիչների բանակցութիւնները, որոնք նպատակ ունէին ճշգրտել խորհրդային կողմնորոշման հետ կապուած առաւել կարեւոր հարցերը: Բանակցութիւնները, սակայն, անարտուեցին անարդիւնք: Բոլշեւիկները հայ ժողովրդին օգնելու ուղղութեամբ բացի խոստումներից, գործնական ոչ մի քայլ չձեռնարկեցին:

Քաղաքական մեկուսացման մէջ գտնուող հայ ժողովուրդը, ստանձնել էր թուրքական յարձակման դեմ մարտնչողի դերը, սպասւում էր առաւել ծանր գոյապայքար: Անդրկովկասի լարուած քաղաքական կեանքը, մենշեւիկների ու մուսաւաթականների անկախութեան ձգտումները հրամայաբար պահանջում էին ճշգրտել այն ուղին, որով ապագայում ընթանալու էր հայ ժողովուրդը:

Այս նպատակով էլ, 1918 թ. Ապրիլի 6-8-ը, Ալեքսանդրապոլում գումարւեց հայ քաղաքական կուսակցութիւնների, Սէյմի եւ կառավարութեան հայ անդամների, անկուսակցական հասարակական գործիչների խորհրդակցութիւն, որին հրաւիրուած էին նաեւ Կարսի ու Ալեքսանդրապոլի քաղաքագլուխները, հասարակութեան ներկայացուցիչները: Խորհրդակցութեանը մասնակցում էին բոլշեւիկներ Բ. Ղարիբջանեանը, Պ. Մակինցեանը, Ա.Ստամբոլցեանը:

Օրակարգում դրուած էին Հայաստանի, ռազմաճակատի, զօրքի վիճակի եւ այլ հարցեր: Երկրամասի անկախութեան խնդրում ուղենիշի դեր էր խաղում Խ. Կարճիկեանի նամակը, որը հիմնականում արտայայտում էր այն միտքը, թէ Անդրկովկասի ժողովուրդները, յատկապէս հայ ժողովուրդը, պէտք չէ երես թեքեն Ռուսաստանից, որովհետեւ իրենց գլխի վերելում միշտ զգալու են «Թրքութեան ու Տաճկաստանի կախուած թուրք ու հայեացքը դէպի հիւսիս, առիթներ փնտռի Ռուսաստանին ներս բերելու եւ ազատագրուելու», աւելին, այդ անկախութիւնը «հաւասար է հայ եւ վրացի ժողովուրդների ինքնասպանման: Այդ ոչ միայն դարձնելու է Անդրկովկասը Տաճկաստանի վասալ մի գաւառ, այլեւ անխուսափելիօրէն պիտի տանի հայութեան, գուցէ եւ վրաց ժողովրդի բնաջնջման»:

Ոչ միայն խորհրդակցութիւնում տիրող մթնոլորտն էր անկախութեան դեմ, այլեւ Յ. Քաջազնունին իր ելոյթում յայտնեց, որ «Բանակցութիւնների վերջին շրջանում մենք ջերմ պաշտպան էինք Բրեստ-Լիտովսկի պայմանին: Ես եւ Ալեքսանդր Խատիսեանը ոչ միայն վաղաժամ էինք համարում անկախութիւնը, այլեւ միակն էինք, որ կողմնակից չէինք»:

Անկախութեան գաղափարի մերժման փաստարկները շատ էին: Դրանցից առաւել դիւրըմբռնելին այն էր, որ հաւատալով թուրքական խոստում-

ներին գնալ այդ ճանապարհով, նշանակում էր կործանման տանել երկրամասը: Առաւել եւս, չկային անկախութիւնը հիմնաւորելու, պաշտպանելու կռուաններ: Այստեղից էլ, երկրամասի անկախութիւն անուանելը սկզբից մատնուած էր լինելու անյաջողութեան, կրելու էր ժամանակաւոր բնոյթ եւ Թուրքիան ցանկացած առիթն օգտագործելով վերջ կը տար նրա գոյութեանը:

Խորհրդաժողովի անակնկալներից մէկն էլ Խ. Կարճիկեանից ստացուած նոր հեռագիրն էր: Այն տեղեկացնում էր, որ մուսաւաթականները որոշել են դուրս գալ Սէյմից ու կառավարութիւնից, որովհետեւ «մենշեւիկներն ու դաշնակցականները չեն կամենում յայտարարել Անդրկովկասի անկախութիւնը, իսկ մահմեդականներն էլ չեն ցանկանում մնալ Ռուսաստանի կազմում»: Խ. Կարճիկեանը զգալով Սէյմի ու կառավարութեան տրամադրութիւնը, առաջարկում էր ազգային ժամանակաւոր կառավարութիւն:

Հեռագրին ծանօթանալուց յետոյ, ժողովրդականները քննարկեցին այն եւ երկրամասի անկախութեան ու ժամանակաւոր կառավարութիւն կազմելու հարցերի շուրջը ընդունեցին համապատասխան որոշումներ:

Խորհրդակցութիւնում բուռն վեճ սկսուեց բոլշեւիկեան Ռուսաստանից օգնութիւն խնդրելու հարցում: Մասնակիցների մի մասն այն համարում էր վաղաժամ քայլ:

Ժողովականների զգալի մասը ոչ թէ դեմ էր բոլշեւիկների հետ համագործակցութեանը, այլեւ զգուշանում էր, որ այդ քայլով լարուածութիւն կը ստեղծի թուրքերի հետ, ինչը նրանց կը ստիպի ժամ առաջ լուծել Անդրկովկասի ու Հայաստանի խնդիրը, մինչ կը հասնի բոլշեւիկեան օգնութիւնը: Աւելին, Խորհրդային Ռուսաստանը ոչ միայն ցանկութիւն, այլեւ հնարաւորութիւն չունէր Անդրկովկասի համար յարաբերութիւնները սրել Թուրքիայի հետ:

Ռազմաճակատի եւ զօրքի վիճակի մասին զեկոյցներով հանդէս են գալիս գեներալ Լեբեդինսկին եւ Հայկական Կորպուսի հրամանատար, գեներալ Նազարբեկովը, բոլոր ելոյթ ունեցողների մտքերը յանգում էին նրան, որ, «Զօրամասերը յոգնած են, նոր ուժերով չեն թարմացում: Մենք մենակ թշնամուն դիմադրել չենք կարող»:

Մանրակրկիտ քննարկումներից յետոյ խորհրդակցութիւնը որոշեց ճանաչել Բրեստի պայմանագիրը, Սէյմում դեմ քուէարկել անկախութեանը, ուժեղացնել երկրի պաշտպանութիւնը, արագացնել զօրահաւաքը, զօրքի բարոյական ոգին բարձրացնելու նպատակով ռազմաճակատ ուղարկել մտաւորականութեան ներկայացուցիչներին, բոլոր միջոցներով օգնել զօրահրամանատարութեանը, պահպանել Սէյմը, ընդհանուր կառավարութիւնը եւ ապակենտրոնացուած վարչութիւնը:

Ալեքսանդրապոլի խորհրդակցութիւնը գնահատելով ստեղծուած իրավիճակը, դեմ էր դուրս գալիս մենշեւիկ-մուսաւաթական պլոկի ծրագրերին եւ, քանի դեռ չկային հայ ժողովրդի անկախ գոյութիւնն ու անվտանգութիւնը երաշխաւորող հնարաւորութիւններ, փորձ էր անում պահպանել երկրամասի ձեւական միասնութիւնը, գտնել թշնամու դեմ ընդհանուր պայքարի ուղիներ, չհեռանալ ռուսական կողմնորոշումից, այն դիտելով հայ ժողովրդի անվտանգութիւնն ապահովող յենարանի:

1918 թ. Ապրիլի 6-ին վերսկսուեցին Սէյմի նիստերը: Երկարատեւ վեճե-

րից յետոյ որոշուեց անկախութեան խնդրի լուծումը յանձնարարել Յատուկ յանձնաժողովին: Մենշեիկների ու մուսաւաթականների կամակատար յանձնաժողովը քննելով իրավիճակը, քանի որ ներկայ իրավիճակում Ռուսաստանում տիրում է անիշխանութիւնը, չկայ նրանից օգնութեան յոյս, որպէսզի Անդրկովկասը չդառնայ թուրքական արշաւանքների ասպարէզ, պէտք է անմիջապէս հռչակի իր քաղաքական ինքնորոշումը եւ ստեղծի «Անդրկովկասի անկախ ֆեդերատիւ հանրապետութիւնը»:

1918 թ. Ապրիլի 9/22-ին Անդրկովկասը յայտարարուեց անկախ:

Հ. Յ. Դաշնակցութիւնը որպէս բողոքի նշան հրաժարուեց կառավարութեան աշխատանքներին մասնակցելուց եւ ետ կանչեց իր ներկայացուցիչներին, որին հետեւեց մենշեիկների վերջնագիրը՝ կամ մասնակցել կառավարութեան աշխատանքներին, կամ «Անդրկովկասը բաժանել երեք հանրապետութիւնների, թողնել Վրաստանին տնօրինել իր բախտը այնպէս, ինչպէս ինքն է ցանկանում»:

Վերջնագրից յետոյ Հ. Յ. Դաշնակցութեան եւ հայ սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան ներկայացուցիչները զբաղեցրին իրենց պաշտօնները:

Սէյմի Ապրիլի 9-ի նիստում ընդունուեց եւ. հեղեղորու հրաժարականը եւ կառավարութիւնն կազմելու պարտականութիւնները դրուեցին Ա. Զիւենկելու վրայ: Նոր կաբինետում ելեւմտական նախարար նշանակուեց Ալ. Խատիսեանը, պարենաւորման՝ Ալ. Սահակեանը, ինսամատարութեան՝ Յ. Զաչազկունին: Սոցիալ-դեմոկրատ Ար. Երզնկեանը զբաղեցրեց աշխատանքի նախարարի պաշտօնը: Կառավարութեան նոր կազմի հեղինակութիւնը բարձրացնելու նպատակով վարչապետը հանդէս եկաւ բազմախոստում ծրագրով, որը, սակայն, իրագործելու հաւանականութիւնից զուրկ էր նոր կառավարութիւնը: Ա. Զիւենկելու կառավարութիւնը ոչնչով չէր տարբերում իր նախորդից, ներքուստ նոյն խառնաշփոթն էր, վրդովեցուցիչ անտարբերութիւնը, երբ գնալով հասունանում էր թուրքական վտանգը:

Անդրկովկասի անկախութեան լուրը ուրախութեամբ ընդունեց Թուրքիան: Ապրիլի 30-ին ստացուեց թուրքական կառավարութեան յայտարարութիւնը, որը ոչ միայն ճանաչում էր այդ անկախութիւնը, այլեւ նոր բանակցութիւնների էր հրաւիրում Պաթումում:

Անդրկովկասի անկախութիւնը հայ ժողովրդի համար հանդիսացաւ նոր գոյապայքարի սկիզբը: Սակայն այս փաստը բոլորովին չէր անհանգրստացնում Սէյմին: Վերջինիս բարձրագոյն յայտարարութիւններն այլ նպատակներ ունէին, վարած քաղաքականութիւնը բոլորովին այլ: Եթէ ոմանք պնդում էին, թէ Սէյմի կողմնորոշումը հակաթուրքական է, ապա դէպքերի ընթացքն ու քաղաքական արդիւնքը խօսում էին հակառակի վիճակի մասին: Ահա թէ ինչու ժամանակակից մամուլը հարց էր բարձրացնում պարզել, թէ ո՞ւմ է ծառայում Զիւենկելին. «Ասում են Սէյմը Ապրիլի 9-ի /հ. տոմարով/ նիստում որոշել է իր բոլոր անդամներին կախել, բացի Ռուսալ-Չադեից եւ Զիւենկելուց: Թիֆլիսում ասում. փայլուն դուռը Զիւենկելուն փաշա տիտղոսն է տուել նոր գործունեութեան համար...»:

Թուրքական բանակի առաջխաղացումը կանգնեցնելու ուրիշ միջոց չտեսնելով, Սէյմը որոշեց գնալ նոր բանակցութիւնների: Պաթում մեկնած պատուիրակութեան կազմում էին Նաեւ Ալ. Խատիսեանը, Յ. Զաչազկունին, Մ. Պապաչանեանը: Մայիսի 11-ին սկսուած բանակցութիւնների ընդ-

հատման պատճառը երկրամասի անկախության բացակայությունն էր: Այսինքն, քանի որ Անդրկովկասը այժմ անկախ է, ապա նոր բանակցությունները պետք է դիտել Տրապիզոնի շարունակություն, ելման կետ ունենալով Բրեստի պայմանագիրը:

Թուրքական պատուիրակության ղեկավար Խալիլ Բեյը թեև անդրադարձավ Չինեկեյու մտքերին, բայց կտրուկ յայտարարեց, որ այժմ դրությունը փոխուել է: Այսինքն՝ Թուրքիան երբեք չի զիջի գրաւած տարածքները, աւելին. բանակցութիւնները գնում են ոչ թէ Բրեստի պայմանագրի շուրջը, այլ առկայ պայմաններին համապատասխան:

Ա. Չինեկեյին փորձեց յիշեցնել, որ Կարսը առանց դիմադրութեան յանձնուելու հիմքում ընկած էին Բրեստը ճանաչելու խոստումները:

Մինչեւ բանակցութիւնները թափուած արեան ողջ պատասխանատուութիւնը գցելով Անդրկովկասի վրայ, Թուրքական կողմը միաժամանակ յիշեցրեց, թէ իր զօրքերի առաջխաղացումը ոչ թէ ունի նոր տարածքներ գրաւելու միտում այլ հետապնդում է ինքնաապահովութեան նպատակ:

Անպտուղ բանակցութիւնները ստիպեցին Գերմանիայի ներկայացուցիչին դիմելու կտրուկ քայլերի, որոնց գաղտնագրում Վրաստանի նկատմամբ հովանաւորութեան հարցն էր: Այս առթիւ հետաքրքիր մանրամասնութիւններ է հաղորդում վրացական պատուիրակութեան քարտուղար Չ. Աւալովը:

Վրացական մենշեւիկները մինչեւ բանակցութիւնների գնալը արդէն կանխորոշել էին իրենց ապագայ գործունեութիւնը: Վրացական Ազգային Խորհուրդը Մայիսի 17-ին քննարկելով բանակցութիւնների ընթացքը, եկաւ այն եզրակացութեան, որ փրկութեան միակ ելքը անջատ պայմանագիր ստորագրելն է: Այդ նպատակով էլ որոշեց դիմել գերմանական պատուիրակութեանը, որպէսզի նա իր վրայ վերցնի Վրաստանի սահմաններին պաշտպանութիւնը, Վրաստանում թողնի գերմանացի գերիներին, որպէսզի վրացական կառավարութիւնը այդ զօրքը օգտագործի երկրում կարգ ու կանոն հաստատելու համար:

Բաթումում վրացական պատուիրակութիւնը գործում էր հէնց այդ ուղղութեամբ: Գերմանական հովանաւորութիւնը ընդունելու փաստը հաստատում են թէ Չ. Աւալովը, թէ Լ. Յ. Լիւդենդորֆը. «Պաթումում տեղի ունեցած բանակցութիւնների ժամանակ Վրացական հանրապետութեան ներկայացուցիչը դիմեց գէներալ Լոսսովին՝ գերմանական կայսրութեան հովանաւորութեան խնդրանքով», - վկայում է Լ. Լիւդենդորֆը:

Վրաց պատմաբան Գ. Խաչապուրիճեն այդ առթիւ գրում է. «Դեռեւս այն ժամանակ, երբ Վրաստանը գտնուում էր «Անդրկովկասեան Ֆեդերատիւ հանրապետութեան» կազմում, այսպէս կոչուած «Վրացական Ազգային Խորհուրդը» 1918 թ. Մայիսին որոշում ընդունեց գէներալ Ֆոն Լոսսովի միջոցով բանակցութիւններ վարել կայսերական Գերմանիայի հետ, նրա հովանաւորութիւնը Վրաստանի վրայ հաստատելու համար»:

Սկսուած անդրկովկասեան բանակցութիւնները աննկատ չէին մնում: Հայկական պատուիրակութիւնը, որ նոյնպէս բանակցում էր Լոսսովի հետ, յանգեց այն հետեւութեանը, որ, թեւ գէներալը պարզորոշ չի արտայայտում իր վերաբերմունքը, բայց խոստանում է հայկական հարցը ներկայացնել իր կառավարութեան քննութեանը:

Յ. Քաջազնունին այս մասին տեղեկացնում է Ա. Ահարոնեանին, յուշելով,

թէ թերեւս հարկ կը լինի կազմել եւս մէկ պատուիրակութիւն, որը կը բա-
նակցի Պոլսում, իսկ իրենք բարեյաջող աւարտի դէպքում, Ֆոն Լոսսովի
հետ կը գնան Պերլին. «Բարեացակամ վերաբերմունք կայ դէպի մեզ /Գեր-
մանիայի կողմից/ նոյնիսկ ցանկութիւն մեզ պաշտպանելու Թուրքիայի
ոտնձգութիւններին»:

Հովանաւորութեան համար պայքարը յաջողութիւն բերեց Վրաստանին,
որովհետեւ այն քաղաքական նպատակները, որոնց իրագործմանը ձեռնա-
մուխ էր եղել Թուրքիան եւ իր դաշնակցին չշեղելու նպատակով էլ Գերմա-
նիան հրաժարուեց Հայաստանին հովանաւորելուց:

Այս առթիւ յիշարժան են Ալ. Խատիսեանի յուշերը, որոնք նկարագրում են
Ջեմալ փաշայի հետ պատուիրակութեան հանդիպումը, որտեղ չթաքցնելով
իր կառավարութեան ծրագրերը, ասում է. «Թուրքերու վեճը հայերու հետ
հին է, եւ հայերը ոչ մէկ քայլ կ'ընեն հաշտուելու թուրքերու հետ: Այս ընթաց-
քը պատճառ պիտի դառնայ հայերու նոր դժբախտութեանց»:

Բեհեդդին Շաքիրը լրացնելով Ջեմալ փաշայի մտքերի պակասը, ասում
է. «Հայերը կանգնած են մեր համախաւսական ծրագիրներուն դէմ եւ մենք
անխուսափելիօրէն կը բախինք անոնց հետ: Ատիկա վեր է եւ դուրս մեր
անձնական զգացումներէն ու տրամադրութիւններէն: Մենք հարկադրուած
ենք տարերայնօրէն ոչնչացնել մեր ճամբուն վրայէն այն ամենը, ինչ որ ար-
գելք կը հանդիսանայ մեր ազգային սրբազան իտեալներուն»:

Թուրք-գերմանական պլոկն այս անգամ հետապնդում էր ուրիշ նպա-
տակ. ստիպել Անդրկովկասին դիմելու երկրորդ անկախութեան: Իսկ դրան
հասնելու բոլոր հիմքերն արդէն պատրաստուած էին: Անդրկովկասի համա-
դաշնակցութեան կապող օղակը մենշեւիկներն էին, որոնք օգտագործելով
Հ. Յ. Դաշնակցութեան ու մուսաւաթի հակասութիւնները, ստեղծել էին
իրենց կուսակցական գերիշխանութիւնը: Պոկել Վրաստանին Անդրկով-
կասեան միութիւնից, նշանակում էր վերջ տալ նրա գոյութեանը: Այստեղից
էլ սկսեցին թուրք-գերմանական պատուիրակները:

Ձգուող բանակցութիւնները անհանգստացրին Ն. Ռամիշվիլուն եւ նա
գնաց Պաթում: Միայն մէկ օր նա մնաց Պաթումում եւ կատարելով իր
«առաքելութիւնը» վերադարձաւ: Այդ ուղեւորութիւնից յետոյ էր, որ աւելի
գործնական դարձան թուրք- գերման-վրացական բանակցութիւնները:

Մինչ քննարկուող հարցերը կը ստանային վերջնական լուծում, թուրքա-
կան կողմը օր-օրի ներկայացնելով նոր պահանջներ, աւելի ամբողջական
դարձրեց իր ծրագրերը: Թուրքիան այժմ ռազմական ուժեր տեղափոխելու
պատրուակով պահանջում է Անդրկովկասի երկաթուղիները, մուսուլմանա-
կան ազգաբնակչութեան հետ կենդանի շփման տարածքներ, որոնք անց-
նում էին նաեւ Վրաստանով:

Անդրկովկասեան բանակցութիւնների շնորհիւ, Մայիսի 23-ին, կնքուեց
վրաց-գերմանական ժամանակաւոր համաձայնութիւնը, որը սակայն ըն-
դունելու մտադրութիւն չունէր Թուրքիան եւ սպառնում էր զօրքերը մտցնել
Վրաստան, որից խուսափելու համար վրաց մենշեւիկները Մայիսի 26-ին
ցրելով Սէյմը, յայտարարեցին Վրաստանի անկախութիւնը:

Բանակցութիւնները ընդհատուեցին եւ նոր հարցերը լուծելու նպատա-
կով պատուիրակութիւնները վերադարձան Թիֆլիս:

Սէյմի վերջին նիստերը նպատակ ունէին Պաթումում նախապատրաստել

Վրաստանի եւ Ադրբեջանի անկախութիւնը :

Սէյմը, ինչպէս խոստովանում էր Ծերեթելին, «սոսկ անունով» գոյութիւն էր: Անդրկովկասի ազգային կուսակցութիւնների այդ անբնական միասնութիւնը, պարզ է, որ երկար չէր կարող գոյութիւն ունենալ: Իւրաքանչիւր կուսակցութիւն, ելնելով երկրամասում ստեղծուած իրավիճակից, բնական է, որ հոգալու էր սեփական ժողովրդի հոգսերը: Շահերի հակամարտութիւնը սկսում էր այնտեղից, որտեղից պէտք է ծայր առնէր միասնութիւնը: Մենշեւիկներն ու մուսաւաթականները ունենալով ընդգծուած քաղաքական ուղենիշ, հետեւողականօրէն գնում էին այն իրականացնելու ճանապարհով: Դժուարին կացութեան մէջ գտնուող հայ ժողովուրդը կարիք ուներ ժամանակի որպէսզի կարողանար յաղթահարել դժուարութիւնները, ստեղծել յուսալի պաշտպանութիւն:

Այս ամէնը քաջ էին գիտակցում նաեւ մենշեւիկներն ու մուսաւաթականները եւ օգտուելով հայ ժողովրդի ծանր իրավիճակից, նրա տարածքների հաշուին լուծում էին իրենց առաջնահերթ խնդիրները:

Դէպի կուսակցական գերիշխանութիւն ճանապարհի հարթելիս, մենշեւիկները ոչ միայն բացուած արահետներ թողեցին մուսաւաթականների համար, այլ դժուարութեան պահին ձեռք էին մեկնում նրանց, որովհետեւ նպատակը մէկն էր, ուղին՝ ընդգծուած: Ահա թէ ինչու Ստ. Շահումեանը գնահատելով մուսաւաթի դերը, գրում էր. «Մուսաւաթ կուսակցութիւնը երկու դաշնակից ուներ: Մի կողմից մենշեւիկների՝ վրացական նացիոնալիստների կուսակցութիւնը եւ միւս կողմից՝ մուսուլմանական դեմոկրատիայի տգիտութիւնն ու անկազմակերպութիւնը»:

Այդ երկու դաշնակիցների շնորհիւ, այդպիսի մի չնչին կուսակցութիւն դարձաւ ամենազդեցիկը, եւ վճռում է ամբողջ Կովկասի բախտը»:

Բացի այդ դաշնակիցներից, գոյութիւն ուներ եւս մէկ բացայայտ դաշնակից, Թուրքիան, որի օժանդակութեան ու պաշտպանութեան շնորհիւ մուսաւաթը դարձաւ երկրամասի կարեւորագոյն հարցերը լուծող կուսակցութիւնը: Յանուն վրացական ազգային շահերի գործող մենշեւիկները չէին կարող ձեռքից բաց թողնել այդ խոշոր գործօնը եւ նրանց համագործակցութիւնը, ի վերջոյ, երկրամասը հասցրեց այն կարգավիճակին, երբ իրականութիւն էր դառնում Վրաստանի անկախութիւնը եւ հոգ չէր, որ Զինեկելին «առանց մարտի Կարսը յանձնեց թուրքերին, թշնամուն քաշելով երկրի խորքը», - գրում էր «Չնամյա տրուդա» թերթը:

Վրաստանի անկախութիւնը «դաւաճանութեան մի փորձ է հանդէպ Վրաստանի հարեւան հայ ժողովրդի, - աներեւակայելի, անամօթ դաւաճանութիւն: Նրանք ծանր վիճակ ստեղծեցին Անդրկովկասում եւ այժմ լուանում են իրենց ձեռքերը», - գրում էր Ստ. Շահումեանը:

Մայիսի 27-ին մուսաւաթականները յայտարարեցին Ադրբեջանի անկախութիւնը:

Մայիսի 28-ին Անդրկովկասի պատուիրակութեան հայ անդամները հասան Թիֆլիս եւ Ազգային Խորհրդում զեկուցեցին բանակցութիւնների արդիւնքների մասին: Չեկուցումներից յետոյ Ազգային Խորհուրդը բաժանուեց երկու խմբի՝ անկախութեան կողմնակիցների եւ հակառակորդների: Տարածայնութիւնների հիմնական պատճառն այն էր, որ առաջին աշխարհամարտից բզկտուած, եղեռն տեսած, գաղթականութեամբ ու որբերով լեցուն եր-

կիրը չէր կարող պահպանել իր գոյութիւնը: Սակայն, ճակատագիրը այնպիսի պահ էր ստեղծել, որ ընտրութիւն անելու կամ ստեղծուած վիճակը վերլուծելու ժամանակ չէր մնում, որովհետեւ յաջորդ օրը՝ Մայիսի 29-ին, երեկոյեան ժամը 8-ին, լրանում էր թրքական վերջնագրի ժամկետը: Զգնալ Պաթում, չընդունել վերջնագիրը, նշանակում էր շարունակել պատերազմը: Այն ինչի մասին երազում էր Թուրքիան, որպէսզի մէկընդմիջտ վերջ տար «Հայկական կնճիռին»:

Ահա այս հանգամանքներն էին, որ գրկում էին կշռադատելու հնարաւորութիւնից:

Նկատի ունենալով յետագայ բարդութիւնները, Հայոց Ազգային Խորհուրդը կանգ չառաւ ձեւականութիւնների առաջ եւ Ա. Ահարոնեանին, Ն. Աղբալեանին, Յովհ. Զաքարյանուն, Ալ. Խատիսեանին յանձնարարեց մշակել Հայաստանի անկախութեան յայտարարութեան բանաձեւը:

1918 թ. Մայիսի 28-ին, ցերեկուայ ժամը 12-ին ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ընդունեց ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՆԱԶԵԻԸ. «ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԶԱՂԱԶԱԿԱՆ ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՆ ԼՈՒԾՈՒՄՈՎ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐԴԵՅՁԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՈՉԱԿՈՒՄՈՎ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՆՈՐ ԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՊ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԻՐԵՆ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՒԱՌՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԵՒ ՄԻԱԿ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ: ՈՐՈՇ ԾԱՆՐԱԿԾԻՌ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ԹՈՂՆԵԼՈՎ ՄՕՏԻԿ ՕՐԵՐՈՒՄ ԿԱԶՄԵԼ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԺԱՄԱՆԱԿԱԽՈՐԱՊԵՍ ՍՏԱՆՁՆՈՒՄ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԲՈԼՈՐ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՒԱՌՆԵՐԻ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԸ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ»:

Հայոց Ազգային Խորհուրդը սոյն յայտարարութիւնը ընդունեց Մայիսի 28-ին, սակայն այն հրապարակուեց Մայիսի 30-ին:

Այսպիսով, շուրջ վեց հարիւր տարուայ ընդմիջումից յետոյ, հայ ժողովուրդը վերականգնեց իր անկախ պետականութիւնը, դարձաւ իր երկրի ու ճակատագրի տէրը:

Մայիսի 28-ը հայ ժողովրդի բազմադարեայ պատմութեան խոշորագոյն իրադարձութիւններից մէկն էր, իրադարձութիւն, որը հայակուլ ուժերի դէմ հերոսական պայքարի անմիջական արդիւնքն էր: Հայաստանի Հանրապետութիւնը կերտուեց ոչ թէ Պաթումում, այլ բուն երկրում Մայիսի 22-28-ին մղուած հերոսամարտերում:

1918 թ. Մայիսի կեսերին Արարատեան դաշտը բոլոր կողմերից շրջապատուեց: Թուրքերը շուտով յայտնուեցին Սարդարապատի մատոյցներում: Խուճապը տարածուել էր ամենուր: Երեւանի քաղաքապետարանում տիրում էր վիատութիւնը: Կային մարդիկ, որոնք առաջարկում էին քաղաքը յանձնել թուրքերի ողորմածութեանը: Այդ տրամադրութիւնները շուտով հասան թուրքական հրամանատարութեանը: Թուում էր, թէ ամէն ինչ կորած է: Այդ ճակատագրական պահին էր, որ հնչեց հայ ժողովրդի մեծ զաւակի՝ Արամ Մանուկեանի ձայնը: Մայիսի 21-ին ամենուր տարածուեց անձնուէր հայորդու կոչը. «Երեւանի ամբողջ հայ ժողովուրդը վճռել է դիմադրել: Դիմում ենք բոլոր հայ սպաներին, որպէսզի նրանք գան եւ կամաւորական խմբերի գլուխ անցած ընդառաջեն թշնամուն»:

Կոչը մեծ արձագանգ գտաւ: Կամաւորական խմբերը, աշխարհագօրը

նոր, թարմ ուժերով էին համալրվում: Ժողովուրդը վստահ էր, որ Արամի գլխավորությամբ անպայման կը հասնի յաջողության:

Ժողովուրդը համախմբուել էր իր սիրելի գաւազնի շուրջը: Այդ օրերի վերջուշն ապրող Ս. Վրացեանը յետոյ կը գրէր. «Երբեք, գուցէ, հայ կեանքում իշխանութիւնն ու հասարակութիւնը այնպիսի համերաշխ միութիւն չէին կազմել, քան 1918 թուի գարնան եւ ամառուայ պատմական ամիսներին, Արարատեան դաշտում, Մասիսի հովանու ներքեւ»:

Արամը քաջածանօթ էր թուրքական գործելակերպին, եւ կռահելով սպասուելիք օրերը, նախապատրաստական մեծ աշխատանքներ էր տարել, որի շնորհիւ Սարդարապատի հերոսամարտի մարտիկները, երբեք չզգացին գինամթերքի պակաս:

Կերտում էր հայ ժողովրդի նոր Աւարայրը: Այդ գործում իրենց անգնահատելի դերը խաղացին Գարեգին Եպիսկոպոս Յովսէփեանը, Կարինի առաջնորդ, ղարաբաղցի Չաւեն Եպիսկոպոս Մահտեսի - Բաբայեանը, Եզնիկ եւ Թադեւոս վարդապետները: Նրանք էին ժողովրդին վերջին մարտի նախապատրաստողն ու ոգեկոչողը: Հայ զինուորի մարտական ոգին բարձրացնողը:

Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտերը խաղացին իրենց վճռական դերը թուրքական Հայկական հարցը վերջնականապէս լուծելու ծրագիրը ջախջախելու գործում:

Դարաւոր թշնամին տեղի տուեց այն հզօր ուժի առաջ, որը կոչւում էր հայ ժողովրդի կամք:

Եթէ մինչեւ Մայիսեան հերոսամարտերը Թուրքիան հաշուի էր նստում միայն մենշելիկների ու մուսաւաթականների հետ եւ գրեթէ իրագործուած էր համարում Հայաստանի վրայով՝ Ալեքսանդրապոլ-Երեւան-Չանգեզուր-Եվլախ, Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա-Աղստաֆա ճանապարհով դէպի Պաքու արշաւանքը, ապա ժողովրդական ազատամարտերից յետոյ թուրք հայակույները փոխեցին իրենց ծրագրերը:

Գերմանիայի Պոլսի դեսպան Բերնսդորֆը վկայում է. «Թուրքիան, որ 8 օր առաջ լսել անգամ չէր ուզում Հայաստան ստեղծելու մասին /մանաւանդ Էնվեր եւ Թալէաթ փաշաները/, յանկարծ համաձայնութիւն տուեցին»:

Պաթումի բանակցութիւններում թուրքական պատուիրակութեան ղեկավար Խալիլ բէյը իր եւ Վեհիբ փաշայի հանդիպումը նկարագրում է այսպէս. «Հերիֆները, գէշ կը կռուին, ձեռքս 12000 հոգի ունիմ միայն, ետիս բնաւ պահեստի ուժ չունիմ, Մեհմետը եթէ նահանջ ընէ, մեր շունչը Էրզրում կ'առնինք»:

Եւս մէկ վկայութիւն: Նոյն Վեհիբ փաշան Թուրքիայի քաղաքականութեան փոփոխման մասին ասում է. «...թուրքերի կողմից հայկական /թէկուզ փոքրիկ/ պետութեան կազմակերպմանը համաձայնութիւն տալը շրջադարձային կէտ է Թուրքիայի պատմութեան մէջ», «Թուրքերի նման տրամադրութեանը նպաստեց... հայրենիքը պաշտպանող հայերի հերոսութիւնը Ղարաքիլիսայում, որը յարգանք է ներշնչում»:

Ինչպէս տեսնում ենք, հայ ժողովուրդը ինքն էր կրել իր անկախութիւնը եւ ի զուր եւ որոշ ուսումնասիրողներ այն կողմնակալ տեսակետը պնդում, թէ Հայաստանի անկախութիւնը թուրքական թողտուութեան, թուրք վերնախաւի մէջ «յանկարծակի» ծնուած «հայրենասիրութեան» արդիւնքն էր:

Հայաստանի անկախութեան հռչակման յաջորդ նախադրեալը գերմա-

նական պլոկի ռազմական անյաջողություններն էին: Մերձաւոր Արեւելքի ու Միջագետքի ռազմաճակատներում թուրքական բանակը մէկը միւսի ետեւից կրում էր ջախջախիչ պարտութիւններ: Այդ առթիւ Վրաստանում գերմանական զօրքերի գլխաւոր հրամանատար Ֆոն Կրեսը գրում էր. «Թուրքերը այժմ այնքան են մտահոգուած անգլիական ռազմաճակատով, որ չեն կարող որեւէ ռազմական ուժ կենտրոնացնել Հայաստանում, իսկ նրանք լաւ գիտեն, որ հայերի վրայ յարձակուելու համար ոչ թէ որեւէ, այլ շատ ու շատ ուժեր են պէտք...»:

Հայ ժողովրդի հերոսամարտերը ստիպեցին թուրքական վերնախաւին, որ հրաժարուէն իրենց հայակուլ քաղաքականութիւնից: Հայկական հարցին վերջնական լուծում տալու ձգտող Էնվեր-Թալէաթ խմբաւորումը այլեւս անընդունակ էր իրականացնելու իր ծրագիրը:

Հայաստանի Հանրապետութեան կերտման գործում մեծ էր նաեւ սպասելիք խաղաղութեան համաժողովի հայապաշտպան դիրքորոշման դերը, որը թուրքերին ստիպում էր օր առաջ «լուծել» հայկական կնճիռը եւ դատաստանի առաջ կանգնել արհեստ ձեռքերը լուացած:

Պաթումի բանակցութիւնների ժամանակ հանրապետութեան սահմանների հարցը քննելիս, թուրքերի վրայ ներգործելու նպատակով, երբ հայ պատուիրակները յիշեցնում են խորհրդաժողովի մասին, Վեհիբ փաշան պատասխանում է. «Հայկական Հարցը միջազգային է, կ'ըսեք, եւ պիտի նկատի առնուի հաշտութեան ընդհանուր խորհրդաժողովին մէջ: Այդ բանը շատ լաւ գիտենք, բայց հենց ատոր համար ալ մենք առաջինը ըլլալով յանձն կ'առնենք լուծելու զայն եւ կ'ընդունենք Հայաստանի անկախ գոյութիւնը»:

Պոլսում հայկական պատուիրակութեան հետ հանդիպման ժամանակ այդ առթիւ աւելի յստակ է արտայայտուում Թալէաթ. «Եթէ նոյնիսկ հարիւր հազար հայեր մնան աշխարհի երեսին, մեզ հանգիստ պիտի չտան երբեք», էլ ինչ միտք ունի կոտորել մնացած հայերին, եթէ կարելի է ստեղծել «Փոքրիկ Հայաստան մը», որով լուծած կ'ըլլանք հայկական հարցը եւ այդպէս կը ներկայանանք հաշտութեան միջազգային խորհրդաժողովին»:

Այն, որ Մայիսեան հերոսամարտերը վճռական դեր խաղացին Հայաստանի անկախութեան կերտման գործում անվիճելի է: Բայց հանրապետութեան ստեղծման գործում միւս նախադրեալների շարքում իր տեղն ունի եւս մէկ գործօն: Ինչպէս յայտնի է, Անդրկովկասի կողմնորոշումը, մինչեւ գերման-թուրքական խմբաւորմանը յենուելը, անգլ-ամերիկական էր: Սակայն, 1918 թ. Մարտ-Մայիս ամիսներին գերմանական խմբաւորման տարած յաղթանակները ստիպեցին Անտանտայի պետութիւններին տեսադաշտից դուրս թողնել Անդրկովկասը: Վերջինիս, գերման-թուրքական խմբաւորման դէմ պայքարելու հնարաւորութիւնները չունենալով, ընդունեց նրա նկատմամբ հովանաւորեալի դերը: Բայց փոխուեցին ժամանակները, Անտանտան կործանիչ հարուածներ հասցրեց քառեակ միութեանը եւ Թուրքիան ստիպուած էր մտածել անգլիական ռազմաճակատի մասին: Այսպէս կոչուած դաշնակիցների յաջողութիւնները նպաստեցին Հայաստանի Հանրապետութեան կերտման գործին:

Հայաստանի անկախ հանրապետութեան կերտման քաղաքական նախադրեալի հիմքը դրուել էր ազատագրական շարժումների գաղափարնե-

րով, վեց հարիւր տարուայ գոյապայքարով: Փետրուարեան յեղափոխութիւնը, հոկտեմբերեան յեղաշրջումը, նրանց նախորդած առաջին աշխարհամարտը, հայ ժողովրդի հերոսական մասնակցութիւնը նրան, կամաւորական զնդերի գոյութիւնը, կարծես իրական հողի վրայ էր տեղափոխել այդ երազանքի իրականացումը: Կարելոր նշանակութիւն ունէր նաեւ երկրամասի կամագորկ իշխանութիւնների անխուսափելի փլուզման իրողութիւնը, որը հայ քաղաքական դէպի մօտ կանգնած ուժերին վերջնականապէս համոզեց, թէ կործանուող կարգերի անխուսափելի արդիւնքն է լինելու երեք ժողովուրդների անկախ գոյութիւնը:

Այստեղից էլ, որոշ ուսումնասիրողների այն մտայնութիւնը, թէ անկախութեան գաղափարը յանկարծակի ծնուեց, չի համապատասխանում իրականութեանը:

Այժմ անդրադառնանք քաղաքական առկայ իրավիճակի անմիջական արդիւնք պայմանագրի:

Հայկական պատուիրակութիւնը /Ալ. Խատիսեան, Յովհ. Զաչագունի, Մ. Պապաջանեան/ Պաթում հասաւ Մայիսի 29-ին: Նոյն օրն իսկ պատուիրակութիւնը նամակով դիմում է Խալիլ Բէյին, յայտնելով, որ Հայաստանը պատրաստ է նոր բանակցութիւնների: Մայիսի 30-ին սկսուում են բանակցութիւնները: Առաջին նիստում Վեհիբ փաշան քարտէսի վրայ գծում է Հայաստանի սահմանները:

Պատուիրակութիւնները երեք նիստեր են նուիրում սահմանային վեճերը հարթելու համար, սակայն թուրքական կողմը անընդհատ նոր փաստարկներ բերելով, մերժում էր հայ պատուիրակներին, անվիճելի հայկական հողեր «ճանաչելով» միայն «Նոր Պայագետի գաւառը եւ Ալեքսանդրապոլի լեռնային մասը, որոնց մէջ հազիւ կ'իյնար 13 քիլոմէթր երկաթուղի»:

-Դուք կը տեսնէք որ ճակատագիրը կը քաշէ Թուրքիան արեւմուտքէն արեւելք. մենք հեռացանք Պալքանկէրէն, կը հեռանանք նաեւ Ափրիկէէն, բայց մենք պէտք է տարածուինք դէպի արեւելք. հոն է մեր արիւնը, մեր կրօնքը ու լեզուն,- ասում է Վեհիբ փաշան եւ շարունակում, - եւ ասիկա տարերային ձգողութիւն ունի. մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքիստան եւ Ատրպէյջան են: Մենք պէտք է ճամբայ ունենանք դէպի հոն: Եւ դուք՝ հայերդ կանգնած էք մեր այդ ճամբուն վրայ: Պահանջելով Վանը՝ դուք կը փակէք մեր ճամբան դէպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջեւանն ու Չանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Զուրի հովիտը եւ երթալու Պաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ճամբան դէպի Ղազախ ու Գանձակ: Դուք պէտք է մի մէկ կողմ քաշուիք եւ ճամբայ տաք: Ահա թէ ուր է մեր հիմնական վեճը:

Հայ պատուիրակների այն պնդումները, թէ սահմանները նեղ են, որ այն նուազագոյն հնարաւորութիւն չի տայ ժողովրդի գոյատեւման համար, որ Հայկական հարցը միջազգային խնդիր է եւ անպայմանօրէն միջամտութիւնների առիթ՝ կը դառնայ, որ նախատեսուած սահմանները յաւիտենական թշնամութիւն կը ստեղծեն երկու ժողովուրդների միջեւ, ազդեցութիւն չգործեցին թուրքական կողմի վրայ:

Երբ ներգործելու բոլոր տարբերակներն աւարտուեցին անարդիւնք, հայ պատուիրակները առաջարկեցին իրենց պահանջները հեռագրով հաղորդել Պոլիս: Պահանջը կատարուեց: Յունիսի երկուսին Պոլսից ստացուեց հե-

ռագիր, համաձայն որի՝ «յանուն սկսուած լաւ յարաբերութիւններու» թուրքերը զիջում էին Համամլու-Երեւան խճուղին, իսկ սահմանն անցնելու էր Ջահջուռ կայարանով, Արագածի գագաթով դէպի Էջմիածին, «որով մենք 1000 քառ. քիլոմէթր տարածութիւն մը կը շահէինք: Ասկէ աւելի զիջում թուրքերը չըրին»:

Անպտուղ բանակցութիւնները շարունակուեցին եւս երկու օր եւ կնքուեց պայմանագիր, որին տրուեց «խաղաղութեան եւ բարեկամութեան դաշինք» անունը: Պայմանագիրը իր էութեամբ զաւթողական, անարդարացի էր: Հայաստանի Հանրապետութեանը մնում էր շուրջ 10 հազար քառ. կիլոմետր տարածութիւն: Թուրքիան իրաւունք ուներ «անհրաժեշտութեան» դէպքում օգտուել հանրապետութեան երկաթուղիներից, Հայաստանը պարտաւորւում էր ռազմական ու դիւանագիտական յարաբերութիւնների մէջ չմտնել Թուրքիայի հետ պատերազմական դրութեան մէջ գտնուող երկրների հետ եւ այլն:

Երիտթուրքերի վերնախաւը օգտագործելով յայտնի ու անյայտ միջոցները, ձգտում էր կաշկանդել Հայաստանի Հանրապետութեանն ու զցել իրենց ազդեցութեան տակ: Թուրքիան միջազգային կարծիք ստեղծելու նկրտումներից ելնելով, ժամանակի լուծմանն էր թողնում հայութեանը նոր, վերջնական հարուած հասցնելու մտադրութիւնը, որովհետեւ գոնէ այդ ժամանակահատուածում, հանրապետութեան դէմ գործելու համար նա չունէր հաւատարիմ ու նուիրուած գործընկեր: Բայց, երբ Ռուսաստանում պատմութեան թատերաբեմ բարձրացաւ բոլշեւիկեան վարչակազմը, հայակուլ թուրքիզմը յանձին նրան գտաւ իր դաշնակցին:

Հայ քաղաքական առաջնորդները զգալով թուրքական ծրագրերի նպատակը, վերլուծելով Հայկական հարցում ցարիզմի, ժամանակաւոր կառավարութեան ու բոլշեւիկների դիրքորոշումները, վերապահութեամբ էին ընդունում բոլշեւիկեան կողմնորոշումը:

Բրեստի պայմանագիրը, ռազմաճակատի մերկացումը, համագործակցումից խուսափելը, գերմանական խմբաւորման նկատմամբ պատերազմական վիճակի մէջ գտնուելը այն զօրեղ գործօններն էին, որոնք Հայաստանի Հանրապետութեանը պարտադրում էին յոյսերը կապել Անտանտայի յաղթանակի հետ եւ բոլշեւիկեան կողմնորոշման դերում ժողովրդին նոր պատերազմի մէջ ներքաշելու միջոց:

Թէեւ գոյութիւն ունէին յիշատակուած անառարկելի գործօններ, սակայն Հայաստանի կառավարութիւնը անուշադրութեան չէր մատնում բոլշեւիկների հետ համագործակցութեան գաղափարը: Նոր փորձեր էին արւում բարեկամական յարաբերութիւններ հաստատելու, որոնք սկսուել էին դեռեւս ժամանակաւոր կառավարութեան ժամանակներից եւ ունէին զուտ «հայկական ինքնապաշտպանութեան կազմակերպման /ազգային բանակի ստեղծման/» նպատակ: «Նոյն յարաբերութիւնները շարունակուեցան նաեւ բոլշեւիկների հետ: Հոկտեմբերեան յեղաշրջումէն քանի մը օր յետոյ Չարեանը մեկնեցաւ Կովկաս. իսկ ես, մնալով Պետերսբուրգ եւ օգտուելով վաղեմի ծանօթութենէն Տրոցկիի հետ, քանի մը անգամ այցելեցի իրեն»:

Յօդուածագիր Լ. Ն.-ի /Լիպարիտ Նազարեանի/ այցելութիւնները չունէին մէկ այլ նպատակ, քան սկզբնաւորել բարի յարաբերութիւններ: Տրոցկին վաղեմի ծանօթին մի շարք արտօնութիւններ է տալիս՝ երկաթուղով անար-

գել երթելեկելու, հեռագրեր յղելու: Յաջորդ հանդիպման ժամանակ, խօսելով Բրեստի պայմանագրի մասին, Տրոցկին ասում է. «Բրեստի դաշնագիրը դժբախտութիւն մըն է ձեր ժողովուրդին համար, ու ես երջանիկ եմ, որ ինծի չվիճակուեցաւ ստորագրել այն»:

Հանդիպումները մտնում են գործնական փուլ, Տրոցկին իր համաձայնութիւնն է տալիս սկսել ՀՅԴ-ի հետ յարաբերութիւնները կարգաւորելու բանակցութիւններ եւ այդ մասին յայտնում է Լենինին. «Այս պահուս ինձ մօտ կը գտնուի դաշնակցութեան անդամներէն Լ., որ ես անձամբ լաւ կը ճանչնամ: Իմ կարծիքով, պէտք է յարաբերութիւններ սկսել այդ կուսակցութեան հետ, որը ղեկավար դեր կը խաղայ հայ իրականութեան մէջ: Լաւ կը լինէր առանց յետաձգելու խորհրդակցիլ դաշնակցական ներկայացուցիչներու հետ եւ ճշդել ընդհանուր գործունեութեան սկզբունքները»:

Հարցադրմանը Լենինը պատասխանում է՝ «Յայտնեցէք Լ.-ին, որ մեր եւ Դաշնակցութեան տեսական տարբերութիւնները չեն կարող արգելք լինել երկու կուսակցութիւններու ընդհանուր աշխատանքին գործնական գետնի վրայ: Համաձայն եմ Ձեզ հետ, որ պէտք է խորհրդակցութիւն կազմել»:

Բայց բանակցութիւնները չեն կայանում: Հայկական գործերի կոմիսարիատը բողոքում է Տրոցկուն, որ յարաբերութիւններ է սկսել անգլիասերների հետ:

Յարաբերութիւններ հաստատելու առաջին ձախողումը չի վիատեցնում Դաշնակցութեանը: Հանրապետութեան ներքին կացութիւնը ստիպում է գնալ ցանկացած բանակցութիւնների, միայն թէ ապահովուէր ժողովրդի անվտանգութիւնն ու ֆիզիկական գոյութիւնը: Այդ նպատակով էլ Մոսկուա են գալիս բժիշկ Չաւրեանն ու Ա. Զիլինգարեանը: Տրոցկու հետ նոր հանդիպումը արդիւնաւետ էր: Լենինն ինքն է կազմում պատուիրակութիւնը՝ նախագահ՝ Կամենեւ, անդամներ՝ Վ. Աւանեսով, Ա. Տեր-Գաբրիէլեան: ՀՅԴ պատուիրակներն էին՝ Չաւրեանը, Ա. Զիլինգարեանը եւ Լ.-ն: Բանակցութիւնների առաջին նիստի օր է նշանակում 1918 թ. Օգոստոսի 27-ը:

Այս անգամ էլ բանակցութիւններ տեղի չունեցան, որովհետեւ. «Աւանեսովը եւ իր արբանեակները յաջողած էին ոչ միայն անգամ մը եւս վիժեցնել խորհրդակցութիւնը, այլ եւ մեզ ձերբակալելու արտօնութիւնը ստանալ»: Նոյն գիշերը ձերբակալում են Չաւրեանն ու Լ.-ն, հայկական կոմիսարիատը «հաստ պարիսպ մըն էր՝ ցցուած խորհրդային կառավարութեան եւ մեր միջեւ. եւ այդ պարիսպին զարնուելով կը փշուռէին կառավարութեան հետ գործնական յարաբերութիւններ մշակելու մեր բոլոր ջանքերը»:

Ասել է, 1918 թ. քաղաքական բարդ իրավիճակում, երբ դրուած էր հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը, հայ քաղաքական կուսակցութիւնները ոչ թէ հրաժարում էին ռուսական կողմնորոշումից, այլ բոլշեւիկեան վարչակարգն էր դառնում յարաբերութիւնները փակուղի տանելու քաղաքականութիւն կերտողը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՏԻԿԵԱՆ
Պատմական գիտ. թեկնածու



ՀԱՆՔԱՅԻՆ ՔԱՐԵՐՈՎ ԳՈՅՆ

ՈՒ ԼՈՅՍ ԲԵՐՈՂ

ԲԱԶՄԱՇՆՈՐ

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՈՒՅԻ

ԼԵՆԱ ՔԵԼԵՔԵԱՆ

ԲԱԳԻՆ

Արուեստի աշխարհին մէջ թափառելու համար երկար շունչ պէտք է ունենալ: Բայց հոն ալ երբեմն անակնկալներ իրենք զիրենք կը պարտադրեն: Գեղարուեստի աշխարհին մէջ իր իւրայատուկ տեղը ունի լիբանանահայ Լենա Քելեքեան, որ իր բազմատաղանդ արուեստով ծանօթ դարձած է բոլորին:

Չինաստանի Ողիմպիական խաղերու ծիրէն ներս չէր մոռցուած արուեստը, հրաւեր ուղղուած էր հազարաւորներու, նաեւ՝ Լենա Քելեքեանի: Իր գործերէն մին դրկած էր: Ընտրութիւն կատարուած էր եւ տասը հազար արուեստի գործերուն մէջէն, Փեքինի մէջ, տարբեր երկիրներէ եկած միայն հարիւր արուեստագետի մրցանակ տրուած էր, ոսկէ մետալ: Այժմ, նորութեան եւ ազգային հպարտութեան ծարաւ հայկական շրջանակները կը հետաքրքրուին: Մեր գրոյցին ալ այս վերագրումը կարելի է ընել: Ի՞նչ փոյթ, եթէ արուեստին եւ ամոր ճանաչման պիտի նպաստէ մեր հանդիպումը:


Լենա Քելեքեան շատ ճոխ եւ բազմերես կենսագրութիւն եւ գործունէութեան դաշտ ունի: Ան-



THE MILKY WAY, 110 x 90cm BY LENA KELEKIAN

դամ է բազմաթիւ միջազգային կազմակերպութիւններու, բազմաթիւ երկիրներու մէջ ծանօթ անուն է: Մեծն Բրիտանիոյ թագուհին իրեն շնորհած է ազնուականի կոչում: Կը նմանի անսահման հետաքրքրութիւններով հետախոյզի, որ կը պեղէ, կը ճամբորդէ, կապեր կը հաստատէ՝ անոնցմով

լայն բանալու համար իր տեսադաշտը: Երկրաբանութեան մագիստրոս է, իր ուշադրութեան առանցքին եղած են հանքային քարերը, թանկարժէք եւ այլ: Չեռք բերած է դժուար մասնագիտութիւն մը, Լոնտոն եւ Եւրոպական բազմաթիւ քաղաքներու մէջ տասներկու տարի ուսանելով ար-



PLANET EARTH IN THE 21st CENTURY, 150x75cm
(Gold medal winner, In the Olympic Fine Arts 2008, Beijing)



լեստի գործերու վերականգնում (restoration): Նաեւ խեցեգործութիւն, որ արուեստ է, թէեւ ան յաճախ կը ծառայէ նաեւ գեղազարդելու պատեր, սրահներ, պարտէզներ, որմնաքանդակ կամ նստարան, բազմազոյն եւ պսպղուն: Իր գիտութիւնը կը ծառայեցնէ իր արուեստին, եւ համաքային միւթերէ կ'արտահանէ իր բազմերանգ ներկերը:

Զրոյցի ընթացքին հետզհետէ մեր առջեւ կը բանայ իր հետաքրքրութիւններու հորիզոնները: Լենա Քելեքեան սրբապատկերներու գիտութիւն ունի (iconologie), բայց նաեւ կը ստեղծէ նոր սրբապատկերներ, արուեստ՝ որ ունի իր իւրայատուկ կանոնները՝ ձեւի եւ խորքի: Իր սրբապատկերները կը շրջանակէ մարգարիտներով, քանի որ երկնքի դռները զարդարուած են մարգարիտներով: Ի յայտ կու գայ որ Լենա Քելեքեան ունի աստուածաբանական գիտութիւն, ինչ որ խորք կու տայ իր ստեղծագործութեան, հաւատքի դրոշմ՝ իր սրբապատկերներուն:

Գեղանկարիչ է, ունի վերացական ստեղծագործութիւններ: Ան կը ներշնչուի եւ իր գաղափարը

կ'ուրուագծէ պարզ թուրքի վրայ եւ ապա զայն կը փոխադրէ մեծ պաստառի վրայ:

Իր տուած ընդհանուր բացատրութիւններէն ետք, զրոյցը ընթացաւ սրբապատկերներու ուղղութեամբ:

- Սրբապատկերները նախ կ'ենթադրեն արհեստագիտութիւն, քանի որ կը պատրաստուի պատկերը կրող փայտը, որ երկարատեւ մեծ խնամք կը պահանջէ: Կը գծուին փայտի վրայ քանի որ փայտը կ'ապրի, ան յաւերժական է, ինչպէս աստուածութիւնը, ան ըլլայ Ս.Կոյսը թէ Յիսուս:

Թէ Լենա Քելեքեանի ստեղծած սրբապատկերները աւանդութիւն մը կը կրկնեն՝ թէ ոչ, կը նմանի՞ն անցեալէն եկող գործերու, պատասխանը յստակ է.

- Սրբապատկերները ունին իրենց օրէնքները, զորս պէտք է յարգել, բայց ես կը ձգտիմ հասարակաց տուեալներու վրայ դրոշմել իմ ըմբռնումներս եւ գեղագիտական ճաշակս, հետեւաբար իւրաքանչիւր սրբապատկեր մըն է, ինքնատիպ, կրկնութիւն չէ: Բայց միաժամանակ հասկնալի է որ սրբապատկերի պարագային ստեղծագործական ազատու-

թիւնը սահմանափակ է: Հոս կ'ուզեմ փակագիծ մը բանալ: Շուկայի վրայ գտնուող սրբապատկերներուն մեծ մասը ժողովրդական եւ առեւտրական գործեր են, օրինակ 80ականի կեսերուն Չեռնոպիլի աղէտէն ետք շուկայ հասած էին շողարծակ սրբապատկերներ, որոնք սակայն ծախուեցան, եւ մարդիկ գնեցին առանց գիտնալու:


Ինչ կը վերաբերի Լենա Քելեքեանի նկարչական արուեստին, իւղաներկ կտաւներ, ինքնուրոյն են, տուեալ պահու մը թելադրած գոյ-



ARMENIAN CROSS
embellished with pearls and precious stones



VIRGIN AND CHILD 'KAZAN', 25x35cm



CHRIST THE PANTOCRATOR, 25 x 35cm

VIRGIN AND CHILD 'HODIGHITRIA' 120 x 170cm



ներ ու գիծեր: Կը նկարէ հետեւեւ-
լով իր ներշնչման:

- Այս գործերը,- կ'ըսէ,- ժայթ-
քով յղացումներ են, կը սկսին եւ
կ'աւարտին երբ կը նստին կտա-
ւին առջեւ: Անոնք թելադրական
են, ինչպէս Խուան Միրոյի եւ Ան-
թոնիո Կաուտիի գործերը, որոնց-
մէ ազդուած են:

Լենա Քելեքեանի հետ ծանո-
թացման եւ կտրատուած մեր
զրոյցի առաջին բաժինէն ետք,
զրոյցը կ'ընթանայ իր կիրարկած
արուեստի զանազան երեսներուն
ուղղութեամբ: Արուեստը մեզ
կ'անջատէ ներկայէն, անմիջակա-

նէն, կամուրջ կը ստեղծէ արուես-
տասերին եւ ստեղծողին միջեւ,
այլապէս կը դառնայ զարդ, յար-
դարանք, ինչպէս ծաղկաման մը,
վարագոյր մը, գունաւոր լուսանը-
կար մը: Ուզեցինք գիտնալ որ իր
ստեղծած սրբապատկերները
“միսթիք” մը ունի՞ն, դիտողը կը
դնե՞ն հարցականներու առջեւ,
այսինքն արուեստասէրը “կը խօ-
սի” անոնց հետ: Խնդրեցինք որ
խօսի միայն սրբապատկերներու
մասին:

- Սրբապատկերները կը խօսին
ձեռք բերողներուն, իրենք պատ-
մած են: Նոյնիսկ խօսած են իրա-

նակացած բաղձանքներու մա-
սին: Ինչպէս անցեալին, նաեւ այ-
սօր, սրբապատկերը “լսած է”
աղօթքը, զաւակ պարգեւած է,
վտանգէ ազատած է: Նոյնիսկ,
ռմբահարումներու ընթացքին,
երբ բնակարան մը քանդուած է,
սրբապատկերը ոչ մէկ վնաս
կրած է: Սրբապատկերներուն
վրայ կը գտնենք նաեւ աստուծա-
յին խորհուրդը, ինչպէս Երրորդու-
թեան:

Հրա՞շք թէ դիպուած, հաւատ-
քի հարց է:

Սրբապատկերը բան մը կ'ըսէ,
խորհուրդ մը կը բերէ, հասկնալի
է, իսկ խեցեգործութիւնը,
céramiqueը, իր զարդարած պա-
տերով, նստարաններով, ի՞նչ
կ'ըսէ, անոնցմով ի՞նչ կ'ըսէ ար-
ւեստագէտը, որ չըլլայ միայն
քաղքենիներու սրահները զար-
դարող իր, չըլլայ պարզապէս
décoratif առարկայ: Լենա Քելեք-
եան կը բացատրէ.

- Խեցեգործութիւնը կը բացուի
դուրսի վրայ, երբեմն կոթողային
է: Ան անմիջականօրէն յարաբե-
րութեան մէջ է շրջապատին հետ,
կը ձգտի անոր գեղեցկացման:
Խեցեգործական ստեղծագործու-
թիւնները նախ կը գծուին, իրենց
յետին մանրամասնութիւններով,
ապա կը մեծցուին, անոնցմէ կը
վերցուի ինչ որ կը ծանրացնէ, կը
բարդացնէ, stylisé կ'ըլլան: Օրի-
նակ, Պուրճ-Համուտի կամուրջ-
ները եւ գետը եզերող պատերը
իրենց տխրութենէն դուրս եկած
են մեծածաւալ խեցեգործական
աշխատանքներով: Տարբեր քա-
ղաքներու պարտէզներուն կամ
մայթերուն վրայ կը տեղադրուին
նստարաններ, խեցեգործական
ստեղծագործութիւններ, որոնք
գոյն կու տան շրջապատին, ան-
ցորդին կամ այգիի մէջ հանգչո-
ղին մօտ կը ստեղծեն ուրախու-
թեան պահեր: Այս գործերը երկ-
րաբանական շրջապատը կը մօ-
տեցնեն մարդոց, կը ձգտին ընել
այնպէս որ մարդիկ ուրախ ըլլան,
կ'ազդեն հոգեկան աշխարհին
վրայ:

Ժամանակակից ընկերութիւն-
ներու մէջ, անհատական թէ քա-



ղաքաշինութեան մակարդակով, շրջապատի մարդկայնացման գծով ճիգեր կ'ըլլան, մարդիկ կը փնտռեն այդ շրջապատը, cadre de vie: Լենա Քելեքեան մարդու եւ բնութեան կապերու ներդաշնակման ջատագով է:

Զանգուածներուն, մանաւանդ

արուեստասէրներուն համար ընդհանրացած, սովորութեամբ մատչելի համարուող, ծանօթ կերպարուեստը գեղանկարչութիւնն ու քանդակագործութիւնն են: Խեցեգործութիւնը քանդակագործութեան յարաբերաբար կրտսեր արւեստ է, ճամբայ կը բանա՞յ պատմութեան առջեւ, ինչպէս Ռաֆայէլի, Միքէլ Անճելոյի, Ռիպենզի, Վան Կոկի, Փիքասոյի պարագային: Իսկ Լենա Քելեքեանի գեղանկարչութիւնը, որուն մասին խօս-

ուեցաւ, որուն համար ինք ըսաւ թէ վերացական է, ունէ՞ր մեծերու ճամբով ընթանալու տարողութիւն, փառասիրութիւն, այս հեռանկար է: Կը պատահէ՞ր որ ինքզինք բաղդատէր կամ տեսնէր այս կամ այն մեծ վարպետի կամ դպրոցի հունին մէջ:

- Կարելի չէ նման մտածում ունենալ: Մեծերը մեծ եղան իրենց տաղանդով: Այս պարագային ժամանակը ինք կ'որոշէ, ժամանակակիցները՝ իրենց ակնկալութիւններով եւ ապագան:

Լենա Քելեքեանի ստեղծագործական աշխարհը եւ կապերը, այնպէս ինչպէս կը հասկցուէր, արտահայկական էին, այդ հայկականը ըլլար հայաստանեան թէ սփիւռքեան: Թերեւս սխալ կամ մասնակի տպաւորութիւն մը: Լաւ էր որ ինք լուսաբանէր թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս: Ինք, սրբատակեր ստեղծող կամ այդ իւրայատուկ արւեստը շարունակող, հետաքրքրուած էր նաեւ հայերով, քանի որ քրիստոնէական եւ հաւատքի մեծ մշակոյթ ունին անոնք: Հայաստանի եւ սփիւռքի մէջ կան մեծանուն հայ գեղանկարիչներ, քանդակագործներ, Այվազովսկի, Սարեան, Կորքի, Քառզու, Էտկար Շահին, Ասատուր, Ժանսեմ, Զաւէն, Փոլ Կիրակոսեան, բազմաթիւ ուրիշ-





ներ, ասոնց գործերուն ծանօթ էր, եւ մանաւանդ անոնց հետ կապ ունեցա՞ծ էր:

- Կը ճանչնամ անոնցմէ ոմանք, ծանօթ եմ կարգ մը գործերու, լսած եմ իրենց մասին: Յիշուած անուններէն ոմանց գործերը տեսած եմ: Տակաւին Հայաստան այցելելու պատեհութիւն չեմ ունեցած, բայց կը խորհիմ որ մօտ ապագային այդ ճամբորդութիւնը պիտի իրականանայ:

Լենա Քելեքեան միջազգային հրապարակ եկաւ նաեւ Փեքինի մէջ իր ստացած մրցանակով: Ինչպէ՞ս: Իր մրցանակի արժանացած այդ գործը արուեստի դասակարգումներուն մէջ ո՞ւր կը գետեղւէր: Այդ գործը պատրաստուա՞ծ էր յատուկ կերպով այդ ցուցահանդէսին համար թէ արդէն պատրաստ էր: Արուեստագետը կը չափուի նաեւ աշխարհի տարբեր թանգարաններուն կողմէ գնուած եւ հոն ցուցադրուող իր գործերով: Ո՞ւր կարելի է հանդիպիլ իր գործերուն:

- Երբ հրաւերը ստացայ, այդ գործը արդէն պատրաստ էր, եւ ղրկեցի: Այս հարցով զբաղող յատուկ կոմիտէն հետաքրքրական գտած էր զայն, հաւանօրէն նաեւ անոր համար որ հոն տեսած էր չինական եւ արեւելեան գիծեր եւ գոյներ: Իսկ ինչ կը վերաբերի թանգարաններու, գործերէս շատեր կարելի է տասը թանգարաններու մէջ գտնել, իսկ խեցեգործական աշխատութիւններս կը գտնուին հրապարակներու վրայ եւ կը զարդարեն մեծ պանդոկներու եւ հիւանդանոցներու սրահները: Նախագահներ յաճախ ձեռք կը բերեն իմ պատրաստած սրբապատկերներս եւ խաչերս, նուիրելու կամ իրենց պահելու համար:

Թէ ե՞րբ եւ ո՞ւր հայ արուեստասէրները առիթ պիտի ունենային Լենա Քելեքեանի գործերը տեսնելու, մանաւանդ որ այդ ծանօթացումը երկուստեք տեսակ մը պարտք է:

- Ինչպէս ըսի, Պէյրութ եւ Լիբանանի այլ վայրերուն մէջ - Այն Սրէյսիէի նստարանները եւ գետեգրի պատերը - կարելի է հան-



HAGOP SULAHIAN,
LENA KELEKIAN
RECEIVING THE
GOLDEN WREATH
FROM THE GREEK
DEBUTY ALIKI MOSHIS-
GAUGUET

դիպիլ խեցեգործական կոթողա-
կան աշխատանքներու: Բայց իոս
ունինք մեր արուեստանոցը եւ
արուեստի ցուցասրահը: Քոյրս՝
Յիլտան եւ ես, կը մասնակցինք
ցուցահանդէսներու: Քոյրս կ'աշ-
խատի մագաղաթի վրայ, որոնց
վրայ կը գտնուին աղօթքներ, տե-
սարաններ Ս.Գիրքէն եւ իսլամա-
կան կրօնական տողեր:

Դեռ կարելի էր շարունակել
զրոյցը եւ խօսիլ մանուկներու հա-
մար եղած գործերուն մասին...

Խանդավառ, յարաշարժ եւ
բազմաշնորհ արուեստագիտուհի
մըն է Լենա Քելեքեան, որ Զինաս-
տանի ողիմպիական խաղերուն
զուգահեռ կազմակերպուած ար-
ւեստի գործերու ցուցահանդէսին
հրաւիրուած է, Լիբանանի անունը
հրապարակուած է իոն՝ իր յաջո-
ղութեամբ, եւ քիչ մըն ալ՝ հայու-
թեան: Եւ վերադարձած է, պարզե-
ւատրուած ըլլալով ոսկեայ մե-
տալով եւ իրեն տրուած ողիմպի-
ական իրական եւ հարազատ ջա-
հով:

ԲԱԳԻՆ

10 Սեպտեմբեր 2008

Beirut River Bank Wall in Ceramics

Paintings & Prints for Children

Kelekian Art Gallery

Specialized in Environmental Design &
City Embellishment with Cut Ceramics
Concept & Design by Lena Kelekian
Architect Hagop Sulahian

Ain Mraissa Corniche Benches

www.beirutbenches.com
e-mail: lenakel@inco.com.lb
Tel/Fax 00961 1 895035
Mobile 00961 3 895035
Mobile 00961 3 226367
Garnet bldg., 1st fl., Zalka
P.O.Box 11-1966 Beirut - Lebanon

www.kelekianartgallery.com

«ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ - Կենսագրական նոթեր»

Երուանդ Օտեան

Կիլիկիա հրատարակչատուն

Հալեպ, 2008



«LIBAN ENTRE STABILITE INTERIEURE ET SECURITE REGIONALE»

Nora Bayrakdarian Kabakian

Bruylant - Delta - L.G.D.J


Edition 2008



«AND THOSE WHO CONTINUED LIVING IN TURKEY AFTER 1915 »

Rubina Perroomian


Yerevan, 2008



«ՄԵԾԵՐՈՒ ՀԵՏ ԵՒ ՄԵԾԵՐ»

Թորգոմ Փաթաճեան

Անթիլիաս, 2007



«ԱՐՑՈՒՆՔ ԵՒ ԺՊԻՏ»
 Համբիկ Մարտիրոսեան
 Պէյրուք, 2008



«ՅՈՒՇԵՐ»
 Կիրեղ Եպս. Չոհրապեան
 Վենետիկ- Ս. Ղազար, 2007



«ԿԵԱՆՔԸ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ - ԼԵՆԻՆ
 Հախվերտեանի եւ Արմէն Յարութիւնեանի
 նամակագրական երկխօսութիւնը »
 Երեւան, 2008

